ՁԻԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

ԵՐԱՄՅԱՆ ԱԳՐՈԶՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Դոցենտ Գ. Գ. ԱՖԻՆՅԱՆ

ՁԻԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ

(Գյուղատնտեսության երկրորդ կարգի վարպետներ պատրաստելու ձեռնարկ)

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1954

АПИНЯН ГЕВОРК КАРАПЕТОВИЧ
КОНЕВОДСТВО
(На армянском языке)
Армянское Государственное издательство
Айпетрат, Ереван, 1954

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ձին կարևոր նշանակություն ունի ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության համար։ Պարտիան և կառավարությունը միշտ էլ ուշադրություն են դարձրել ձիաբուծության զարգացման վրա։

Ձին հատկապես մեծ նշանակություն ունի սոցիալիստական գյուղատնտեսության համար։ Չնայած սոցիալիստական գյուղատնտեսության մեքենայացման բուռն թափին, հողագործության կուլտուրայի բարձրացմանը, ձին՝ որպես կոլտնտեսության արտադրամիջոց, իր նշանակությունը չի կորցրել։ Առաջավոր կոլտնտեսությունների փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ արտադրական պրոցեսների լայն մեքենայացման պայմաններում, տնտեսության մեջ օգտագործվող բանող ձիերի բեռնվածությունը չի պակասում։ Կոլտնտեսություններում կան որոշ աշխատանքներ, որոնք նպատակահարմար է կատարել ձիերով, օրինակ՝ կարճ տարածությունների վրա կատարվող բոլոր տեղափոխությունները, մանավանդ մեծածավալ բեռների (խոտ, ծղոտ, բամբակ և այլն) փոխադրումը նպատակահարմար է կատարել ձիերով։ Ձիերը լայնորեն օգտագործվում են նաև դաշտային թեթև աշխատանքների մեջ, մասնավորապես տրակտորի աշխատանքի համար անհարմար դիրք ունեցող հողակտորների մշակման ժամանակ։

Գյուղատնտեսական աշխատանքների ամենաեռուն շրջանում մեքենայական քաշող ուժի հետ միասին ձիերի լայն օգտագործումը հնարավորություն է ստեղծում այդ աշխա-

տանքներն ավարտել ավելի սեղմ ժամկետներում։ Ուստի և գյուղատնտեսական աշխատանքները պլանով նախատեսված ժամկետներում կատարելու համար, ՄՏԿ աշխատանքների բարելավման հետ միասին, պետք է լայնորեն և ռացիոնալ կերպով օգտագործել նաև կենդանի քաշող ուժը, մանավանդ ձիերը։

Եվ պատահական չէ, որ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՍՄԿՊ Կենտկոմի «Երկրում անասնաբուծության հետագա զարգացման միջոցառումների և կոլտնտեսականների կողմից պետությանն անասնապահական մթերքների պարտադիր հանձնումների նորմաների իջեցման մասին» որոշման մեջ, որը բխում է ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշումներից, ասված է՝ «Դատապարտել առանձին ղեկավարների ոչ ճիշտ վերաբերմունքը ձիաբուծության նկատմամբ, որոնք կարծում են, թե ներկայումս մեքենայացման աճի կապակցությամբ ձին կորցրել է իր նշանակությունը գյուղատնտեսության մեջ, այնինչ նույնիսկ կոմպլեքսային մեքենայացման դեպքում գյուղատնտեսական և տրանսպորտային շատ աշխատանքներ, ինչպես նաև կոլտնտեսականների անձնական կարիքների սպասարկման աշխատանքներն ավելի ռացիոնալ կլինի կատարել լծկանով»։

Այսպիսով, ՍՍՌՄ պլանային տնտեսության պայմաններում ձին չի հակադրվում մեքենային, տրակտորին, ինչպես դա տեղի ունի կապիտալիստական տնտեսություններում, այլ լրացնում է նրանց աշխատանքը, դարձնելով այն ավելի էֆեկտիվ։

ՍՍՌՄ գյուղատնտեսության մեջ ձիերը շատ քիչ են օգտագործվում, որովհետև քաշող ուժի մեծ մասը կազմում են եզները։ Նման դրությունը չի կարելի հանդուրժելի համարել այն տեսակետից, որ պարտիայի 19-րդ համագումարի դիրեկտիվների և ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշման համաձայն կոլտնտեսություններում խոշոր եղջերավորների նախրում կովերի տեսակարար կշիռը պետք է մեծ չափով բարձրացնել։ Մյուս կողմից պետք է ի նկատի

ունենալ և այն, որ ձին իր արտադրողականությամբ զգալի չափով գերազանցում է եզանը։

Եզների քանակի կրճատումը ռեսպուբլիկայում պետք է ընթանա առաջին հերթին գյուղատնտեսության հետագա մեքենայացման միջոցով և ապա, ըստ հնարավորության, եզը ձիով փոխարինելու ճանապարհով։

Ձին բազմակողմանի մեծ նշանակություն ունի նաև արդյունաբերության մեջ՝ բեռների տեղափոխման համար։ Առանձնապես ձիերը լայնորեն օգտագործում են անտառների խորքերից անտառանյութերը դեպի երկաթգծերը և գետաբերանները տեղափոխելու համար։ ՍՍՌՄ-ում ձին օգտագործվում է նաև սպորտի ասպարեզում։

Ձիու սպորտով զբաղվող երիտասարդները դառնում են ավելի առողջ ու ամրակազմ, ճարպիկ, և նրանց մեջ զարգանում է համարձակությունը, վճռականությունը և կամքը։

Մեզ մոտ ձիերը որոշ նշանակություն ունեն և բուժման գործում։ Նրանց կաթից պատրաստված կումիսը կարևոր նշանակություն ունի որոշ հիվանդությունների, մանավանդ թոքային հիվանդությունների բուժման համար։ Այդ նպատակի համար ՍՍՌՄ-ում գոյություն ունեն կումիսով բուժելու հատուկ սանատորիաներ։

Ժողովրդական տնտեսության համար նշանակություն ունի նաև ձիու միսը, կաշին, մազը և այլն։ Ձիու աղբը հանդիսանում է լիարժեք պարարտանյութ և լայնորեն օգտագործվում է մեր դաշտերի պարարտացման և ջերմոցների համար։ Ձիերն ունեն նաև այն նշանակությունը, որ էշերի հետ տրամախաչելիս ստացվում են ջորիներ, որոնք ժողովրդական տնտեսության համար որոշ նշանակություն ունեն։

ՍՄԿԿ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշումների համաձայն, ձիաբուծության հետագա զարգացումը պետք է ընթանա ձիերի որակի բարձրացման և նրանց ռացիոնալ օգտագործման ուղիով։ Այս առթիվ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ որոշման մեջ ասված է՝ «Հանձնելով, որ ձիաբուծության զարգացման ասպա-

ընդում գլխավոր խնդիրը գլխաքանակի որակական բարելավումն է, այսուհետև անհապատակահարմար համարել ձիերի գլխաքանակի աճի առաջադրանքների սահմանումը մարզերի, երկրամասերի և հանրապետությունների ժողովրդատնտեսական պլաններում»։ Նույն որոշման մեջ ասված է նաև՝ «Հանրապետությունների Մինիստրների Սովետներին, մարզգործկոմներին ու երկրգործկոմներին իրավունք վերապահել, սկսած 1954 թվականից, ձիերի գլխաքանակի զծով առաջադրանքներ տալ շրջաններին ու կոլտնտեսություններին, ելնելով կոլտնտեսությունների՝ լծկանի պահանջներից»։

ԳԼՈՒԽ I.

ՁԻԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ընտանի ձիերն առաջացել են վայրի ձիերից, հազարավոր տարիներ մեզանից առաջ։

Բազմաթիվ ուսումնասիրություններով պարզվել է, որ հին ժամանակներում վայրի ձիերը լայն կերպով տարածված են եղել ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայի մայր յամաքներում։

Ներկայումս վայրի ձիերը պահպանվել են միայն Մոնղոլիայում՝ այսպես կոչված Պրժեվալսկու ձին։ Վերջինս ընտանի ձիերի հետ տրամախաչելիս տալիս է պտղատու (բեղուն) սերունդ։ Ընտանի ձին սկզբնական շրջանում շատ ցիր էր տարբերվում իր վայրի նախահայրերից, բայց մարդու կողմից անընդհատ տարվող աշխատանքի շնորհիվ նա աստիճանաբար փոխվել է և կազմել առանձին ցեղեր, որոնք մարդու համար հանդիսանում են որպես արտադրամիջոց։

Այսպիսով, ձիերի ցեղերը ստացվել են աստիճանաբար՝ կերակրման, խնամքի, պահվելու, նրանց աշխատանքի մեջ օգտագործելու և արհեստական ընտրության հետևանքով բնական պայմանների որոշ ներգործության տակ։

Ձիերի նոր ցեղեր ստանալիս մարդը միշտ էլ ելել է իր տնտեսական շահերից, որոնք տարբեր հասարակատնտեսական ֆորմացիաներում միևնույնը չեն եղել։ Այսպես, օրինակ՝ շատ հին ժամանակներում (ստրկատիրական շրջանում) ձիերը գլխավորապես օգտագործում էին պատերազմներ մղելու համար և որպես փոխադրամիջոց. դրա շնորհիվ էլ ձիերի ցեղերը ծառայում էին գլխավորապես հեծնելու համար։ Այս դրությունը շարունակվել է մոտավորապես մինչև կապիտալիզմի զարգացումը, երբ պահանջ է առա-

չացել լծելու ծանր տիպի ձիերի՝ ինչպես քաղաքում՝ բեռներ տեղափոխելու, այնպես էլ գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար։

Սոցիալիստական տնտեսության պայմաններում ձիերի նոր ցեղեր ստանալու համար ստեղծված են լայն հնարավորություններ։ Եթե կապիտալիզմի զարգացման շրջանում, ինչպես և նրանից առաջ, նոր ցեղեր ստացվում էին տասնյակ տարիներ անսիստեմ տարվող աշխատանքից հետո, ապա մեր սոցիալիստական տնտեսության պայմաններում ցեղերը ստացվում են նախագծված պլանի համաձայն, օգտագործելով սովետական ագրոբիոլոգիական գիտության և պավլովյան ֆիզիոլոգիայի նվաճումները։ Այդ բանի շնորհիվ վերջին 20—30 տարիների ընթացքում ՍՍՌՄ-ում ստացվել են ձիերի մի շարք հայրենական նոր ցեղեր, որոնք իրենց տնտեսապես օգտավետ հատկություններով գերազանցում են մինչև այժմ եղած ցեղերին։ Այդպիսի ցեղերի շարքին են պատկանում՝ վլադիմիրովյան ծանրաբարշ ձին, բուդյոնովյան և տերեկի ցեղը, ռուսական վարգունը և այլ ցեղեր։ Տարիների ընթացքում ՍՍՌՄ-ում պլանային կարգով տեղական ցածրորակ ցեղերը լավացվել են բարձրորակ ցեղերի հետ տրամախաչելու միջոցով. դրա հետևանքով մեր մի շարք շրջաններում առաջացել են մեծ քանակությամբ խառնածին ձիեր։ Ներկայումս այդ խառնածին ձիերի հետ տարվում է խորացրած առհմային աշխատանք՝ նրանցից հայրենական նոր բարձրորակ ցեղեր ստանալու նպատակով։ Անհրաժեշտ է, որ նոր ստացվելիք ձիերի ցեղերը լինեն բարձր արտադրողականությամբ և համակերպված լինեն տեղային բնական պայմաններին։

ԳԼՈՒԽ 2.

ՁԻԵՐԻ ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱՆ ԵՎ ԷՔՍՏԵՐԻՈՐԻ

ԿՈՆՍՏԻՏՈՒՑԻԱ

Կոնստիտուցիան դա կենդանու օրգանիզմի անատոմո-ֆիզիոլոգիական առանձնահատկությունների միակցությունն է. այդ առանձնահատկությունները պայմանավորված են

նրա ժառանգականությամբ և անհատական զարգացման պայմաններով ու կապված են արտադրողականության բնույթի և արտաքին գրգռիչների նկատմամբ օրգանիզմի ցուցաբերած վերաբերմունքի հետ։

Գյուղատնտեսական կենդանիների կոնստիտուցիայի ուսումնասիրության և նրա կլասիֆիկացիայի հարցերով զբաղվել են սովետական մի շարք ակադեմիկոսներ, ինչպես, օրինակ, պրոֆեսորներ Կուլեշովը, Բոգդանովը, ակադեմիկոս Իվանովը և ուրիշները։

Նրանց ուսումնասիրությունները պարզել են, որ ձիերի տարբեր ուղղության ցեղերի կոնստիտուցիան միակերպ չի լինում, այլ յուրաքանչյուր ուղղության համար բնորոշ է որոշ կոնստիտուցիոն տիպ։

Պրակտիկայում օգտվում են պրոֆ. Պ. Ն. Կուլեշովի և պրոֆ. Ե. Ա. Բոգդանովի կլասիֆիկացիայից։

Այդ կլասիֆիկացիայի համաձայն տարբերվում են հետևյալ կոնստիտուցիոն տիպերը՝ 1. նուրբ, 2. կոպիտ, 3. փուխր կամ խոնավ և 4. խիտ կամ չոր։

Նուրբ կոնստիտուցիոն տիպի ձիերի ոսկրակաղմը (կմախքը) լինում է նուրբ, գլուխը փոքր, ոտքերը բարակ. այսպիսի կոնստիտուցիա ունեցող ձիերի բուն մաշկը լինում է բարակ, մազերը՝ նուրբ, այնպես, որ եթե կոնստիտուցիան միևնույն ժամանակ չոր է, ապա արյան անոթներն արտաքինից ակնհայտ կերպով երևում են։

Կոպիտ կոնստիտուցիոն տիպի ձիերի ոսկրակաղմը լինում է կոպիտ, գլուխը մեծ, ոտքերը հաստ, նրանց բուն մաշկը ինչպես և մազերը լինում են կոպիտ, իսկ մկանները՝ բավականին մեծածավալ։

Խոնավ կամ փուխր կոնստիտուցիա ունեցող ձիերի ենթամաշկը շատ լավ է զարգացած, նրանց բաշի, պոչի և ոտքերի ստորին մասի մազերը սովորաբար առատ են լինում. մկանները լավ են զարգացած, բայց չոր չեն, այսինքն նրանց մեջ ճարպը շատ է. ոտքերի ջիլերը և հոդերն արտաքինից լավ չեն նկատվում. ամբակների եղջերանյութը մեծ մասամբ ամուր չի լինում։ Խոնավ կոնստի-

տուցիայի ձիերը ընդունակ են իրենց օրգանիզմում (ենթամաշկում, մկանների միջև և որովայնային խոռոչում) կուտակելու մեծ քանակությամբ ճարպ։ Նրանց տեմպերամենտը (խառնվածքը) աշխույժ չէ։

Խիստ կամ շոր կոնստիտուցիայի ձիերի ենթամաշկը շատ թույլ է զարգացած, որի հետևանքով ոտքերի ջիլերը և հոդերն արտաքինից ակնհայտ երևում են, բաշի և պոչի մազերն առատ չեն, ոտքերի ստորին մասում երկար մազերը կամ բացակայում են, կամ էլ շատ աննշան են զարգացած։ Շոր կոնստիտուցիայի ձիերն ընդունակ չեն իրենց օրգանիզմի մեջ (ենթամաշկում, մկանների միջև և որովայնի խոռոչում) կուտակելու մեծ քանակությամբ ճարպ։ Սովորաբար նրանց տեմպերամենտը լինում է աշխույժ։

Բացի նշված կոնստիտուցիոն տիպերից ակադեմիկոս

Նկ. 1. Հեծնելու տիպի ձի, որի կոնստիտուցիան շոր է և նուրբ։

Մ. Ֆ. Իվանովը տարբերում է նաև ամուր կոնստիտուցիա։ Այնպիսի կոնստիտուցիայի ձիերը լինում են ամրակազմ, դիմացկուն, աշխատանքի մեջ՝ տոկուն և բարձր կենսունակությամբ։

Հեծնելու սրընթաց ձիերին յուրահատուկ է չոր և նուրբ կոնստիտուցիա, ծանր լծելու ձիերին՝ խոնավ և կոպիտ կոնստիտուցիա։ Կան դեպքեր, որոնք ըստ իրենց կոնստիտուցիոն տիպի, նշված ծայրահեղ տիպերի մեջ կարծես միջին տեղն են գրավում, ինչպես, օրինակ՝ վարգունները (լծելու թեթև ձիեր), կամ հեծնելու և ծանրաբարշ ձիերի խառնածինները և այլն։

Նկ. 2. Ծանրաբարշ տիպի լծելու ձի, որի կոնստիտուցիան խոնավ է և կոպիտ։

Էքստերյեր կոչվում է կենդանու արտաքին տեսքը։ Էքստերյերի նշանակությունը անասնաբուծության, հատկապես ձիաբուծության մեջ շատ մեծ է։

Էքստերյերի միջոցով որոշում են ձիու տիպը (ուղղությունը) և կոնստիտուցիան։ Ձիու տոհմային գնահատականը տալիս՝ ծագման, արտադրողականության և սերնդի որակի հետ միասին հաշվի է առնվում նաև նրա էքստերյերը, որը հնարավորություն է տալիս մեկ տոհմի համար թողնել առողջ, արատներից զուրկ, ամրակազմ և ցանկալի տիպի կենդանիներ։ Բացի դրանից, էքստերյերի միջոցով մենք որոշ գաղափար ենք կազմում ձիու արտադրողականության մասին։ Ձիու ցեղը որոշելիս ճշգրիտ ավյալների բացակայության դեպքում հաշվի են առնում նրա էքստերյերը։

Էքստերյերի միջոցով կարելի է նաև ճշտությամբ որոշել ձիու տարիքը և կենդանի քաշը։ Ձիուն ըստ էքստերյերի գնահատելիս նկատի են ունենում հետևյալը.

ա) Սեռը։ Զամբիկների և հովատակների էքստերյերի գնահատման ժամանակ նույն մոտեցումը չպետք է ունենալ, քանի որ նրանք միշտ էլ միմյանցից տարբերվում են երկրորդական սեռական նշաններով։ Այսպես՝ հովատակը զամբիկից ավելի խոշոր է, նրա կոնստիտուցիան կոպիտ է, առջևի մասը ավելի լավ է զարգացած, քան հետևի մասը, իրանը համեմատաբար ավելի կարճ է և այլն։

բ) Տարիքը։ Ըստ իր էքստերյերի մարմուկը և առհասարակ մատղաշը խիստ կերպով տարբերվում է չափահաս ձիուց. նա լինում է հարաբերական իմաստով ավելի բարձրահասակ, կարճիրան և նեղ մարմնով։

գ) Տիպը։ Տարբեր ուղղության (հեծնելու, ծանրաքարշ, վարգուն) ձիերի էքստերյերը միևնույնը չի լինում, դրա համար էլ ձիերը ըստ էքստերյերի գնահատելիս միևնույն մոտեցումը չենք կարող ունենալ. այն, ինչ որ լավ է մեկ տիպի համար, կարող է մեկ ուրիշ տիպի համար վատ համարվել։

Ձիու էքստերյերը ուսումնասիրում են նկարագրության և չափումների միջոցով, որպես լրացուցիչ մեթոդ՝ օգտագործվում է նաև լուսանկարումը։

Ձիուն ըստ էքստերյերի գնահատելիս անհրաժեշտ է երկու մեթոդն էլ օգտագործել, այսինքն՝ յուրաքանչյուր ձիուն պետք է նկարագրել և չափել, իսկ հնարավորության դեպքում՝ նաև լուսանկարել։

ՉԱՓՈՒՄՆԵՐ

Չափումները կատարում են չափաձողով, կարկինով և ժապավենով (ռուլետկայով)։

Ճիշտ տվյալներ ստանալու համար, չափումներ կատարելիս անհրաժեշտ է, որ ձին կանգնած լինի հարթ և հորիզոնական տեղում, գլուխն ուղղած դեպի առաջ և ոտքերի դրվածքը լինի ճիշտ։ Էքստերյերի մանրազնին ուսումնասիրությունների ժամանակ մեծ թվով չափումներ են կատարում, բայց գործնական անասնաբուծության համար բավական է իմանալ հետևյալ չափումները.

1. Ձիու բարձրությունը՝ մեղավի ամենաբարձր կետից ուղղահայաց մինչև գետին։

2. Ձիու բարձրությունը՝ մեջքի ամենացածր կետից ուղղահայաց մինչև գետին։

3. Ձիու բարձրությունը՝ սրբանի ամենաբարձր կետից մինչև գետին։

4. Իրանի թեք երկարությունը՝ բազկա-թիակային հոդից մինչև նստոսկրի հետին բլրիկը։

5. Կրծքի խորությունը՝ մեղավի և կրծոսկրի միջև, թիակների հետին անկյունների գծով։ Նշված հինգ չափումները վերցնում են չափաձողով։

6. Կրծքի փաթը չափում են թիակների հետին անկյունները շոշափելով։

7. Ենթաղաստակի փաթը չափում են ենթաղաստակի վերին $^1/_3$ մասի ստորին եզրում։

Այս երկու չափումները (6-րդ և 7-րդ) կատարում են մատչանով։

8. Գլխի երկարությունը չափում են ծոծրակային կատարից մինչև ռունդների (քթանցքերի) ստորին անկյունները միացնող գծի մեջտեղը։

9. Ճակատի լայնությունը չափում են ակնակապիճների ամենահեռու կետերում։

10. Կրծքի լայնությունը չափում են բազկա-թիակային հոդերի ամենահեռու կետերում։

11. Գավակի լայնությունը չափում են գստոսկրների ցցանքների ամենահեռու կետերում։

Նշված 4 չափումները (8, 9, 10, 11) կատարում են կարկինով։

Մեծ թվով ձիերի չափումների տվյալները ամփոփում են և մշակում հատուկ ձևով, օրինակ, դուրս են բերում միջին թվաբանականը։ Սակայն միայն բացարձակ չափումները լրիվ պատկերացում չեն կարող տալ ձիու էքստերյերի, նրա մարմնամասերի զարգացած լինելու աստիճանի մասին, դրա համար էլ բացարձակ չափումներից բացի, դուրս են բերում նաև հարաբերական չափումներ՝ ինդեքսներ։ Ինդեքս կոչվում է մի չափումի հարաբերությունը մյուսին՝ արտահայտած տոկոսներով։

Որպես օրինակ կարելի է բերել հետևյալ ինդեքսները՝

1. Ֆորմատի կամ ձգվածության ինդեքս.

$$\frac{\text{Իրանի երկարություն}}{\text{Մեղավի բարձրություն}} \times 100$$

Այս ինդեքսը ցույց է տալիս իրանի երկարության աստիճանը։ Լծելու ձիերի մոտ այս ինդեքսն ավելի մեծ է, քան հեծնելու ձիերինը, հետևապես նրանց իրանն ավելի ձգված է։

2. Լայնիրանության ինդեքս.

$$\frac{\text{Կրծքի փաթ}}{\text{Մեղավի բարձրություն}} \times 100$$

Այս ինդեքսը բնորոշում է ձիու հարաբերական լայնքանությունը և մասսիվությունը։

3. Ոսկրայնության ինդեքս.

$$\frac{\text{Ներքաստակի փարը}}{\text{Մեղավի բարձրություն}} \times 100$$

Ոսկրայնության ինդեքսը բնորոշում է ոսկրակազմի (կմախքի) կազմության աստիճանը և ձիու կոնստիտուցիայի ամրության ցուցանիշներից մեկն է հանդիսանում։

Գ ա վ ա կ ի ի ն դ ե ք ս.

$$\frac{\text{Գավակի լայնություն}}{\text{Գավակի երկարություն}} \times 100$$

Այս ինդեքսը ցույց է տալիս գավակի լայնության աստիճանը, որը գամբիկների մոտ սովորաբար ավելի մեծ է լինում։

4. Մ ե ծ գ լ խ ա ն ի ո ւ թ յ ա ն ի ն դ ե ք ս.

$$\frac{\text{Գլխի երկարություն}}{\text{Մեղավի բարձրություն}} \times 100$$

Այս ինդեքսի արտահայտությունը ավելի փոքր է լինում սրընթաց ձիերի մոտ։

ՁԻՈՒ ԷՔՍՏԵՐՅԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ՝ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐՄՆԱՄԱՍԵՐԸ ՁՆՆԵԼՈՒ ԵՎ ՆԿԱՐԱԳՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Ձիու էքստերյերն ըստ առանձին մարմնամասերի ճիշտ կերպով բնութագրելու համար անհրաժեշտ է ունենալ բավականին մեծ փորձ, այսինքն կարողանալ նկատել ձիու արտաքին ամենափոքր նրբությունները։

3-րդ նկարում ցույց են տրված ձիու առանձին մարմնամասերը և բերված են նրանց անունները։

Ձիու գնահատումը ըստ էքստերյերի պետք է կատարել որոշ հաջորդականությամբ։ Ամենից առաջ անհրաժեշտ է

Ձիուն գցնել շարժման ժամանակ, հետո նրան պետք է կանգնեցնել հարթ տեղում և, նրանից հեռանալով 6—8 քայլ, որոշել նրա ընդհանուր զարգացումը և մարմնակազմի ներդաշնակությունը։ Դիտումը սկսում են գլխից, հետո անցնում են պարանոցի, իրանի և վերջավորությունների գնահատմանը։

Նկ. 3. Ձիու մարմնամասերը

1—վերին և ստորին շրթունք, 2—ռունգները, 3—դունչը, 4—քիթը, 5—ճակատը, 6—աչքերը, 7—ականջները, 8—ստորին ծնոտի հետևի անկյունները, 9—կոկորդը, 10—պարանոցի կատարը և բաշը, 11—ծոծրակը, 12—մեղավը, 13—թիակը, 14—բազկաթիակային բլրիկը (թումբը), 15—ուսը, 16—արմունկը, 17—ենթաբազուկը, 18—դաստակը, 19—ենթադաստակը, 20—կապը կամ բխավը, 21—սմբակը, 22—շագանակները, 23—մեջքը, 24—գոտկատեղը, 25—գավակը, 26—պոչը, 27—զստոսկրների ցցանքները, 28—նստոսկրի բլրիկը, 29—կողերը, 30—որովայնը, 31—ամորձիների փոշտը, 32—ծունկը, 33—գավակի մկանները, 34—ազդրը, 35—սրունքը, 36—ցատկիչ հոդը և կրունկը (գարշապարը), 37—նախագարշապարը, 38—խոզանակները (կոճղամազերը), 39—Ձիու բարձրության չափումը՝ մեղավից մինչև գետին, 40—իրանի թեք երկարության չափումը, 41—կրծքի փաթի չափումը, 42—ենթադաստակի փաթի չափումը։

Գլուխը կարող է լինել տարբեր մեծության. հեծելու ձիերի գլուխը լինում է համեմատաբար փոքր, թեթև, քանի որ նրանց կոնստիտուցիան նուրբ է, իսկ ծանրաբարշ ձիերինը, ընդհակառակը՝ մեծ, որը կոնստիտուցիայի կոպտության ցուցանիշ է։ Վարգունների գլուխը բավականին փոքր է, բայց ավելի մեծ, քան հեծնելու ձիերինը։ Ցանկալի է, որ բոլոր տիպի ձիերի գլուխը լինի չոր, այսինքն ենթամաշկը լինի թույլ զարգացած, արյան անոթներն ու մկանները արտահայտված։ Սրընթաց ձիերի գլուխը ավելի չոր է լինում, քան ծանրաբարշներինը։ Գլխի պրոֆիլը կարող է լինել ուղիղ, գոգավոր, ուռուցիկ կամ սապատավոր. ընդորում՝ կարող է ուռուցիկ լինել միայն ճակատը կամ քիթը, և կամ ամբողջ դիմագիծը։

Ականջները լինում են տարբեր մեծության ու ձևի. լավ



Նկ. 4. Գլուխ պրոֆիլը՝ ա) ուղիղ, բ) գոգավոր, գ) թեթևակի ուռուցիկ, դ) ուռուցիկ կամ սապատավոր։

են համարվում ոչ մեծ, նուրբ, ցցված, շարժուն ականջները. վատ է, երբ ականջները շատ մեծ են, հաստ, և մահականգ, կախված։

Ցանկալի է, որ բոլոր տիպի ձիերի աչքերը լինեն խոշոր, փայլուն, մուգ գույնի և աշխույժ, բայց ոչ շարահայաց. այդպիսի աչքերն ավելի բնորոշ են սրընթաց ձիերին։ Եթե ձին առանց պատճառի անընդհատ ականջները շարժում է, ապա դա մեծ մասամբ տեսողության թուլության ցուցանիշ է։

Ձիու ոտնդները (քթանցքերը) պետք է լինեն լայն, իսկ լորձաթաղանթը՝ վարդագույն և մաքուր, հարթ։ Առանձնապես լայն են լինում սրընթաց ձիերի ոտնդները։ Բայց եթե ոտնդները շափազանց լայնացած են, ապա դա թոքերի էնֆիզեմայի (լայնացման) ցուցանիշ է։ Քթանցքերից հոսող թարախային լորձը կարող է լորձաթաղանթի բորբոքման կամ գեղձատապ, և մինչև անգամ խլախտ հիվանդությունների հետևանք լինել։

Ձիու գլուխը գնահատելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նրա շրթունքների, լեզվի և ատամների վիճակի վրա։ Ձիուն կոպիտ կերպով և սխալ ատնձահարելու հետևանքով, շրթունքների անկյունները կարող են պատռվածքներ ունենալ կամ շատ կոշտացած լինել, որոնք կդժվարացնեն նրա ճիշտ ղեկավարումը։

Վնասված, վիրավոր լեզուն խանգարում է ձիուն նորմալ կերպով սնվել։ Երբեմն ձիու սեղանատամները անկանոն են մաշվում, որի հետևանքով նրանց սուր ծայրերը վիրավորում են այտերը, լնգերը և լեզուն։ Այսպիսի դեպքերում հարկավոր է հատուկ դրփիով խարտել ատամների սուր ծայրերը։

Ձիու բերանը զննելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ատորին ծնոտի անատամ եզրերի վրա։ Լավ է համարվում, երբ անատամ եզրերը սուր չեն և նրանց դագաթը լեզվի մակերևույթից փոքր ինչ բարձր է. այս դեպքում սանձը սեղմում է ինչպես անատամ եզրի, այնպես էլ լեզվի վրա, որի հետևանքով ձին սուր ցավ չի զգում և նրան դե-

կավարելը հեշտ է լինում։ Եթե անատամ եզրերը շատ ցածր են լինում, ապա սանձը սեղմում է միայն լեզվին և ձին դժվար է սանձահարվում, իսկ եթե ստորին ծնոտի անատամ եզրերը լինում են շատ բարձր, ապա սանձը ձգելիս ձին սուր ցավ է զգում, որի պատճառով միշտ անհանգիստ վիճակում է լինում։

Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել ստորին ծնոտի ոսկորների հետին անկյունների միջտարածության վրա։ Լավ է համարվում, երբ այդ տարածությունը մեծ է լինում, ինչպես, օրինակ, սրընթաց ձիերի մոտ. այս դեպքում ձին ավելի աղատ է շնչում։

Ցանկալի է, որ ձիու ծոծրակը լինի երկար և բավականաչափ լայն, մանավանդ հեծնելու ձիերի մոտ, քանի որ այդ դեպքում ձիերն ավելի հեշտությամբ են իրենց մարմնի ծանրության կենտրոնը տեղափոխում դեպի ետ, առանց գլուխը բարձրացնելու։

Մեծ նշանակություն ունի այն, թե ինչպիսի անկյան տակ է ձիու գլուխը միանում պարանոցի հետ։ Լավ է համարվում այնպիսի միացումը, երբ գլխի առանցքը հորիզոնի հետ կազմում է 45° անկյուն, որի դեպքում գլխի և պարանոցի միացման տեղում կողքից նկատվող ակոսի լայնությունը հավասար է լինում 4 սմ, կամ աղամարդի երկու մատների հաստությանը։ Այս դեպքում ձին գլուխը լավ է պահում, նրա տեսողության հորիզոնը լայն է լինում, և նրան սանձահարելը դժվար չի լինում։

Պարանոցը (վիզը) լինում է տարբեր երկարության և հաստության։ Սրընթաց ձիերի պարանոցը երկար է և բարակ. երկար պարանոցը նպաստում է արագավազությանը՝ ձիու ծանրության կենտրոնն ավելի մեծ չափով դեպի առաջ տեղափոխելուն օժանդակելով։ Ծանրաքարշ ձիերին բնորոշ է կարճ և հաստ պարանոց, դա ապահովում է ձիու առջևի մասի ավելի ծանրակշիռ լինելը և նպաստում է բեռ քաշելուն։

Ըստ ձևի պարանոցը լինում է՝ ուղիղ, կարապի և եղջերուի պարանոցի նման։ Կարապի պարանոցը բնորոշ է

նրանով, որ նրա վերևի գիծը (կատարը) ուռուցիկ է, իսկ ստորինը՝ կոր, գոգավոր՝ կարապի պարանոցի նման. եղջերուի պարանոցի դեպքում, ընդհակառակը՝ պարանոցի վերևի գիծը լինում է գոգավոր, իսկ ստորինը՝ ուռուցիկ։ Ուղիղ պարանոցի ժամանակ, ինչպես վերևի, այնպես էլ ստորին գիծը լինում է ուղիղ։ Ամենից լավ համարվում է ուղիղ պարանոցը, որի դեպքում ձիու շնչառությունը ավելի ազատ է լինում և գլխի միացումը պարանոցի հետ՝ ավելի հաջող։ Սովորաբար լավագույն կուլտուրական ցեղերի ձիերի պարանոցը լինում է ուղիղ, ինչպիսին է զատարյուն հեծնելու արաբական, բուդյոնովյան ցեղերի պարանոցը։ Եղջերուի պարանոցը ավելի հաճախ պատահում է տափաստանային (մոնղոլական) տիպի ձիերի մոտ, այսպիսի պարանոց ունեցող ձիերը գլուխը լավ չեն պահում և դժվար են զսպվում։ Կարապի պարանոցը ավելի հազվադեպ է, նա դեղեցիկ է, բայց կարող է շնչառությունը դժվարացնել. այսպիսի ձիերը գլուխը լավ են պահում և սովորաբար ավելի հեշտ են սանձահարվում։

Նկ. 5. 1) Ուղիղ պարանոց. 2) կարապի պարանոց. 3) Եղջերուի պարանոց.

Ուշադրություն են դարձնում նաև պարանոցի դրվածքի վրա. այսինքն՝ նրա իրանի հետ միանալու վրա։ Տարբերում են՝ 1) բարձր դրվածք, երբ շնչափողը կրծքի վանդակն է մտնում բազկաթիակային հոդերը միացնող գծից վերև, 2) միջակ, երբ շնչափողը նշված գծի վրայով է ներս մտնում և 3) ցածր դրվածք, երբ այդ գծից ցածր է ներս մտնում։

Ամենից լավ համարվում է միջակ դրվածքը։ Ցածր դրված պարանոցը հանդուրժելի է լծելու ձիերի մոտ, իսկ պարանոցի բարձր դրվածքը համեմատաբար լավ է հեծնելու ձիերի համար։

Մեղավը միացնում է պարանոցի կատարը մեջքի հետ լավ է համարվում, երբ նա անցնում է իր ծայրերով դեպի պարանոցի կատարը և մեջքը՝ առանձնաբար։

Մեղավը դնահատում են ըստ բարձրության, երկարության և լայնության։ Հեծնելու ձիերին և վարդուններին յուրահատուկ է բարձր, նեղ և երկար մեղավը։ Այսպիսի մեղավն ունենալով երկար մկաններ, նպաստում է արագավազության և թույլ չի տալիս, որ թամբը սահի դեպի առաջ։ Մանրաքարշ ձիերի մեղավը լինում է կարճ, լայն և ցածր. այդպիսի մեղավը նրանց արտադրողականությանը չի խանգարում։

Մեջքը պետք է լինի ամուր, լավ զարգացած մկաններով։ Բացի դրանից մեջքը դնահատում են ըստ երկարության, լայնության և ձևի։

Հեծնելու ձիերի մեջքը լինում է ավելի կարճ, քան լծելու ձիերինը. կարճ մեջքն ունի այն առավելությունը, որ ավելի ամուր է և, որ ձիու ընթացքի ժամանակ շարժումներն ավելի արագ կերպով հետևի վերջավորություններից հաղորդվում են ձիու առջևի մասին, արագացնելով նրա շարժումները։ Մանրաքարշ և առհասարակ լծելու տիպի ձիերի մեջքն ավելի երկար է լինում, որը նրանց արտադրողականության վրա բացասաբար չի անդրադառնում։ Թեև հեծնելու ձիերի մեջքը, լծելու ձիերի մեջքի հետ համեմատած, ավելի նեղ է լինում, բայց և այնպես շատ նեղ մեջքը լավ չի համարվում նաև հեծնելու ձիերի համար։ Բոլոր տիպի ձիերի համար լավ է համարվում ուղիղ մեջքը, որովհետև նա ամուր է լինում։ Հեծնելու ձիերի մոտ ուղիղ մեջքը նպաստում է նաև արագավազությանը այն իմաստով, որ այս դեպքում շարժումները հետևի վերջավորություններից ավելի կարճ տարածությամբ են հաղորդվում ձիու առջևի մասին։ Մեծ պակասություն է համարվում, եթե ձիու մեջքը

գոգավոր է (կախ ընկած, թամբաձև). այդպիսի մեջքը թույլ է լինում։ Այս տեսակետից առանձնապես խստապահանջ պետք է լինել արտադրող հովատակների նկատմամբ, որովհետև թույլ մեջք ունեցող արտադրողները մի կողմից գոգավորումը լավ չեն կատարում, իսկ մյուս կողմից թույլ կոնստիտուցիան կարող է փոխանցվել սերնդին, իսկ ինչպես հայտնի է, հովատակը անհամեմատ ավելի մեծ թվով սերունդ է տալիս, քան դամբիկը։ Վատ է նաև ուռուցիկ (սապատավոր) մեջքը, որը թեև ամուր է լինում, բայց կաշկանդում է ձիու ոտատ շարժումները, հաճախ թամբից նրա վրա վերքեր են առաջանում, և այդպիսի ձիերը հաճախ հետևի ոտքերը խփում են առջևի ոտքերին։

Գոտկատեղը մեջքը միացնում է սրբանի հետ։ Բոլոր տիպի ձիերի համար ցանկալի է լայն, կարճ, ուղիղ, կամ քիչ ուռուցիկ և լավ զարգացած գոտկատեղ։ Առանձնապես

Նկ. 6. Լավ զարգացած մեջք ունեցող հովատակ։

կարճ է լինում հեծնելու ձիերի գոտկատեղը, որպիսին նպաստում է նրանց արագավազությանը։

Վատ է նեղ, երկար և գոգավոր գոտկատեղը։

Գավակը լինում է տարբեր երկարության. հեծնելու արընթաց ձիերի գավակն ավելի երկար է լինում, որը ցույց է տալիս այդ հատվածի մկանների լավ զարգացվածությունը և որից զգալի չափով կախված է ձիու շարժման արագությունը։ Բոլոր տիպի ձիերի համար ցանկալի է լայն գավակը, բայց սովորաբար այն ավելի լայն է լինում ծանրաբաշերի մոտ։ Ուշադրություն պետք է դարձնել նաև գավակի ուղղության վրա։ Ընդհանուր առմամբ ծանրաբաշ ձիերի գավակը ավելի մեծ չափով է թեքված լինում, քան հեծնել-

Նկ. 7. Թամբան մեջք ունեցող ձի։

Նկ. 7 ա. Սապատավոր մեջք ունեցող ձի։

յու ձիերինը։ Տանիքաձև գավակը նրա նեղ լինելն է ցույց տալիս և մեծ թերություն է համարվում բոլոր տիպի ձիերի համար։ Ծանրաքաշ ձիերի մոտ երբեմն գավակը լինում է երկրաժան։

Պոչը։ Տարբերում են պոչի բարձր և ցածր դրվածք. հեծնելու տիպի ձիերի պոչը սովորաբար ավելի բարձր է դրված լինում և շարժման ժամանակ նրա մազերը հետու են մնում մարմնից. պոչի ցածր դրվածքը ամենից շուտ պատահում է ծանրաքաշ ձիերի մոտ։

Բոլոր տիպի ձիերի համար ցանկալի է, որ կրծքի վանդակը մեծածավալ լինի։ Կրծքի վանդակի ծավալը կախված է նրա լայնությունից, խորությունից և երկարությունից։ Սրընթաց ձիերին բնորոշ է համեմատաբար ավելի նեղ, բայց խորը կուրծքը, որի դեպքում առջևի վերջավորությունների շարժումներն ավելի ազատ են լինում և շարժման ժամանակ օդի դիմադրությունն ավելի պակաս է լինում։

Ծանրաքարշ ձիերի կուրծքը, ինչպես և ամբողջ իրանը, լինում է լայն։ Լավ է համարվում, երբ կրծոսկրի ծայրը (կոթունը) ներս ընկած չի լինում և կրծքի մկանները լավ են զարգացած։ Խիստ նեղ կուրծքը մեծ թերություն է համարվում ոչ միայն ծանրաքարշ, այլև արագավազ ձիերի համար։

Նկ. 8. Ուղիղ գավակ։

Նկ. 9. Կախ ընկած գավակ։

Նկ. 10. Երկրաժան գավակ։

Նկ. 11. Տանիքաձև գավակ։

Որովայնը (փորը)։ Նորմալ դեպքում որովայնի ստորին գիծը սկսվում է կրծոսկրին հավասար և աստիճանաբար բարձրանում է դեպի հետևի վերջավորությունները։ Եթե կրծքից սկսած այդ գիծը խիստ կերպով ներքև է իջնում, ապա այդպիսի որովայնը կոչվում է «խոտաձին», իսկ եթե նա մեծ չափով բարձրանում է դեպի վերև՝ կոչվում է հավարափոր։ Ընդհանրապես ծանրաքարշ ձիերի որովայնը լի-

նում է ավելի մեծաձավայ, քան հեծնելու սրընթաց ձիերինը։

Ոտները (վերջավորությունները) հանդիսանում են ձիու համար նեցուկ և շարժման լծակներ։ Ձիու մարմնի ծանրությունը ավելի մեծ չափով ընկնում է առջևի ոտների վրա, իսկ հետևի ոտքերի դերն այն է, որ նրա շարժման ժամանակ հրում են իրանը դեպի առաջ։

Հեծնելու սրընթաց ձիերի ոտքերը լինում են ավելի բարակ, չոր, ամուր ջիլերով, իսկ ծանրաբարշ ձիերինը, ընդհակառակը՝ հաստ և խոնավ։ Ցանկալի է, որ բոլոր ձիերի ոտքերի հոդերը լինեն մեծաձավայ։ Արագավազ ձիերի ոտքերն առհասարակ ավելի երկար են, քան ծանրաբարշ ձիերինը։

Առջևի ոտքերը սկսվում են թիակից։ Արագավազ ձիերի թիակը (ուսը), ծանրաբարշ ձիերի համեմատությամբ, լինում է ավելի երկար և թեք դրված, որի դեպքում ձին ավելի մեծ չափով է կարողանում ոտքերը նետել դեպի առաջ, որովհետև բազկաթիակային անկյունը այս դեպքում ավելի փոքր է լինում։

Ձիերի արմունկոսկրը պետք է լինի երկար և չպետք է կրծոսկրին սեղմված լինի, կամ ընդհակառակը, դեպի դուրս ցցված լինի, որովհետև դրա հետևանքով ձին ծուռթաթություն կունենա, կամ ոտքերը իրար կխփի։ Ենթարազուկը պետք է լինի լայն, բավականին երկար և լավ զարգացած մկաններով։ Դաստակը պետք է լինի ամուր, ինչպես առջևից, այնպես էլ հետևից լայն, չոր և ենթարազուկի նկատմամբ ուղղահայաց դրված։ Եթե դաստակը դեպի դուրս է ցցված և ձին կարծես թե կանգնած է կիսաձալած ոտքերի վրա, որը հիշեցնում է այծի ոտքերի դիրքը, այդ պակասությունը կոչվում է այծոտանություն։ Նշված պակասությունը կարող է լինել բնածին, կամ ձեռքբերովի։ Այս կարելի է որոշել բարձրացնելով ձիու առջևի ոտներից մեկը. ընդ որում՝ եթե մյուս ոտը կուղղվի, դա կնշանակի, որ այծոտանությունը ձեռքբերովի է, իսկ եթե ոչ, ապա բնածին է։

Այծոտանությունը մեծ պակասություն է հանդիսանում, մանավանդ, եթե նա ձեռքբերովի է։ Նրանով տառապող ձիերի

առջևի ոտքերը, մինչև անգամ թեթև աշխատանքից հետո, սկսում են դողալ, որը համարվում է ոտքերի թուլության նշան։

Եթե դաստակի հողն առջևից դեպի ետ է ծռված, այսինքն առջևից գոգավորություն ունի, ապա այն կոչվում է հորթի դաստակ. այսպիսի հողը թույլ է լինում և դրա համար էլ մեծ պակասություն է համարվում։

Նկ. 12. Այծի դրված (այծանանություն)։

Նկ. 13. Հորթի դրվածք։

Ենթադաստակը (նախադաստակ) չպետք է շափազանց բարակ լինի և դաստակի մոտ սեղմված։ Լավ է համարվում, երբ ենթադաստակի հաստությունը տվյալ ցեղին ու հասակին համապատասխան է և ենթարգուկի նկատմամբ նա ուղղահայաց դիրք է գրավում։ Ջիլերը, մանավանդ արագավազ ձիերի մոտ, պետք է լավ արտահայտված լինեն, որը ոտքերի շարժության և ջիլերի ամրության ցուցանիշ է հանդիսանում։

Ենթադաստակի հատվածում կարող են առաջանալ մի

չարք հիվանդագին երևույթներ։ Հարվածների, վնասվածքների հետևանքով հաճախ առաջանում է ոսկրի գերաճ (նորագոյացում), որը, եթե ջիլերին մոտ է գտնվում, ձիու կաղալու պատճառ է դառնում։ Կծկող ջիլերի ծայրահեղ լարման հետևանքով կարող է նրանց խիստ ձգում, կամ մինչև անգամ՝ խզում առաջանալ. դրա արդյունքը լինում է ուժեղ բորբոքում և ապա ջիլերի կծկում և հաստացում (բրոկդաուն)։ Ձեռքերովի այծոտնությունը մեծ մասամբ արդյունք է լինում այդ հիվանդության։ Բացի դրանից, այդ հիվանդությամբ տառապող ձիերի ենթաստամակի ներսի մակերեսի դիծը լինում է ուռուցիկ։

Երբեմն ենթաստամակի առջևի մասի տարածիչ ջիլերի բորբոքման և հաստացման հետևանքով նշված տեղում առաջանում է աղեղնաձև ուռուցք, որը կոչվում է բուկշին։

Կապի հոդը գտնվում է ենթաստամակի և կապոսկրի միջև. նա պետք է լինի բավականաչափ լայն, չոր, առանց ուռուցքների։

Կապի հոդի և պսակոսկրի միջև ընկած մասը կոչվում է բխավ։ Նրա կազմության մեջ մտնում են կապոսկրը, կապանները և կծկող ու տարածող ջիլերը։ Բխավը զսպանակի դեր է խաղում, մեղմացնելով սմբակների հարվածները գետնին։ Բխավները իրենց դերը լավ կատարելու համար պետք է լինեն միջակ երկարության. ինչպես շատ երկար, այնպես էլ կարճ բխավները լավ չեն համարվում։ Բացի դրանից, բխավները պետք է որոշ թեքություն ունենան. լավ է համարվում, եթե առջևի ոտքերի բխավների թեքությունը հորիզոնի հետ կազմում է 45—50° անկյուն։ Շատ թեք դրված բխավների ջիլերը և կապանները ավելի մեծ չափով են լարվում և կապոսկրը աստիճանաբար հորիզոնական դիրքին է մոտենում. դրան հակառակ՝ շատ ուղիղ բխավները ոտքի հարվածները լավ չեն մեղմացնում, որի հետևանքով հոդերը մեծ չափով ցնցումներ են կրում և հաճախ վնասվում։

Բխավի ստորին եզրին, կապա-պսակային հոդի վրա երբեմն գոյանում է ոսկրային նորագոյացում (գերաճ), որը

կոչվում է ժարկա. նա հաճախ առաջացնում է ուժեղ ցավ և կաղություն։

Հետևի ոտքերը ձիու շարժման ընթացքում շատ կարևոր դեր են խաղում՝ մղելով կենդանու իրանը դեպի առաջ. դրա համար էլ իրենց վերևի մասում նրանք օժտված են հզոր մկաններով։ Ձիու ազդրային մասը պետք է ունենա լավ զարգացած մկաններ, լինի նորմալ թեքություն և արագավազ ձիերի մոտ՝ ավելի երկար։ Ազդրոսկրի վերևի ծայրը կոնքի հետ կազմում է ազդրակոնքային հոդը, իսկ նրա ստորին ծայրը վերջանում է ծնկի հոդով։

Նկ. 14. Երկար բթավ։

Նկ. 15. Շատ թեք (արդի բթավ)։

Նկ. 16. Կարճ բթավ։

Նկ. 17. Ուղիղ (դիք) բթավ։

Ծնկից դեպի ներքև, մինչև ցատկիչ հոդը, գտնվում է սրունքը։ Այս մասը պետք է ունենա լավ զարգացած մկաններ, որոնք հնարավորին չափ պետք է իջած լինեն դեպի ներքև և լավ արտահայտված լինեն. հեծնելու սրընթաց ձիերի սրունքները ավելի երկար են լինում։ Այսպիսով, ձիու ազդրերը (բդերը) պետք է լինեն լավ զարգացած՝ հաստ, լայն և երկար։

Ցատկիչ հոդը (զարշապարը) ձիու շարժման ընթացքում շատ մեծ լարում է կրում, դրա համար էլ պետք է լինի լավ զարգացած, այսինքն՝ լինի լայն, հաստ և չոր։ Ցատկիչ հոդը ենթակա է որոշ հիվանդություններին։ Ուժեղ լարման և խնամքի ոչ ճիշտ ռեժիմի հետևանքով ցատկիչ հոդի հատվածում կարող են առաջանալ այտուցներ (ջրալեցում)։ Դանը հիվանդություն է հանդիսանում շպատը, այսինքն՝

ցամաքիչ հողի խրոնիկական բորբոքումը, երբ հողի ներքի մասում առաջանում է ոսկրային գերաճ, և այս ամենի հետևանքով ձին սկսում է կաղալ կամ քայլելիս հիվանդ ոտը ցնցել։

Մյուս հիվանդությունը, որը պատահում է ցամաքիչ հողի հատվածում, դա կուրբա կոչված հիվանդությունն է։ Դա ավելի շատ հավաքական անուն է, այսինքն մի քանի հիվանդություններ մոտավորապես նույն կերպ են դրսևորվում, դրա համար էլ նույն անունն են կրում։ Արտաքինից կուրբան արտահայտվում է նրանով, որ ցամաքիչ հողի հետևի մասում, կրունկոսկրից դեպի ներքև, ուղիղ մակերեսի փոխարեն ուռուցիկություն է նկատվում։ Կուրբան մեծ մասամբ ջիլերի և կապանների բորբոքման հետևանք է։ Կուրբան, և մանավանդ շպատ հիվանդությունը, մեծ չափով զգում են ինչպես տոհմային, այնպես էլ օգտագործելի ձիերի արժեքը, իսկ ուժեղ արտահայտված լինելու դեպքում, նրանց դարձնում են խոտան։ Ցամաքիչ հողից գերքի գալիս է նախագարշապարը, որը պետք է լինի ուղղահայաց, իսկ արշավի ձիերի մոտ նաև կարճ։

Նկ. 18. Շպատ Նկ. 19. Կուրբա

Կապի հոգերը պետք է լինեն լավ զարգացած, մեծաձավալ և ամուր։

Թխավները։ *Հետևի ոտքերի թխավները, առջևի ոտքերի թխավների համեմատությամբ, փոքր-ինչ ավելի կարճ են լինում և ավելի քիչ թեքված. նրանց թեքությունը հորիզոնի հետ միջին հաշվով 50—55° է կազմում։*

Սմբակները։ *Առջևի ոտքերի սմբակները ավելի լայն են*

լինում և կլորավուն, իսկ հետևի ոտքերինը՝ սեղմ և օվալի ձև են ունենում և ավելի փոքր են։ Սմբակները տարբեր ամրություն են լինում. ընդհանուր առմամբ ծանրաքարշ ձիերի սմբակների եղջյուրը ավելի թույլ է լինում, քան սրընթաց ձիերինը։ Կլիման, սելեֆը նույնպես ազդում են սմբակների կարծրության վրա, ինչպես, օրինակ՝ լեռնային վայրերում բուծվող ձիերի սմբակները շատ կարծր են լինում։

Ցանկալի է, որ ինչպես առջևի, այնպես էլ հետևի ոտքերի սմբակները ունենան հարթ մակերես, լինեն առանց ճեղքվածքների, դատարկ պատերի, փթած սլաքի և այլն։ Տափակ, լիքը ներբանով սմբակը ենթակա է հոդացավի, և աշխատանքի համար ավելի քիչ է պիտանի։ Զատիզանց նեղ, սեղմ սմբակը գոգավոր ներբանով, նույնպես վատ է համարվում։ Առջևի ոտքերի սմբակի առջևի պատի թեքությունը հորիզոնի հետ մոտավորապես 50° անկյուն պետք է կազմի, իսկ հետևի ոտքերինը՝ 60°. լավ է համարվում, երբ սմբակի առջևի պատը 2,5 անգամ բարձր է լինում նրա հետևի պատից։ Սմբակի սլաքը, որը մեղմացնում է ոտքի հարվածը գետնին, պետք է նորմալ վիճակում լինի։

Ոտքերի դրվածքը համարվում է ճիշտ, եթե առջևից (կամ հետևից) նայելիս առջևի ոտքերը ծածկում են հետևի ոտքերը, այսինքն՝ նրանք մի գծի վրա են գտնվում, իսկ կողքից նայելիս՝ ուղղահայաց են։ Բացի այդ, ինչպես առջևի, այնպես էլ հետևի ոտքերի միջտարածությունը միահավասար է լինում և այդ տարածությունը վերևից ներքև մնում է անփոփոխ և բավականին լայն է։ Հաճախ ոտքերը ճիշտ չեն լինում դրված, որը բացասական կերպով է ազդում ձիու արտադրողականության վրա։

Տարբերում են առջևի ոտքերի անկանոն դրվածքների հետևյալ ձևերը.

1. Երբ առջևի ոտքերն ուղղահայաց չեն, այլ ետ են դրված գեպի փորի տակը, կամ ընդհակառակը, դեպի դուրս են դրված։

2. Եթե ոտքերը միմյանց շատ մոտիկ են դրված, կամ

Թե իրարից չափից ավելի հեռու են դտնվում, այդ դիրքերը համարվում են անեռմալ։ Նորմալ է համարվում այն հեռավորությունը, երբ 2 սմբակների միջև կարող է երրորդ սմբակը տեղավորվել։



Նկ. 20. Ձիու ոտքերի ճիշտ դրվածքը։

3. Երբ դաստակի հոդերը խիստ մոտիկացած են (իքսաձև)։

4. Երբ բիսավները և սմբակները ծռված են դեպի դուրս։

5. Երբ նրանք ծռված են դեպի ներս (ծուռթաթություն)։

Վերջին այս երկու դեպքերում ձիերի սմբակներն անկանոն են մաշվում, ոտքերի արտաքին և ներքին կողմերի ծանրաբեռնումը նորմալ չի լինում և հաճախ շարժման ժամանակ ոտքերն իրար են կպչում, որի հետևանքով հաճախ վիրքեր են առաջանում։

Հետևի ոտքերը նույնպես կարող են ունենալ հետևյալ անկանոն դրվածքները. 1. ծայրահեղ նեղ (մոտիկ), կամ լայն, 2. կովի դրվածք, երբ ցատկիչ հոդերը շատ մոտիկացած են, 3. O-աձև կամ տակառաձև դրվածք, երբ ցատկիչ հոդերը միմյանցից խիստ հեռացած են, իսկ ներքևում ոտ-



Նկ. 21. Առչեի ոտքերի դրվածքը. 1) ճիշտ դրվածք (տեսքը առչեից), 2) ճիշտ դրվածք (տեսքը կողքից), 3) դեպի ետ դրված, 4) դեպի առաջ դրված։

Նկ. 22. Առչեի վերջավորությունների ոչ ճիշտ դրվածքը. 1) ծուռթաթություն դեպի դուրս, 2) իրսաձև, 3) ծուռթաթություն դեպի ներս, 4) լայն, 5) նեղ (մոտիկ)։

բերը մոտիկացած են, 4. թրաձև դրվածք, երբ ցատկիչ հոդի անկյունը սովորականից փոքր է լինում (140°), և ոտքը կեռ թրի նման ավելի մեծ չափով է ծռված լինում դեպի որովայնի տակը։ Ոտքերի թրաձևություն ավելի հաճախ պատահում է լեռնային ձիերի մոտ, և շատերի կարծիքով դա լեռնային ռելեֆին հարմարվելու ձևերից մեկն է։

Հետևի վերջավորությունները ճիշտ կերպով դրված լինելու դեպքում, եթե նստոսկրի բլրիկի, ցատկիչ հոդի և կապի հոդի արտաքին մակերեսներին շոշափող անցկացնենք, ապա այդ գիծը ուղղահայաց կլինի, իսկ եթե այդ գիծը թեքվեց դեպի արոմայնի տակը, կամ ընդհակառակը՝ դեպի առաջ, կնշանակի ոտքերի դրվածքը ճիշտ չէ։



Նկ. 23. Հետևի վերջավորությունների դրվածքը.
1) ճիշտ, 2) դեպի առաջ դրված, 3) դեպի հետ դրված, 4) թրաձև։



Նկ. 24. Հետևի վերջավորությունների ոչ ճիշտ դրվածքի զանազան ձևերը.
1) կովի, 2) տակառաձև, 3) լայն, 4) նեղ (մոտիկ)։

Մաշկը և մազերը կապված են ձիու կոնստիտուցիոն տիպի հետ։ Նուրբ և չոր կոնստիտուցիա ունեցող հեծնելու սրընթաց ձիերի մաշկը լինում է բարակ, նուրբ, չոր, այսինքն թույլ զարգացած ենթամաշկով, իսկ ծանրաքարշ ձիերը, որոնց կոնստիտուցիան կոպիտ է ու խոնավ, ունենում են հաստ-կոպիտ և խոնավ մաշկ։ Մազերը ևս սրընթաց ձիերի մոտ լինում են նուրբ, իսկ ծանրաքարշերի մոտ՝ կոպիտ։ Պոչը, բաշը և հակատափունջը ծանրաքարշերի մոտ լինում են ավելի ազատ՝ երկար և խիտ, քան հեծնելու սրընթաց ձիերի մոտ։

Ոտքերի ներքևի մասում, կապի հոդի հատվածում, ծանրաքարշ ձիերն ունենում են երկար մազեր, մինչդեռ սրընթաց ձիերի ոտքերը այդպիսի մազերից զուրկ են լինում։

Ձիերի էքստերյերը նկարագրելու համար գոյություն ունեն հատուկ բարտեր, որտեղ նախօրոք նշված է լինում ձիու առանձին մարմնամասերի հնարավոր վիճակը։ Օրինակ, գլուխը՝ մեծ, փոքր, պարանոցը՝ երկար, կարճ, հաստ, բարակ, ուղիղ և այլն։

Էքստերյերը նկարագրողը նայում է ձիու առանձին մարմնամասերին և բնդգծում է այն բառը, որը բնորոշում է տվյալ մարմնամասը։ Օրինակ՝ եթե գլուխը մեծ է, ընդգծում է «մեծ» բառը և այլն, իսկ եթե տվյալ մարմնամասը միջին տեղ է գրավում, ապա երկու ծայրահեղ ցուցանիշների միջև պլյուս նշան է դնում։ Այս կերպ բոլոր ձիերին նկարագրելուց հետո ստացած տվյալները ամփոփում են, այսինքն վերածում տոկոսների (օր. մեծ գլուխը կարող է կազմել 76 տոկոս, միջակը՝ 14, փոքր գլուխը՝ 10 տոկոս և այլն)։

Տոհմային գործի մեջ, օրինակ, բոնիտիրովկայի ժամանակ, ցուցահանդեսներում, ձիերին գնահատելիս ընդունված է էքստերյերի գնահատականը տալ ըստ բալերի, այսինքն թվանշաններով։

ՁԻԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Ձիաբուծությամբ զբաղվողը անպայման պետք է ծանոթ լինի ձիերի շարժման (քայլվածքի) ձևերին։ Ձիու շարժման մեխանիզմը հետևյալն է։

Ձիու ծանրության կենտրոնը հանգիստ վիճակում գտնվում է նրա առջևի մասում. եթե բազկաթիակային հողից տանենք մի հորիզոնական գիծ և այն հատենք ուղղահայաց գծով, որը կանցնի կրծոսկրի թրաձև ելունի շոշափողով, ապա այս երկու գծերի հատման կետում էլ գտնվում է ձիու ծանրության կենտրոնը։ Առաջընթաց շարժում կատարելիս ձին իր հետևի մասով հրում է իրանը դեպի առաջ և երկարացնում է պարանոցը։ Այս գործողությունների շնորհիվ ծանրության կենտրոնը նշված տեղից տեղաշարժ է կատարում դեպի առաջ և ձին իր հավասարակշռությունը չկորցնելու համար ստիպված է կատարելու առաջընթաց շարժում։ Որքան ծանրության կենտրոնն ավելի շատ է դեպի առաջ տեղափոխվում, այնքան ձին ստիպված է լինում ավելի արագ ընթանալ։

Նկ. 25. Ձին քայլով գնալիս։

Տարբերում են ձիու քայլվածքի հետևյալ հիմնական ձևերը՝ քայլ, վարդ, շորորաքայլ (յորղա) և արշավ։

Քայլը մի շարժում է, որի ժամանակ բոլոր չորս ոտքերն էլ առանձին-առանձին են բարձրանում և իջնում գետնին այնպես, որ լսվում է չորս դոփյուն։ Քայլի ժամանակ ձիու շարժումը սկսվում է հետևի ոտքերից մեկից, ինչպես, օրինակ, ձախ ոտքից սկսելիս գետնից կտրվում է առջևի աջ ոտքը, ապա՝ հետևի աջը, և վերջում՝ առջևի ձախը, և այսպես շարունակ։

Տարբերում են քայլելու հետևյալ ձևերը՝ նորմալ քայլ, երբ հետևի ոտքերը ծածկում են առջևի ոտքերի հետքերը, մանր (կարճ) քայլ, երբ հետևի ոտքերը առջևի ոտքերի հետքերի հետևում են մնում, և լայն (երկար) քայլ, որի ժամանակ ձին իր հետևի ոտքերը դնում է առջևի ոտքերի հետքերից առաջ։

Քայլը ձիու ամենադանդաղ շարժման ձևն է. սրընթաց

ձիերը քայլելով կարող են մեկ ժամում անցնել 6—7 կմ հանապարհ, իսկ ծանրաբարշ ձիերը՝ 4—5 կմ։

Ձիու օգտագործման տեսակետից քայլի նշանակությունը շատ մեծ է։ Ձիերը բեռների տեղափոխումը (ինչպես լծած, այնպես էլ մեջքին բարձած), ինչպես նաև գյուղատնտեսական աշխատանքների մեծ մասը կատարում են քայլով։ Հեծնելու ձիերը ևս հաճախ քայլով են քշում։

Վարգը ձիու շարժման ավելի արագացրած ձևն է։ Վարգով շարժվելիս ձին միաժամանակ գետնից խաչաձև բարձրացնում է երկու ոտքերը, ինչպես, օրինակ՝ բարձրացնում է հետևի ձախը և առջևի աջը, հենվելով մյուս երկու ոտքերի վրա, որից հետո օդում գտնված ոտքերը դնում է գետնին, բարձրացնում խաչաձև մյուս զույգը, այն է՝ հետևի աջը և առջևի ձախը, և այսպես շարունակ։ Վարգի ժամանակ շորս զոտյունի փոխարեն երկու զոտյուն է լսվում։

Նկ. 26. Ձին արագ վարգով գնալիս։

Ամենաարագ վարգի ժամանակ լինում է մի մոմենտ, երբ Ձիու չորս ոտն էլ գտնվում են օդում, այն պատճառով, որ օդում եղած ոտքերը դեռ գետին չհասած, մյուս երկու ոտքերը արդեն գետնից բարձրանում են։

Վարգը կարող է տարբեր արագությամբ լինել, բայց ընդհանուր առմամբ նա ավելի արագ շարժում է, քան քայլը։

Վարգով ընթանալիս ևս ձին կարող է հետևի վերջավորությունները առջևի ոտքերի հետքերին շհասցնել, կամ դնել հետքի վրա, կամ էլ հետքերից զգալի առաջ, նայած թե ինչ արագությամբ է շարժվում։

Դանդաղ վարգով գնալիս մեկ ժամում ձին անցնում է 9—10 կմ, միջին արագությամբ ընթանալիս՝ 14—15 կմ և արագ վարգով գնալիս՝ 30 կմ և ավելի։ Օրինակ, լավագույն վարգունները 1 կմ տարածությունը կտրում են 1 բոպե 18 վայրկյանում. իհարկե, այդպիսի արագությամբ միայն

կարճ տարածություններին վրա (3 կմ տահմաններում) կարելի է քշել ձիուն։

Բոլոր տիպի ձիերն էլ ընդունակ են վարգով շարժվելու, բայց ամենից արագ վարգ ունենում են վարգունները, այսինքն թեթև լծելու տիպի ձիերը։ Վարգի գործնական նշանակությունը շատ մեծ է. երկար ճանապարհ գնալիս թե՛ հեծնելու և թե՛ թեթև լծելու ձիերը մեծ մասամբ վարգով են քշում. դանդաղ վարգից օգտվում են նաև թեթև գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ։

Շորորաքայլ (յորղա) գնալիս ձին միաժամանակ բարձրացնում է իր երկու ոտքերը հենվելով մյուս երկու ոտքերի վրա միայն այն տարբերությամբ, որ ձին ոչ թե խաչաձև է փոխում ոտքերը, այլ միասին՝ մերթ աջ կողմի, մերթ ձախ կողմի ոտքերը։ Շորորաքայլը ևս արագ շարժումների շարքին է պատկանում, նա դեռ վարգից էլ փոքր-ինչ արագ է։ Այստեղ ևս արագ ընթացքի ժամանակ նկատվում է շորս ոտքերի օդում ազատ կախվածության փուլ։

Նկ. 27. Ձին շորորաքայլ գնալիս։

Շորորաքայլով քշում են գլխավորապես հեծնելու ձիերին, որովհետև քայլվածքի այս ձևը շատ հարմար է ու հանգիստ։ Սովորաբար ոչ բոլոր ձիերն են գնում շորորաքայլ. կան ձիեր, որոնց ծանրության կենտրոնը սովորականից ավելի բարձր դիրքում է գտնվում. այդպիսի ձիերը բնականից հակում ունեն շորորաքայլով գնալու, մյուս դեպքերում հարկ է լինում ձիուն վարժեցնել հատուկ կերպով այդ ձևի քայլվածքին։

Բանակում շարժման այս ձևը չի ընդունված, որովհետև դա համարվում է ավելի քիչ կայուն և ավելի շատ հոգնեցնող շարժում, քան վարգը։

Աշշավր և սրաշշավր ձիու ամենաարագ շարժումն է։

Ձին կարող է արշավել աջ կամ ձախ ոտքից։ Եթե ձին արշավում է աջ ոտքի վրա, ապա շարժումը սկսվում է հետևի ձախ ոտքից, հետո շարժվում են հետևի աջ և առջևի ձախ ոտքերը միասին, և վերջում՝ առջևի աջ ոտքը, որից հետո դալիս է օդում ազատ կախվածության ֆազան, և այսպես շարունակ։ Արշավը կարող է տարբեր արագության լինել։ Ամենաարագ արշավը կոչվում է սրարշավ։ Լավագույն արշավի ձիերը 1 կիլոմետր տարածությունը կարում են մեկ րոպեում, դեռ մի փոքր էլ ավելի շուտ։ Արշավելու ընդունակ են բոլոր տիպի ձիերը, բայց ամենից արագ կարող են արշավել հեծնելու սրընթաց տիպի ձիերը։

Նկ. 28. Ձին արշավելիս։

Թռիչքը առանձին ձևի շարժում է։ Միջին որակի հեծնելու ձին, վարժեցումից հետո, կարող է թռիչք գործել երկարությամբ 7 մ և բարձրությամբ՝ 1,5 մ։ Երբեմն ձին սխալ վարժեցման հետևանքով անկանոն է թռչում, այսինքն տարբեր ձևի շարժումները խառնում է իրար։

ԿՈՆԴԻՑԻԱ.

Կոնդիցիան — ձիու մարմնի ֆիզիոլոգիական վիճակն է, որը պայմանավորվում է նրա բտվածությամբ և մարզվածությամբ։ Այստեղից էլ կերակրման և մարզանքի փոփոխմամբ կարելի է նույն ձիուն տարբեր կոնդիցիայի հասցրնել։

Տարբերվում են հետևյալ կոնդիցիաները։

1. Ցուցահանդեսային կոնդիցիա, երբ առատ կերակրման միջոցով ձիուն հասցնում են լավ բտվածության, որպեսզի գեղեցիկ կլորավուն ձևեր ստանա։

2. Տոհմային կամ զուգավորման կոնդիցիա, երբ ինչպես արտադրող հոմատակը, այնպես էլ

զամբիկն այնպիսի բտվածության աստիճանի է հասցվում (միջակից բարձր), որը առավել չափով նպաստավոր լինի նրանց բազմացմանը. ծայրահեղ բտվածությունը, ինչպես նաև նիհար լինելը, ցանկալի չէ ինչպես հովատակների, այնպես էլ զամբիկների համար։

3. Բանող (աշխատանքային) կոնդիցիա։ բանող ձիերը պետք է աշխատանքի լավ վարժված լինեն, ունենան լավ մարզված մկաններ և միջակ բտվածություն։

Մանր աշխատանքներում օգտագործելուց առաջ ձիու բտվածությունը պետք է լինի միջակից բարձր, այնպես, որ կողերը չերևան և ձիերն առույգ տեսք ունենան։

4. Մարզվածության կոնդիցիա։ Դա բանող կոնդիցիայից քիչ է տարբերվում. այս դեպքում ձիու օրգանիզմը հասցնում են այնպիսի վիճակի, որն առավել չափով նպաստի նրա արտադրողականությանը։ Նշված վիճակին հասցրնելու համար, ձիուն համեմատաբար ավելի մեծ քանակությամբ խտացրած կեր են տալիս և սիստեմատիկորեն ենթարկում մարզանքի։

5. Վատ կերակրման, խնամքի կամ հիվանդության հետևանքով ձին կարող է սոված կոնդիցիայում լինել, այսինքն կունենա շատ նիհար և թույլ մկաններ։ Այս վիճակում ձիերը պիտանի չեն ինչպես աշխատանքի, այնպես էլ տոհմային օգտագործման համար։

ՁԻԵՐԻ ԵՐԱՆԳԸ ԵՎ ՆՇԱՆՆԵՐԸ

ԵՐԱՆԳԸ

Ընտանի ձիերը լինում են զանազան երանգի (գույնի)։ Թեև ձիու երանգի և նրա արտադրողականության մեջ առանձին կապ չի հայտնաբերված, բայց և այնպես գործնականում ձիերի երանգի վրա մեծ ուշադրություն է դարձվում։

Ձիերի երանգը հարկավոր է իմանալ նրանց ճիշտ ճանաչելու և մեկ ձին մյուսից զանազանելու համար։ Առանձնապես դա մեծ նշանակություն ունի տոհմային գրանցումների համար։ Չպետք է մոռանալ այն, որ սովորաբար ձիերը չեն համարակալում, ինչպես մյուս գյուղատնտեսական կենդա-

նիները, և դրա համար ձիերը միմյանցից զանազանում են հիմնվելով նրանց անվան, երանգի ու նշանների վրա։

Ձիու երանգի բնորոշումը տալիս ելնում են նրա մարմինը պատող մազերի և ճակատափնջի, բաշի ու պոչի գույնից։

Երանգների հայերեն անունները դեռևս ճշտորեն չեն սահմանված, դրա համար էլ երանգների անունը բերում ենք մոտավոր արտահայտությամբ։

1. Պարմշաչեկ (սիմայա) — ինչպես մարմինը, այնպես էլ բաշը և պոչը լինում են շեկ. այս երանգը կարող է լինել բաց և մուգ։

2. Գորշավուն (բուրայա)— մարմինը շագանակագույն է. բաշը և պոչը՝ ավելի մուգ։

3. Ճարատ (իդրենենայա) — մարմինը դարչնագույն է (շոկոլադի գույնի), հաճախ խալերով, բաշը և պոչը՝ սպիտակ կամ ծխագույն. (այս երանգը կարող է լինել ինչպես բաց, այնպես էլ մուգ)։

4. Սևաթույր (վորոնայա) — ինչպես ամբողջ մարմինը, նույնպես էլ բաշը և պոչը սև են։

5. Պիծակավոր սևաթույր (կարակովայա)— ձին ամբողջությամբ սև է լինում, միայն գնչի ծայրին, աչքերի շուրջը, փորի տակը և աճուկային հատվածներում շեկ կամ շագանակագույն պիծակ է լինում։

6. Աշխետ (գնեգայա) — (մուգ կամ բաց)— մարմինը կարմրա-դարչնագույն է, բաշը, պոչը և ոտքերի ստորին մասը մինչև դաստակի և ցատկիչի հոդերը սև են։

7. Դեղնավուն (բուլանայա) — (բաց կամ մուգ) — մարմինը լինում է դեղնավուն-ոսկեփայլ կամ ավազագույն։ Բաշը, պոչը և ոտքերը դաստակից և ցատկիչ հոդերից ներքև սև են։

8. Մոխրագույն (սերայա) — (բաց և մուգ) — մարմինը պատած է սև, սպիտակ մազերով, որոնք համահավասար խառնված լինելով՝ մոխրագույնի տպավորություն են թողնում, երբեմն սպիտակի հետ խառնված են լինում շեկ մազեր։ Հասակի հետ այս երանգը ավելի բաց է դառնում,

հաճախ հանելով սպիտակի. նշված երանգի ձիերի մարմինը հաճախ պատած է լինում խալերով կամ ճանճկեններով (մանր պտերով)։

9. Ջալ—մարմնի մուգ գույնի մաղերին խառնված են սպիտակ մազեր, որոնք գլխի և ոտքերի վրա շատ քիչ են լինում. ստացվում է այնպիսի տպավորություն, որ կարծես թե ձիու մարմնի մուգ գույնի վրա ալյուր է շաղ տված։

10. Բդեռ (պեգայա) — երբ հիմնական երանգը լինում է կարմիր, սև, դեղին, սակայն մարմնի վրա լինում են խոշոր սպիտակ պատեր (մասեր)։

Ձիերի երանգը հասակի հետ հաճախ փոխվում է։ Այսպես, մարուկի երանգը հաճախ բոլորովին այլ է լինում, քան մեծ հասակում, կամ էլ ծեր հասակում երանգը կարծես փոխվում է, ստանալով ավելի բաց գույն, օրինակ՝ մոխրագույն ձիերը դառնում են սպիտակ։

ՁԻՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ

Ձիերի երանգը նկարագրելիս ցույց են տալիս նաև այն սպիտակ նշանները, որոնք կարող են լինել նրանց մարմնի այս կամ այն մասում։

Սկզբում նկարագրում են գլխի նշանները և ապա ոտքերի. եթե ճակատի վրա կան սպիտակ մազեր, որոնք ընդհանուր ֆոնից շեն սահմանազծված, կոչվում են ալեհերք, եթե ճակատին կա սպիտակ պուտ, կոչվում է պեծիկ կամ սատղ, ճակատից դեպի ներքև, քթի վրայով գնացող սպիտակ նշանը կոչվում է ծորվածք, եթե այդ սպիտակ նշանը շատ լայն է և ընդգրկում է նաև դունչը, կոչվում է ճաղատ, եթե ռունգների միջտարածությունը սպիտակ է՝ միջռնգային սպիտակություն, իսկ եթե նշանը մարմնի գույն ունի, կոչվում է մարմնագույն պուտ։ Եթե շրթունքները սպիտակ են, այդ դեպքում կոչվում են շրթունքների սպիտակություն, միևնույն ժամանակ նշում են՝ թե որ շրթունքն է սպիտակ, նշանը ինչ մեծություն է և ինչ դիրք ունի։

Վերջավորությունների նշանների նկարագրությունը սկսս-

վում է առջևի ոտքերից, սկզբում ձախ ոտքերն են նկարագրում, հետո՝ աջ։

Ոտքերի նշանները նկարագրելիս ցույց են տալիս սպիտակ գույնի տարածման աստիճանը, այսպես՝ սպիտակությունը կարող է լինել պսակի շուրջը, մինչև բեռամի կեսը, մինչև կոճղամատները, նա կարող է ընդգրկել և կոճղամատները, ենթադաստակի և սրունքի 1/3-ը, 1/2-ը, մինչև դաստակի և ցատկի հոդերը (գուլպաներ)։

ՁԻՈՒ ՏԱՐԻՔԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Ձիու տարիքը բավականին ճիշտ կերպով կարելի է որոշել ատամների միջոցով։ Տարիքի որոշման այս ձևը հիմնված է ատամների դուրս գալու, փոխվելու և մաշվելու վրա։

Չափահաս ձիերն ունեն 12 կարիչներ՝ 6-ական յուրաքանչյուր ծնոտի վրա և 24 սեղանատամներ՝ 12 հատ վերին և 12 հատ ստորին ծնոտի վրա։ Հոմատակները կարիչների և սեղանատամների միջև ունեն նաև 4 հատ ժանիքներ՝ 2-ական՝ վերին և ստորին ծնոտների վրա։ Զամբիկները ժանիքներ շատ հազվադեպ են ունենում, նրանց մոտ ավելի հաճախ պատահում են խիստ թերզարգացած ժանիքներ։ Այսպիսով, չափահաս հոմատակներն ունեն 40 ատամ, իսկ զամբիկները՝ 36.

Երբեմն վերին ծնոտի առաջին սեղանատամների առջևում դուրս են գալիս այսպես կոչված դայլի ատամներ, որոնք ամուր չեն լինում և հաճախ կերը ծամելիս խանգարում են, դրա համար էլ նրանց անհրաժեշտ է հեռացնել։

Կարիչ ատամները լինում են կաթնային (վաղ հասակում) և մնայուն, որոնք որոշ հասակում փոխարինում են կաթնայիններին։ Կարիչների միջին զույգը կոչվում է բանիչներ, նրանց կողքերին դասավորված հետևյալ զույգը կոչվում է միջին կարիչներ և հետևյալ զույգը՝ եզրային կարիչներ։

Կարիչ ատամի վերևի մասը կոչվում է պսակ, նրանից ներքև, ավելի նեղ մասը՝ վզիկ, իսկ վզիկից ներքև՝ արմատ։

Կարիչը բաղկացած է սկրանման նյութից՝ դենտինից և

իր միջի մասում ունի խոռոչ։ Դենտինը արտաքինից պատած է փայլուն, կարծր նյութով՝ էմալով, որը դժվարացնում է ատամի մաշվելը։ Կտրիչի պսակի ծայրի մակերեսը կոչվում է մաշվող մակերես։

Մաշվող մակերեսի վրա էմալը ծալվում է պսակի ծայրին գտնվող փոսիկի մեջ, պատելով նրա հատակը և պատերը։ Այդ փոսիկները կոչվում են բաժակներ։ Վերի ծնոտի բաժակները կրկնակի անգամ խորն են, քան ստորին ծնոտի բաժակները։ Նշված բաժակները ատամի մաշվելու հետևանքով աստիճանաբար կորցնում են իրենց խորությունը, իսկ որոշ հասակում բոլորովին վերանում են։

Կաթնային կտրիչները դուրս են գալիս և հետագայում փոխվում մնայուններով հետևյալ հաջորդականությամբ՝ սկզբում բռնիչները, հետո միջին կտրիչները և վերջում եզրային կտրիչները։ Նույնպիսի հաջորդականությամբ էլ մաշվում են կտրիչների բաժակները։

Կաթնային կտրիչները մնայունների համեմատությամբ լինում են ավելի մանր, նրանց պսակը համեմատաբար ավելի լայն է, վզիկը՝ արտահայտված և գույնը՝ սպիտակ։ Սեղանատամներից առջևի 12-ը (վեցական յուրաքանչյուր ծնոտի վրա) լինում են փոփոխվող, այսինքն՝ դուրս գալուց հետո որոշ ժամկետներում փոխվում են մնայուններով, իսկ մնացած 12-ը (դարձյալ 6-ական յուրաքանչյուրի ծնոտի վրա) մնայուն են, այսինքն փոխվելու ենթակա չեն։ Ժանիք ատամները ևս դուրս գալուց հետո չեն փոխվում։

Տարիքը որոշելիս, հեշտության համար, առաջնորդվում են միայն կտրիչ ատամների հետ տեղի ունեցող փոփոխություններով, թեև որոշ հասակում սեղանատամները ևս կարող են ծառայել այդ նպատակի համար։ Հովատակների մոտ հաշվի են առնում նաև ժանիքների դուրս գալու ժամկետը։ Տարիքը որոշելիս նկատի են ունենում հետևյալ ցուցանիշները.

1) կաթնային կտրիչների դուրս գալու ժամկետը,

2) նրանց բաժակների մաշվելը,

3) կաթնային կտրիչների փոխվելը մնայուններով.

4) մնայուն կտրիչների բաժակների մաշվելը,

5) մնայուն կտրիչների մաշվող մակերեսի ձևը։

Մտրուկները մեծ մասամբ ծնվում են առանց կտրիչների, նրանք ունենում են միայն 3 զույգ փոփոխվող սեղանատամներ։

Մինչև 30 օրական հասակը դուրս են գալիս կաթնային բռնիչները։

15—45 օրական հասակում դուրս են գալիս միջին կտրիչները։

6—7 ամսական հասակում դուրս են գալիս կաթնային եզրային կտրիչները։

10—12 ամսական հասակում մաշվում են կաթնային բռնիչների բաժակները։

12—14 ամսական հասակում մաշվում են կաթնային միջին կտրիչների բաժակները։

15—24 ամսական հասակում մաշվում են կաթնային եզրային կտրիչների բաժակները.

2½ տարեկան հասակում փոխվում են կաթնային բռնիչները։

3 տարեկան հասակում մնայուն բռնիչները հասնում են լրիվ զարգացման։

3 ½ տարեկան հասակում փոխվում են կաթնային միջին կտրիչները։

4 տարեկան հասակում մնայուն միջին կտրիչները հասնում են լրիվ զարգացման։

4 ½ տարեկան հասակում փոխվում են կաթնային եզրային կտրիչները և հովատակների մոտ սկսում են դուրս գալ ժանիքները։

5 տարեկան հասակում մնայուն եզրայինները, իսկ հովատակների մոտ նաև ժանիքները հասնում են լրիվ զարգացման։

6 տարեկան հասակում մաշվում են ստորին ծնոտի բռնիչների բաժակները, և նրանց մաշվող մակերեսը լայնակի օվալի ձև է ընդունում։

7 տարեկան հասակում մաշվում են ստորին ծնոտի մի-

ջին կարիչների բաժակները, բռնիչների բաժակի հետքի մոտ գեղնավուն բծի ձևով երևան է գալիս արմատային աստղը, մաշվող մակերեսը լայնակի օվալի ձև ունի։

8 տարեկան հասակում մաշվում են ստորին ծնոտի եղբայրների բաժակները, միջին կտրիչների վրա երևան է գալիս արմատային աստղը, մաշվող մակերեսը լայնակի օվալի ձև ունի։

9 տարեկան հասակում մաշվում են վերին ծնոտի բռնիչների բաժակները, ստորին ծնոտի բռնիչների մաշվող մակերեսը նմանվում է շրջագծի, իսկ եղբայրների վրա երևում է արմատային աստղը։

10 տարեկան հասակում մաշվում են վերին ծնոտի միջին կտրիչների բաժակները և արմատների միջև սկսում է առաջանալ տարածություն։

11 տարեկան հասակում մաշվում են վերին ծնոտի եղբայրների բաժակները, այսինքն՝ ծնոտի միջին կտրիչների մակերեսը մոտենում է շրջագծին։

12 տարեկան հասակում ստորին ծնոտի կտրիչների մաշվող մակերեսը արդեն մոտեցել է շրջագծին, բոլոր կտրիչների վրա արմատային աստղը լայն տեսք է ընդունում։

13 տարեկան հասակում ստորին ծնոտի կտրիչների վրա անհետանում են բաժակների հետքերը, բացառությամբ եղբայրների։

14 տարեկան հասակում բռնիչները (մաշվող մակերեսը) սկսում են ընդունել եռանկյան ձև։

15 տարեկան հասակում բռնիչների մաշվող մակերեսը լրիվ կերպով ընդունում է եռանկյան ձև, բաժակի հետքերը անհետանում են նաև եղբայրների վրա։

16 տարեկան հասակում միջին կտրիչներն ընդունում են եռանկյան ձև, վերին ծնոտի բռնիչների վրա անհետանում են բաժակների հետքերը։

17—18 տարեկան հասակում բոլոր կտրիչների մաշվող մակերեսը եռանկյունաձև է, անհետանում են վերին ծնոտի միջին կտրիչների բաժակների հետքերը, վերին և ստորին ծնոտի կտրիչները իրար են տոնում ավելի սուր անկյան տակ։

19 տարեկանից սկսած ստորին ծնոտի կտրիչների մաշվող մակերեսը աստիճանաբար օվալի հակառակ ձև է ընդունում, ըստ որում՝ սկզբում բռնիչներինը, հետո միջիններինը և ապա եզրայիններինը։

Ձիերի տարիքը ըստ ատամների որոշելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

1. Հղի զամբիկների մոտ ատամների փոխվելը կարող է 6—12 ամսով ուշանալ։

2. Վաղահաս ցեղերի մոտ, կերակրման լավ պայմաններում, ատամների փոխվելը ավելի վաղ հասակից է սկսվում, քան ուշահաս ցեղի ձիերի մոտ։

3. Կերի տեսակը և կերակրման եղանակը կարող է արագացնել կտրիչների մաշվելը, օրինակ, երամակային պահպանման ժամանակ, մանավանդ, եթե խոտակազմը կոպտացողուն է։

4. Ատամնանյութի (դենտինի) կարծրության տարբերությունը կարող է դանդաղեցնել, կամ, ընդհակառակը, արագացնել ատամների մաշվելու պրոցեսը։ Օրինակ, ատամները շատ կարծր լինելու դեպքում, նրանք մի քանի տարով ավելի ուշ են մաշվում և ընդհակառակը, դենտինի փուխր լինելու դեպքում մաշվելու պրոցեսը զգալի արագանում է։

5. Ձիու կրծախատով տառապելը, որովհետև այդպիսի ձիերի կտրիչները, մանավանդ բռնիչները, ժամանակից շատ շուտ և անկանոն են մաշվում։

ԳԼՈՒԽ 3

ՁԻԵՐԻ ՑԵՂԵՐԸ

Ձին պատկանում է կաթնասունների դասին, միասմբակավորների ընտանիքին, ձիերի տոհմին։

Ձիերի տոհմն իր հերթին ստորաբաժանվում է երեք ենթատոհմերի՝ իսկական ձիերի, զեբրերի և էշերի։ Սրանցից



Նկ. 29 ա. Ձիու տարիքի որոշումը ըստ ատամների։

Նկ. 29 բ. Զիու տարիքի որոշումը ըստ ատամների

Ձիերը և էշերը մարդու կողմից ընտելացվել են, բայց գոյություն ունեն նաև վայրի վիճակում, իսկ զեբրերը միայն վայրի վիճակում են գտնվում։ Ձիերը էշերի և զեբրերի հետ տրամախաչելիս ստացվում է սերունդ (հիբրիդ), որոնք լինում են անպտուղ (ոչ բեղուն)։ Այսպես՝ էշը զամբիկի հետ զուգավորելիս ստացվում է ջորի, իսկ որձ ձիու և էգ էշի զուգավորումից ստացված հիբրիդը կոչվում է իշաջորի։ Այս երկու խառնածիններից (հիբրիդներից) ավելի մեծ տնտեսական նշանակություն ունի ջորին, իսկ իշաջորին շատ հազվագեպ է և իր բանող հատկություններով զիջում է ջորուն։ Ինչպես ասացինք, ջորին երբեք սերունդ չի տալիս, որովհետև նրա մոտ սեռական բջիջները չեն հասունանում. առանձին դեպքերում էգ ջորիներն ընդունակ են լինում սերունդ տալու, բայց քանի որ արուները երբեք չեն կարող սերունդ տալ, ապա այդպիսի էգ ջորիներից սերունդ կարելի է ստանալ նրանց ձիերի հետ տրամախաչելով։

Ինչպես վերևում նշեցինք, շնորհիվ մարդու կողմից տարված աշխատանքի, սկսած հին դարերից մինչև մեր օրերը, ստացվել են զանազան տիպի ձիերի բազմաթիվ ցեղեր։

Այս ձեռնարկում խոսվում է միայն այն ցեղերի մասին, որոնք նշանակություն ունեն ՀՍՍՌ-ի համար։

Ձիերի ցեղերի ուսումնասիրությունը հեշտացնելու համար նրանց ենթարկում են դասակարգման (կլասիֆիկացիայի)։ Ամենատարած տնտեսական դասակարգումը հետևյալն է. 1) հեծնելու ձիեր, 2) ծանրաքաշ կամ լծելու ծանր ձիեր և 3) լծելու թեթև ձիեր. այս խմբի մեջ դլխավորապես մտնում են մարգուն ցեղերը։

ՀԵԾՆԵԼՈՒ ՑԵՂԵՐ

ԱՐԱԲԱԿԱՆ ՑԵՂԸ

Արաբական ցեղը հին ցեղերի շարքին է պատկանում։ Նա ստացվել է Արաբիայում՝ նրանից ավելի հին ծագում ունեցող ասիական, և մասամբ էլ հյուսիս աֆրիկյան ցեղե-

րից։ Արարական ցեղը մեծ դեր է խաղացել ուրիշ երկրների ձիերի ցեղերի լավացման գործում։ Ռուսաստանում նրա մասնակցությամբ ստացվել են վարդուն և հեծնելու ձիերի ցեղեր։

Արարական ձիու կոնստիտուցիան շոր է և նուրբ։ Նրա կյուսը բավականին փոքր է, գեղեցիկ, աչքերը՝ խոշոր, աչխույժ, պրոֆիլն ուղիղ է կամ քիչ գոգավոր, ճակատը՝ լայն։ Պարանոցը՝ միջակ երկարության, ուղիղ։ Մեղմը՝ միջակ, մեջքը և գոտկատեղն՝ ամուր, կուրծքը՝ բավարար խորության և լայն, կողերը՝ շատ ուռուցիկ, գավակը՝ ուղիղ, բավականին երկար, պոչը բարձր է դրված, որի մազերը ձիու շարժման ժամանակ գեղեցիկ կերպով հեռանում են մարմնից։ Ոտքերը միջակ երկարության են, շատ շոր, լավ զարգացած հոդերով և ամուր ջիլերով։ Ամրակներն ավելի շուտ փոքր են և շատ ամուր։ Մաշկը նուրբ է, թույլ զարգացած ենթամաշկով, որի հետևանքով երևում է արյան անոթների ցանցը։ Մազերը նուրբ են։ Ճակատափունջը լավ է զարգացած։ Նա մեծ մասամբ լինում է կարմիր և մոխրագույն (գնեդայա և սեռայա) երանգների։ Արարական ձին համեմատաբար փոքր է՝ կարճ իրանով և գեղեցիկ, վայելուչ տեսքով։ Ջամբիկների բարձրությունը մեղավից մինչև գետին միջին հաշվով հավասար է 149 սմ, կրծքի փաթը՝ 174 սմ և ենթաստամակի փաթը՝ 18,4 սմ։ Հովատակների միջին բարձրությունը հավասար է մոտ 152 սմ։

Արարական ձին աչքի է ընկնում իր լավ բայլով և արագ արշավով, վարդը միայն բավարար կարելի է համարել։ Նրա լավագույն ներկայացուցիչները արշավով 1600 մ տարածությունն անցել են 1 րոպե 47 վայրկյանում։ Արարական ձին իր արագավազությամբ գիջում է ձիերի զտարյուն հեծնելու ցեղին, ինչպես նաև՝ հայրենական ախալթեքինյան և բուդյոնովյան ցեղերին։ Արարական ցեղի ձիերն ամրակազմ են, դիմացկուն և տոկուն, դրա համար էլ մեծ տարածությունների վրա կազմակերպված վազքում հաճախ հաղթող են դուրս գալիս։ Արարական ձին երկարակյաց է և ավելի

չուտ՝ ուշահաս։ Նրա տոհմային հատկությունները բարձր են, այսինքն այլ ցեղերի հետ տրամախաչելիս նա մեծ չափով իր հատկությունները հաղորդում է խառնածիններին։ Մինչև XIX դարի կեսը արաբական ցեղը մեծ դեր է խաղացել եվրոպական զանազան երկրների և Ռուսաստանի ձիաբուծության լավացման գործում, որից հետո իր դերը աստիճանաբար դիջել է հեծնելու դասական ձիուն։

Նկ. 30. Արաբական ցեղի հովատակ։

ՍՍՌՄ-ում արաբական ձիերը բուծվում են գլխավորապես Հյուսիսային Կովկասում՝ Տերսկի և Ստավրոպոլսկի ձիաբուծարաններում, որտեղ նրանց մասնակցությամբ ստացվել է հայրենական տերսկի նոր ցեղը։

ՍՍՌՄ արաբական ցեղը պլանային է։ Միության որոշ շրջաններում տեղական ձիերը լավացվում են նրանով։ Անդրկովկասում՝ Հայկական և Ադրբեջանական ռեսպուբլիկաներում ևս արաբական ձին օգտագործվում է որպես լավացնող ցեղ։ Օրինակ, ՀՍՍՌ Նոյեմբերյանի, Գորիսի շրջաններում տեղական ձիերը հիմնականում լավացվում են տաբուսական ձիերով։ Արաբական ձիերի խառնածինները, տեղական ձիերի համեմատությամբ, լինում են ավելի խոշոր, սրընթաց և լավ են հարմարվում տեղի պայմաններին։

ՀԵԾՆԵԼՈՒ ՉՏԱՐՅՈՒՆ ՑԵՂԸ

Այս ցեղը ստացվել է Անգլիայում XVIII դարի կեսերին։ Նրա առաջացմանը մասնակցել են Անգլիայի տեղական ձիերը և Հյուսիսային Աֆրիկայի (բերբերական), Միջին Ասիայի (թուրքմենական), ինչպես նաև թյուրքական, պարսկական և արաբական ցեղերը։ Այսպիսով, հեծնելու զտարյուն ձին բարդ տրամախաչման արդյունք է։ Ստացված խառնածիններին հետագայում բուծել են ինքն իր մեջ՝ կատարելով ընտրություն։ Առանձնապես մեծ դեր են խաղացել բուս սրընթացության ընտրությունը (փորձարկում հիպոդրոմում) և լավ կերակրումն ու խնամքը։

Հեծնելու զտարյուն ձին ունի շոր և նուրբ կոնստիտուցիա։ Նրա գլուխը միջակ մեծության է, պարանոցն ուղիղ է և երկար։ մեղավը բարձր է, երկար, մեջքն ու գոտկատեղը կարճ են և ուղիղ։ թիակը երկար է և թեք դրված։ Կուրծքը լայն չէ, բայց շատ խորն է։ գավակը՝ երկար, թեթևակի թեքված։ ոտքերը երկար են, շոր, մկանեղ, լայն զարգացած հոդերով և լավ արտահայտված ջիլերով։ Երանգը մեծ մասամբ լինում է կարմիր և շեկ (գնեդայա և ռիժայա)։ Այսպիսով, նրա էքստերյերը միանգամայն բնորոշ է հեծնելու սրընթաց ձիերի համար։

Հեծնելու զտարյուն ձին վազահաս է, աշխույժ՝ տեմպերամենտով և վայելուչ՝ տեսքով։ Նա խոշոր ցեղերի շարքին

է սլաստիկանում. նրա միջին չափումները մեզ մոտ բնորոշվում են հետևյալ թվերով (սանտիմետրերով)։

	Բարձրությունը մինչև գոտի	Կրծքի փաթը	Թևերի երկարությունը	Ենթաստամոքսի փաթը
Հովատակներ	159	179	158	19,6
Քավորիկներ	157	178	158	18,9

Միջին կենդանի քաշը հավասար է 480—500 կգ։ Հեծնելու գոտաբյուն ձիերը բացառիկ սրընթաց են՝ նրանք կարող են մեկ կիլոմետր տարածությունը անցնել մեկ րոպեում և դեռ ավելի շուտ. օրինակ, Սովետական Միությունում «Բեսկարնի» հովատակը 2400 մետր տարածությունը անցել է 2 րոպե 31 վայրկյանում, իսկ «Ռանժիր» հովատակը՝ 2 րոպե 29 վայրկյանում։ Հեծնելու գոտաբյուն ցեղը տարածված է համարյա ամբողջ աշխարհում, և շնորհիվ իր տոհմային բարձր հատկությունների, լայնորեն օգտագործվում է տեղական ցեղերը լավացնելու համար։ Նրա մասնակցությամբ ստացվել են բազմաթիվ հեծնելու տիպի կուլտուրական ցեղեր։ Այս ցեղը Ռուսաստանում սկսեցին բուծել XVIII դարի վերջերից։ Սովետական Միությունում հեծնելու գոտաբյուն ձին բուծվում է ձիաբուծական սովխոզներում (զավոդներում), իսկ նրա խառնածինները՝ նաև կոլտնտեսային տոհմային ֆերմաներում։

Հեծնելու գոտաբյուն ձին պլանով նախատեսված է որպես լավացնող՝ Միության մի շարք շրջաններում, որտեղ ձիաբուծությունը հեծնելու ուղղություն ունի. նա պլանային է նաև Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, այդ թվում և Հայաստանում։

Երկար տարիների ընթացքում բուծման տեխնիկայի, կերակրման, խնամքի և մարզեցման յուրահատուկ պայմաններում մեզ մոտ՝ ՍՍՌՄ-ում ստեղծվել է գոտաբյուն ձիաբուծության ուրույն ուղղություն։ Մեզ մոտ հիմնվել են մի շարք նոր, բարձրորակ գծեր, օրինակ՝ Բրիմստոնի, Տազորի, Գրանիտի և այլ գծերը։

Տեղական մանր ցեղերի սկզբնական լավացման համար

հաճախ օգտագործում են ոչ թե հեծնելու զտարյուն ձին, այլ նրա արտադրյալները, այսինքն՝ խառնածիններն ուրիշ ցեղերի հետ տրամախաչելու միջոցով, ինչպես, օրինակ, կարաբաղինյան ձին։

Հեծնելու զտարյուն ձին պահանջում է խնամքի և կերակրման խիստ լավ պայմաններ, այլապես նա կորցնում է իր լավ հատկությունները։ Մեր տեղական ձիերի լավացումը հեծնելու զտարյուն ցեղով՝ պետք է մեծ զգուշությամբ կատարել, ըստ ամենայնի աշխատելով պահպանել տեղական ձիերի անտեսապես օգտավետ հատկությունները և խառնածինների համար ստեղծել կերակրման ու խնամքի լավ պայմաններ։

Նկ. 31. Հեծնելու զտարյուն ցեղի հովատակ։

ՏԵՐՍԿԻ ՑԵՂԸ

Տերսկի ցեղը հայրենական նոր ցեղերի թվին է պատկանում։ Նա ստացվել է Հյուսիսային Կովկասում՝ Տերսկի պետական ձիաբուծարանում, բարդ վերարտադրական տրամախաչման միջոցով։ Այս ցեղը ստանալիս օգտագործել են սորելեցկի և արաբական ցեղերի հովատակներին և դոնական ու կաբարդինյան զամբիկներին։ Սորելեցկի ցեղը մոտ է կանգնած արաբականին, որովհետև իր ժամանակ ստացվել է արաբական և հեծելու զտարյուն ցեղերի տրամախաչումից։ Քաղաքացիական կռիվների ընթացքում սորելեցկի ցեղը համարյա թե ոչնչացել է. մնացած հատ ու կենտ ներկայացուցիչները Սովետական իշխանության օրոք կենտրոնացվում են Տերսկի ձիաբուծարանում և օգտագործվում տերսկի ցեղի ստացման համար։ Այդ ցեղի առաջացման գործում առանձնապես մեծ դեր խաղացին «Ցիլինդր» և «Ցենիտել» հովատակները։

Տերսկի ձիաբուծարանում վերև նշված ցեղերի տրամախաչումից ստացված խառնածիններին հետագայում լավացնում են ինքն իր մեջ, աստիճանաբար կայունացնում և ստանում տերսկի ցեղը։

Այս ցեղի ստացման գործում հակայական դեր խաղացին արտաքին պայմանները՝ կերակրումը, խնամքը և վարժեցումը։

Տերսկի ձիաբուծարանում ձիերը պահվում էին կուլտուրական ախոռային ձևով։ Հետագայում ձիերը տեղափոխեցին Ստավրոպոլի ձիաբուծարանը, և սկսեցին պահել կուլտուրական երամակային եղանակով։

Կուլտուրական երամակային պահպանման պայմաններում, թեև ձիերը մեծ մասամբ օգտվում էին արոտից, սակայն տարվա որոշ ամիսներին ստանում էին նաև լրացուցիչ կեր՝ խոտ և հատիկ, սկսած մատղաշ հասակից։ Մատղաշների մարզանքը (տրենինգը) և ընտրության նպատակով նրանց փորձարկումը, նույնպես մեծ դեր խաղացին այս ցեղի ստացման գործում։ Տերսկի ցեղն ստեղծող ձիաբուծ-

ները իրենց համառ և արդյունավետ աշխատանքի համար արժանացան Ստալինյան մրցանակի։ Տերսկի ցեղը, ինչպես և բուդյոնովյան ցեղը, ստացվել է Ս. Մ. Բուդյոննու անձնական ղեկավարությամբ։

Տերսկի ցեղը հեծնելու ձիերի տիպին է պատկանում և բնորոշվում է հետևյալ ցուցանիշներով։ Նրա գլուխը միջակ մեծության է՝ ուղիղ կամ գողավոր պրոֆիլով, պարանոցը բավականին երկար է և ավելի շատ բարձր դրված, մնդակը լավ զարգացած, թիակը (ուսը) թեք է դրված, մեջքը և գոտկատեղը կարճ են՝ լավ զարգացած մկաններով։ Գավակը լայն է, նորմալ թեքվածությամբ. կողերը՝ երկար և կլորավուն, կրծքի վանդակը՝ ծավալուն։ Ոտքերը՝ ամուր, կարծր սմբակներով։

Նկ. 32. Տերսկի ցեղի հովատակ։

Տերսկի ցեղի ձիերը հնչող մեծամասնությամբ լինում են աբծաթափայլ, մոխրագույն երանգի։

Տերսկի տիպի զամբիկների համար բնորոշ են հետևյալ միջին չափումները. բարձրությունը (մեղավից)՝ 152 սմ, իրանի թեք երկարությունը՝ 154, կրծքի փաթը՝ 176, ենթաստամակի փաթը՝ 18,6 սմ. հովատակների միջին բարձրությունը 154 սմ է։ Տերսկի ցեղի ձիերը ամրակազմ են, դիմացկուն, բավականին սրընթաց և վայելուչ։ Սրանք հիանալի կերպով համակերպված են կուլտուրական երամակային պահպանման պայմաններին։ «Տելիսկոպ» հովատակը 1600 մ անցել է 1 րոպե 50 վայրկյանում։

Ներկայումս տերսկի ձիերին բուծում են Ստավրոպոլի և Կարելեցկի պետական ձիաբուծարաններում (գավոդներում)։ Տերսկի ցեղը օգտագործվում է որպես լավացնող՝ Ստավրոպոլի երկրամասում, Ադրբեջանական, Վրացական և Հայկական ՍՍՌ-ներում։

ԿԱԲԱՐԴԻՆՅԱՆ ՑԵՂԸ

Կաբարդինյան ցեղը Կովկասի լավագույն ցեղերից մեկն է։ Բուծվում է Կաբարդինական ինքնանում ՍՍՌ-ում, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում։ Հեռավոր անցյալում ստացվել է տափաստանային (մոնղոլական) և հեծնելու սրընթաց ձիերի սրամախաչումից՝ Կովկասի փարթամ լեռնային արոտավայրերում։ Հետագայում նորից թիթեռակի կերպով աղվել է մի շարք հեծնելու ձիերի ցեղերից, ինչպես, օրինակ, արաբական, զարաբաղի, իրանական և այլն։ Կաբարդինյան ցեղը համարյա մինչև հիմա էլ բուծվում է երամակային եղանակով։

Կաբարդինյան ցեղի ձիերին կարելի է օգտագործել լծելու և բեռնելու համար, բայց նա հիմնականում հեծնելու ձի է։ Կաբարդինյան ձին խոշոր չէ, ունի բիչ երկարաձգված, խորը և լայն իրան, գլուխը բավականին մեծ է, շոր, ականջները՝ ավելի շուտ երկար, բայց ցցված, քթի պրոֆիլը մեծամասնությամբ՝ ուռուցիկ (սապատավոր), պարանոցը՝

բարակ և ուղիղ, կարճ կամ միջակ երկարության, հաճախ ցածր դրված։ Մեղավը բավականին բարձր է, մեջքն ու գոտկատեղն ուղիղ են՝ լավ զարգացած մկաններով և ամուր։ Մեջքը մյուս հեծնելու ցեղերի հետ համեմատած քիչ ավելի երկար է։ Գավակը՝ միջակ երկարության, լայն և զգալի չափով թեքված։ Կուրծքը բավարար լայնության է և խորը։ Վերջավորությունները ամուր են, շոր՝ լավ զարգացած հոդերով ու ջիլերով և կարճ սմբակներով։ Առջևի ոտքերը մեծ մասամբ կանոնավոր են դրված, իսկ հետևի ոտքերը հաճախ թրաձև են լինում և ցատկիչ հոդերում որոշ չափով մոտիկացած։ Երանգը մեծ մասամբ կարմիր է լինում։

Կաբարդինյան ցեղը խոշոր չէ, նրա բարձրությունը, մրդավից մինչև գետին, միջին հաշվով հավասար է 144 սմ.

Նկ. 33. Կաբարդինյան ցեղի հովատակ։

Տոհմական զամբիկների չափումներն են՝ բարձրությունը մեղավից — 147, թեք երկարությունը — 149, կրծքի փաթը — 176, ենթաղաստակի փաթը — 18,2 սմ։

Կաբարդինյան ձիերը ունենալով շոր և ամուր կոնստիտուցիա հայտնի են իրենց դիմացկունությամբ, աշխատունակությամբ, և հիանալի կերպով համակերպված են լեռնային պայմաններին։ Որպես օրինակ կարող են ծառայել կաբարդինյան ցեղի ձիերի բանող հատկությունները ուսումնասիրելու նպատակով 1935/36 թվականի ձմռանը կազմակերպված վազքը Կովկասյան լեռնաշղթայի շուրջը։ Բացի այդ ձիերից, վազքին մասնակցում էին կաբարդինյան ցեղի 15 ձի։ Չնայած վազքի ծանր պայմաններին, 3000 կմ տարածությունը ձիերը կարողացան կտրել 47 օրում, չհաշված հանգստյան օրերը, միջին հաշվով օրական անցնելով 64 կմ տարածություն։

Կաբարդինյան ցեղի ձիերն այնքան էլ սրընթաց չեն, օրինակ՝ նրանց լավագույն ներկայացուցիչները 1600 մետր տարածությունն անցնում են 1 րոպե 54 վարկյանում։

Կաբարդինյան ցեղը պրանային է ՍՍՌՄ-ի մի շարք շրջաններում, գլխավորապես Հյուսիսային Կովկասում։ Այս ցեղի հետագա բարելավման համար կազմակերպված են երկու պետական տոհմաբուծարան և մի շարք տոհմային սովխոզներ (զավոդներ)։

ՀՍՍՌ-ում ևս կաբարդինյան ցեղը պրանով ընդունված է որպես լավացնող։ Առանձնապես նպատակահարմար է նրանով լավացնել տեղական ձիերը՝ խիստ անհարթ ռելիեֆ ունեցող լեռնային շրջաններում, ինչպես, օրինակ, Ազիզբեկովի, Ղափանի և այլն։ Կաբարդինյան ցեղի ձիերի որոշ մասը լավացրել են հեծնելու զտարյուն ցեղի ձիերի հետ տրամախաչելով։ Ստացված խառնածինները կաբարդինյան ձիերի համեմատությամբ ավելի խոշոր են, սրընթաց և ավելի վայելուչ տեսքով։ Սրանք ևս մեր մի շարք շրջաններում օգտագործվում են որպես լավացնողներ։

ՀԵԾՆԵԼՈՒ ԹԵԹԵՎ ՑԵՂԵՐ

ՕԼՈՎՅԱՆ ՎԱՐԳՈՒՆ

Օլովյան վարգունը ստացվել է Ռուսաստանում XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, Խրենովսկի ձիարուծարանում, Օլով — Զիմենսկու և նրա ձիարուծարանի կառավարչի՝ Վ. Ի. Շիշկինի կողմից։

Նպատակ էր դրված ստանալ լծելու թեթև (կառքի) ձի, որը լիներ խոշոր, բավականաչափ մասսիվ և լավ վարգով գնացող։ Այդ նպատակի համար Օլովը և Շիշկինը օգտագործեցին տարբեր ուղղության մի քանի ցեղեր. արաբական, արեմտաեվրոպական՝ լծելու և լծելու-հեծնելու ցեղեր։

Այդպիսով, ցեղը ստանալու համար կիրառեցին բարդ վերարտադրողական տրամախաչման մեթոդը։ Ցեղի ստացման ամբողջ ընթացքում տարվում է ընտրություն ըստ տիպի։ Միևնույն ժամանակ առաջին անգամ Ռուսաստանում Խրենովսկի ձիարուծարանում սկսեցին կիրառել մատղաշ ձիերի արենինգը (մարզում) և փորձարկում՝ ըստ արագավազության։ Հետագայում Օլովյան ցեղը աստիճանաբար այն տարածում գտավ ամբողջ Ռուսաստանում։

Ռեոլյուցիայից հետո հսկայական աշխատանք է տարվել այս ցեղի հետագա կատարելագործման ուղղությամբ, որի շնորհիվ ներկայումս Օլովյան վարգունը աշխարհիս լավագույն ցեղն է հանդիսանում։

Օլովյան վարգունն ըստ իր տիպի պատկանում է լծելու թեթև ձիերին, բայց միևնույն ժամանակ նա խոշոր է և բավականին մասսիվ։

Նրա գլուխը բավականին մեծ է՝ ուղիղ պրոֆիլով, պարանոցը երկար է, մկանեղ և հաճախ (մանավանդ հովատակների մոտ) կարապի ձևի։ Կուրծքը և մեջքը լավ զարգացած են մկաններով, դավակը հզոր է (լավ զարգացած), վերջավորությունները երկար են և մեծ մասամբ ճիշտ կերպով դրված։ Համեմատաբար ավելի հաճախ նկատվում են հետևյալ պակասությունները. կոպտավուն գլուխ, ոչ բավա-

բար խորության կուրծք, հոդերի խոնավություն և առջևի վերջավորությունների ծուռթաթություն (դեպի դուրս)։

Ամենատարածված երանգներն են՝ սևաթույրը և մոխրագույնը։

Օլդովյան ցեղի զամբիկների միջին չափումներն են. բարձրությունը մեղավից՝ 158 սմ, թեք երկարությունը՝ 160 սմ, կրծքի փաթը՝ 179 սմ և ենթադաստակի փաթը՝ 19,8 սմ։ Հովատակներն ավելի խոշոր և մասսիվ են. նրանց բարձրությունը հավասար է 160 սմ., իսկ ենթադաստակի փաթը՝ 20,2 սմ։

Օլդովյան վարգունը շատ արագավազ է. միջին հաշվով նա 1600 մետր տարածությունը վարգով անցնում է 2 րոպե 25 վայրկյանում, իսկ «Ռուլոֆ» և «Պիլոտ» հովատակները նույն տարածությունն անցել են 2 րոպե 2 $\frac{2}{8}$ վայրկյանում։

Օլդովյան վարգունը որպես կայուն ցեղ աչքի է ընկնում նաև իր տոհմային հատկություններով։

Օլդովյան վարգունը բուծում են կուլտուրական (ախոռային) ծիաբուծության պայմաններում։

Նկ. 34. Օլդովյան վարգուն ցեղի հովատակ։

Այս ցեղի լավագույն մասը կենտրոնացված է պետական ծարաններում (զավոդներում). բացի դրանից, նրա հետագա բարելավման նպատակով Կուրսկի, Ալյանովի, Գորկու, Տամբովի և այլ մարզերում կազմակերպված են պետական տոհմաբուծարաններ՝ կոլտնտեսությունների սպասարկման համար։

Օլյովյան վարգունը ՍՍՌՄ բազմաթիվ շրջաններում ընդունված է որպես հիմնական լավացնող ցեղ. նրանով լավացնում են տեղական ավելի ցածրորակ ցեղերը և ստանում հիանալի գյուղատնտեսական ձի։

Վերջին տարիներում ՀՍՍՌում ևս սկսել են օլյովյան վարգուններին օգտագործել տեղական ձիերի լավացման համար։ Բայց այս հարցում անհրաժեշտ է ցուցաբերել որոշ զգուշություն, այսինքն սկզբում նրանց օգտագործել սահմանափակ չափերով, և միայն դրական արդյունքներ ստանալու դեպքում, օգտագործման շրջանը լայնացնել։

ՌՈՒՍԱԿԱՆ ՎԱՐԳՈՒՆ

Ռուսական վարգունը ստացվել է վերջին տարիներում Օլյովյան և ամերիկյան վարգունների խաչասածիններից։

Օլյովյան վարգունը մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան մասսայական կերպով տրամախաչվում էր ամերիկյան վարգունի հետ, որը թեև ավելի մանր էր, քան օլյովյանը, բայց արագավազությամբ գերազանցում էր նրան։

Սովետական իշխանության օրոք այդպիսի տրամախաչումը դադարեցվեց, որովհետև օլյովյան վարգունի տնտեսապես օգտավետ հատկությունները, ամերիկյանի հետ համեմատած, անհամեմատ ավելի բարձր էին։ Դրա համար մի կողմից մեծ ուշադրություն դարձվեց օլյովյան վարգունի հետագա բարելավման (կատարելագործման) գործին, իսկ մյուս կողմից նպատակ դրվեց նրա և ամերիկյան վարգունի խաչասածիններից ստանալ նոր ցեղ, որը և հաջողվեց իրագործել։

Ռուսական վարգունն ըստ իր մասսիվության փոքր ինչ

դիջում է սոլովյան վարգունին և ավելի շոր կոնստիտուցիա ունի։ Նա ամրակազմ է, լավ զարգացած մկաններով և շատ սրաբավազ է։ Այս ցեղի ռեկորդը պատկանում է «ժենա» հովատակին, որը 1600 մետր տարածությունը վարգով անցել է 1 րոպե 59 $\frac{6}{8}$ վայրկյանում։

Ռուսական վարգուն ցեղի գամբիկներին բնորոշ են հետևյալ միջին չափումները. բարձրությունը մնդամից՝ 157 սմ., իրանի թեք երկարությունը՝ 159 սմ, կրծքի փաթը՝ 179 սմ և ենթաղաստակի փաթը՝ 19,5 սմ։ Հովատակների բարձրությունը հավասար է 160 սմ, կրծքի փաթը՝ 182 սմ, և ենթաղաստակի փաթը՝ 20,1 սմ։

Նկ. 35. Ռուսական վարգուն ցեղի հովատակ։

Այս ցեղի լավագույն մասը կենտրոնացված է պետձիաբուծարաններում (Դուբրովսկի, Լավրովսկի, Ալեքսանդրովսկի և այլն). բացի դրանից, ռուսական վարգունը բավականին մեծ քանակությամբ բուծվում է նաև մի շարք կոլտնտեսություններում, որտեղ տոհմական աշխատանքը իրագործում

են պետական տոհմարուծարանները (Օմսկի, Ուլյանովսկի և Ուրիշները)։ Ռուսական վարգունը, ինչպես օլովյան վարգունը, որպես լավացնող է ընդունված ՍՍՌՄ-ի համարյա բոլոր մարզերում, երկրամասերում և ռեսպուբլիկաներում։

Ռուսական վարգունը, ինչպես և օլովյանը, Հայաստանում օգտագործվում է տեղական ձիերի լավացման համար։

ԾԱՆՐԱՔԱՐՇ ՑԵՂԵՐ

ՌՈՒՍԱԿԱՆ ԾԱՆՐԱՔԱՐՇ ՑԵՂ

Ռուսական ծանրաքարշ ցեղը առաջացել է «Արդեն» ցեղի մասնակցությամբ։

Արդենը մանր ծանրաքարշ ցեղ է, որը սկզբում ստացվել է Բելգիայի լեռնային «արդեններ» կոչվող վայրում։ Արդենները հետագայում տարածվեցին Ֆրանսիայում, Շվեդիայում, Նորվեգիայում և այլ երկրներում, բայց ներկայումս նշված երկրներում, ինչպես և իր հայրենիքում, քիչ թվով է պահպանվել։ Արդեն ցեղը Ռուսաստան մուտք է գործել դեռևս XIX դարում։

Ռուսական ծանրաքարշ ցեղը ստացվել է պետական ձիաբուծարաններում և կոլտնտեսություններում՝ արդեններն այլ ծանրաքարշ ցեղերի, վարգունների և տեղական ձիերի հետ տրամախաչելու միջոցով։ Այս ցեղի ստացման գործում վճռական դեր խաղաց ձիերի ընտրությունը և զույգերի ընտրությունը (որը տարվում էր ըստ տիպիկության), կերակրման ու խնամքի լավ պայմանները, ինչպես նաև տոհմային ձիերն աշխատանքի մեջ օգտագործելը։

Ռուսական ծանրաքարշ ցեղն ըստ տիպի պատկանում է ծանրաքարշ ձիերի շարքին։

Նրանց գլուխը միջակ մեծության է, պարանոցը միջակ երկարության՝ հաստ և լավ զարգացած մկաններով, իրանը լայն է և խորը, կրծքի վանդակը լավ զարգացած, գավակը լայն է՝ ծավալուն մկաններով, զգալի թեքվածությամբ, պատահում է նաև երկբաժան գավակ։

Վերջավորությունները, մյուս տիպի ծանրաքաշ ցեղերի հետ համեմատած, ավելի չոր են, ամուր, և մեծ մասամբ դրված են ուղիղ։

Էքստերյերային պակասություններից ավելի հաճախ պատահում են՝ մեջքի թեթևակի գոգավորություն, ոտքերի թրաձևություն, ցատկահոդերի մոռիկություն և առջևի ոտքերի ծռոթաթություն (դեպի ներս)։

Նկ. 36. Ռուսական ծանրաքաշ ցեղի հովատակ։

Երանդը մեծ մասամբ լինում է շեկ և շեկաշալ։

Ռուսական ծանրաքաշ ձին խոշոր չէ, նրա համար բնորոշ են հետևյալ միջին չափումները. զամբիկների բարձրությունը հավասար է 145 սմ, թեք երկարությունը՝ 155 սմ, կրծքի փաթը՝ 183 սմ և ենթաստակի փաթը՝ 20,6 սմ. հովատակների միջին բարձրությունը հավասար է 146 սմ։

Ռուսական ծանրաքաշ ձիերը վաղահաս են. նրանք իրենց աճն ու զարգացումը հիմնականում ավարտում են 3

տարեկան հասակում։ Նրանք ամրակազմ են, հեշտությամբ համակերպվում են զանազան կլիմայական պայմաններին։

Ռուսական ծանրաքաշ ձիերի բանող հատկությունները շատ բարձր են, նրանք ոչ միայն ընդունակ են մեծ բեռ քաշելու, այլև աչքի են ընկնում իրենց դյուրաշարժությամբ, այսինքն ունեն աղատ արագ քայլ և բավարար արագության վարդ։

Այսպես՝ «Լագուտչիկ» հովատակը 2 տոննա բեռը 1 կիլոմետր տարածության վրա տեղափոխեց քայլով 8 րոպե 44 վայրկյանում, իսկ վարդով՝ 2 րոպե 38 վայրկյանում։ Բեռ քաշելու ռեկորդը պատկանում է «Կավարնի» հովատակին, որը կարճ տարածության վրա տեղափոխել է 7265 կգ բեռ, որի ժամանակ քարշի ուժը հավասար էր 314 կգ։

Ռուսական ծանրաքաշ ցեղի ձիերի լավագույն գլխաքանակը կենտրոնացված է Ուկրաինայի (Նովո-Ալեքսանդրովսկի ու Կոստանտինովսկի) և Ուրալի մի շարք պետձիաբուծարաններում։

Շնորհիվ իր անտեսապես օգտավետ հատկությունների, ռուսական ծանրաքաշ ցեղը ՍՍՌՄ մի շարք վայրերում, այդ թվում Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, ընդունված է որպես պրանային։

Փորձը ցույց է տվել, որ Հայաստանի տեղական ձիերը, ռուսական ծանրաքաշ ցեղով լավացնելու դեպքում, լավ արդյունքներ են ստացվում։ Այդպիսի արամախաչումից ստացված ձիերը, տեղական ձիերի համեմատությամբ, լինում են ավելի խոշոր, մասսիվ, ուժեղ են և ունեն լավ բանող հատկություններ։ Գրական պետք է համարել նաև այն, որ նշված խառնածինները դյուրաշարժ են և շատ լավ են հարմարվում մեր լեռնային պայմաններին։

Ստեփանավանի շրջանի կոլտնտեսություններում մի շարք տարիների ընթացքում ռուսական ծանրաքաշից և տեղական ձիերից ստացված խառնածինների նկատմամբ տարվում է աշխատանք՝ հետագա բարելավման ուղղությամբ։ Դրա շնորհիվ այստեղ արդեն ստացվել է խառնածինների չափազանց արժեքավոր խումբ, որոնք իրենց բարձր բանող հատ-

կությունները համատեղում են գյուրաշարժության և տեղի պայմաններին համակերպված լինելու հետ։

Այդ խառնածինների գամբիկների միջին բարձրությունը հավասար է 142 սմ, թեք երկարությունը՝ 145 սմ, կրծքի փաթը՝ 170 սմ և ենթաղաստակի փաթը՝ 19,2 սմ, իսկ հովատակների միջին բարձրությունը հավասար է 148 սմ։

Թե որքան ուժեղ են հիշված խառնածինները, կարելի է օրինակ բերել Միխայլովկա գյուղի կոլտնտեսությանը պատկանող «Ժոկեյ» հովատակը, որը փորձարկման ժամանակ կարողացավ փորը տարածության վրա (250 մ) տեղափոխել 9940 կգ բեռ, դարգացնելով 497 կգ քաշող ուժ։

Ինչպես ռուսական ծանրաբարշ ձիերը, այնպես էլ նրանց միջոցով ստացված բարձրորակ խառնածինները ըստ հնարավորության պետք է լայնորեն օգտագործել մեր մի շարք շրջաններում, նրանց միջոցով գյուղատնտեսական բարձրորակ ձիեր ստանալու համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՁԻԵՐԸ

ՀՍՍՌ-ի տեղական ձիերն ավելի շուտ ունեն հեծնելու ուղղություն։ Նրանց կոնստիտուցիան նուրբ է և չոր։ Տեղական ձիերի համար բնորոշ է հետևյալ էքստերյերը։ Գլուխը մեծ. մասամբ միջակ կամ փոքր է, ուղիղ պրոֆիլով. պարանոցն ունի միջակ երկարություն, մեղավը բավականին լավ է զարգացած, մեջքը միջակ երկարության է կամ կարճ, գոտկատեղը ևս կարճ է և ամուր, գավակը միջակ երկարության է, բավարար լայնության և չափավոր թեք. կուրծքը միջակ լայնության և խորության է, ոտքերը չոր են, ջլուտ, ամուր և կարծր սմբակներով. ոտքերի երկարությունը միջակից բարձր է։ Տեղական ձիերի ոսկրակազմը և մկանները բավարար են զարգացած. նրանց տեմպերամենտը աշխույժ և եռանդուն է։ Ամենատարածված երանգներն են կարմիր և մոխրագույնը պատահում են և այլ երանգի ձիեր. սպիտակ նշանները հազվադեպ են, ավելի հաճախ են պատահում ճակատի վրա գեծիկներ ունեցող ձիեր։

Տեղական ձիերը մանր են. դամբիկների համար բնորոշ են հետևյալ միջին չափումները. բարձրությունը՝ (մնդավից) 134 սմ, թեք երկարությունը՝ 135,5 սմ, կրծքի փաթը՝ 159 սմ և ենթադաստակի փաթը՝ 17 սմ։ Հովատակները փոքրինչ ավելի խոշոր են։

Մեր մի շարք շրջաններում տեղական ձիերի միջին ցուցանիշներն ավելի ևս ցածր են և քիչ չեն դեպքեր, երբ նրանց բարձրությունը հաղիվ է հասնում 128—130 սմ։

Տեղական ձիերը ուշահաս են, ամրակազմ, դիմացկուն, սակավապահանջ և հիանալի կերպով համակերպված են մեր լեռնային պայմաններին։

Իրենց փոքրությունն համեմատ նրանք բավարար արագությամբ են արշավում, պատահում են և արագ շորոնքայլ դնացող ձիեր։

Տեղական ձիերից համեմատաբար ավելի աչքի են ընկնում Ղազախի ձիերը, որոնք բուծվում են Շամշադինի, Իջևանի, Նոյեմբերյանի և Կրասնոսելսկի շրջաններում, ու Զանգեզուրի ձին, որը տարածված է Ղափանի, Գորիսի և Սիսիանի շրջաններում։

Չնայած իրենց մի շարք դրական հատկություններին, տեղական ձիերը չեն կարող լրիվ բավարարել մեր ժողովրդատնտեսական պահանջները, այդ պատճառով և լավացվում են մի շարք բարձրորակ կուլտուրական ցեղերով։

ՋՈՐԻ

Ջորին շատ արժեքավոր կենդանի է. նա աչքի է ընկնում իր երկարակեցությամբ (ապրում է մինչև 60—90 տարի), շատ դիմացկուն է, տոկուն և ուժեղ, ձիու հետ համեմատած նա շոգին, ցրտին ավելի լավ է դիմանում և ավելի նվազ պահանջկոտ է։ Ջորին հիանալի կերպով համակերպված է լեռնային ռելյեֆին և ընդունակ է մեծ բեռի տակ շարժվելու նեղ և քարքարոտ կածաններով։

Շնորհիվ իր այս արժեքավոր հատկությունների, ջորին լայնորեն պետք է օգտագործել գյուղատնտեսության մեջ,

տրանսպորտի համար, լեռնային վայրերում նաև որպես լեռնակիր դրաստ։

Հայաստանում ջորիների արտադրությամբ զբաղվել են շատ հին ժամանակներից։ Ներկայումս լեռնաբեռնակիր ջորիների արտադրությամբ զբաղվում են Զանգեզուրի, Սիսիանի, Գորիսի, Մեղրու և Ագիզբեկովի շրջաններում։ Հայաստանի պայմաններում պետք է ստանալ երկու տիպի ջորի՝ 1) լեռնաբեռնակիր և 2) լծելու տիպի։ Առաջին տիպի ջորիներ ստանալու համար պետք է օգտագործել թուրքմենական, մարիական ցեղի, ինչպես նաև համադանի էշերը, կամ նրանց խառնածիններին՝ մեր տեղական էշերի հետ։ Էշերի նշված ցեղերը բավականին խոշոր են. նրանց միջին բարձրությունը մնգավից մինչև գետին հավասար է 120—130 սմ. նշված ցեղերը բավականին խոշոր են. նրանց միջին բարձրությունը հաղիվ մի մետրի է հասնում։ Լեռնաբեռնակիր ջորիներ ստանալու համար պետք է օգտագործել տեղական և կարաբաղինյան կամ արարական ցեղերով լավացրած զամբիկներ։ Այսպիսի տրամախաչումից ստացված ջորիները կլինեն ոչ այնքան խոշոր (մինչև 140 սմ բարձրությամբ), բայց ամրակազմ և լեռնային պայմաններին համակերպված։

Լծելու տիպի ջորիներ ստանալու համար պետք է օգտագործել վերև նշված ցեղի էշերին և ռուսական ծանրաքաշ ու վարգուն ցեղերի խառնածին զամբիկներին։ Այս ճանապարհով ստացած ջորիները կլինեն բավականին խոշոր (բարձրությունը 140—152 սմ), մասսիվ, միևնույն ժամանակ դյուրաշարժ։

ԳԼՈՒԽ 4.

ՁԻԵՐԻ ԲՈՒԾՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

Բուծման տեխնիկայի ճիշտ կիրառումը հսկայական նշանակություն ունի գյուղատնտեսական կենդանիների գրեթե ամբողջ ընդլայնացրած վերարտադրումն ապահովելու գործում։

Նկ. 37. Ջորի։

Ձիերի բազմացման գործը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է իմանալ նրանց բազմացման ֆիզիոլոգիան։

Առաջին զուգավորման ժամկետը։ Ինչպես արու, այնպես էլ էգ մատղաշ ձիերը սեռական հասունացման են հասնում բավականին վաղ հասակում, երբ դեռ նրանց աճն ու զարգացումը չի ավարտվել, այն է՝ 9—18 ամսական հասակում։ Հետևաբար ձիերին առաջին անգամ զուգավորման թողնելիս մենք չենք կարող դեկավարվել սեռական հասունացման ժամկետով։ Զամբիկներին վաղ զուգավորելու դեպքում նրանք դարգացմամբ չափազանց հետ են մնում, իսկ նրանցից ստացված սերունդը լինում է ավելի ցածրորակ. նույնը կարելի է ասել հովատակների մասին։ Դրա համար էլ ինչպես զամբիկներին, այնպես էլ հովատակներին առաջին անգամ զուգավորման պետք է թողնել սեռական հասունացման սկզբից ավելի ուշ, երբ նրանք հիմնականում արդեն աճել ու զարգացել են։ Իհարկե բոլոր դեպքերում չի կարելի առա-

ջին զուգավորման ժամանակ առաջնորդվել նույն ժամկետով. օրինակ, հավասար պայմաններում վաղահաս ցեղերի ձիերին ավելի շուտ են թողնում զուգավորման, քան ուշահասներին. համեմատաբար ավելի շուտ են զուգավորում նաև կերակրման ավելի լավ պայմաններում աճած մատղաշներին։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համկ(բ)Պ Կենտկոմի 12 մայիսի 1943 թ. որոշման համաձայն, 3 տարեկանից բարձր բոլոր զամբիկների զուգավորումը պարտադիր է. հովատակներին պետք է սկսել օգտագործել որպես արտադրող ոչ շուտ, քան 3—4 տարեկան հասակում, ընդ որում օգտագործման առաջին տարում նրանց ավելի քիչ են ծանրաբեռնում։

ՍԵՌԱԿԱՆ ՑԻԿԼԸ ԵՎ ՀՈՍՔԸ (ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ)

Ձին պատկանում է այն կենդանիների շարքին, որոնց կերակրման, խնամքի նորմալ պայմաններում ընդունակ են տարվա բոլոր ժամանակներին սերունդ տալու։

Հովատակը, եթե առողջ է ու երիտասարդ, միշտ սեռական ձգտում է զգում դեպի զամբիկը. նա ընդունակ է զուգավորվելու և սերունդ տալու։ Իսկ զամբիկը միայն որոշ ժամանակաշրջաններում է սեռական ցանկություն զգում և ընդունակ դառնում սերունդ տալու։

Այն ժամանակաշրջանը, երբ փոխվում է իգական սեռի կենդանու վարքը, նա սեռական ցանկություն է զգում և թույլ է տալիս զուգավորվելու, կոչվում է հոսքի, ցանկության կամ կաղուցի շրջան։ Ցանկության շրջանում հասունացած ձվարջիջը հեղուկի հոսանքով դուրս է ընկնում ֆոլիկուլից և տարվում է ձվափողի մեջ. այդ վիճակում զամբիկն ընդունակ է լինում բեղմնավորվելու։ Մեկ հոսքից (ցանկության) մինչև մյուս հոսքի ժամանակաշրջանը կոչվում է սեռական ցիկլ, նա միջին հաշվով հավասար է 19—23 օրվա, տատանվելով 13—25 օրերի միջև։

Զամբիկների ցանկությունն ավելի հաճախ տեսնում է 4—7 օր. բայց լինում են դեպքեր, երբ ցանկության շրջանը

տևում է ընդամենը 2—3 օր, կամ ընդհակառակը, շատ երկար՝ մինչև 10—13 օր և ավելի։

Ստերջ զամբիկների ցանկության շրջանն ավելի երկար է տևում։ Զամբիկներին վատ և ոչ լիարժեք կերերով կերակրելու, չափից ավելի աշխատացնելու դեպքում նրանց ցանկության շրջանի տևողությունը և սեռական ցիկլն ավելի անկանոն է դառնում։ Ցանկության շրջանի տևողությունը կախված է նաև զամբիկի անհատականությունից և մի շարք այլ պատճառներից։

Մեկուց հետո զամբիկը սովորաբար ցանկության է գալիս առաջին 6—10 օրերին, բայց առանձին ձիեր կարող են ցանկության գալ 4 օրից հետո, կամ, ընդհակառակը, շատ ուշ՝ 20 օրից հետո և դեռ ավելի ուշ։ Զամբիկների մոտ օվուլյացիան, այսինքն հասունացած ձվարջջի ձվարանից դուրս գալը, մեծ մասամբ տեղի է ունենում ցանկության շրջանի վերջում, ավելի հաճախ՝ նրանից 1—2 օր առաջ։ Սպերմատոզոիդները զամբիկի սեռական օրգաններում իրենց բեղմնավորվելու ընդունակությունը պահպանում են մոտ 24 ժամ ավելի, հետևաբար եթե զամբիկին զուգավորման թողնենք միայն մեկ անգամ՝ ցանկության սկզբին, ապա մեծ մասամբ բեղմնավորում տեղի չի ունենա, քանի որ այդ ժամանակ ձվարջիջը դեռ հասունացած չի լինում, իսկ սպերմատոզոիդները, ինչպես ասացինք, միայն մեկ օր են պահպանում իրենց կենսունակությունը։ Դրանից եզնելով ձիաբուծության մեջ ընդունված է ցանկության շրջանում զամբիկին սերմնավորել մի քանի անգամ։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ինչպես առաջավորների փորձն է այդ ցույց տվել, ցանկության հայտնաբերման, ինչպես և սերմնավորման ժամկետի ճիշտ որոշման հարցում պետք է յուրաքանչյուր զամբիկին մոտենալ անհատորեն։

ԶԱՄԲԻԿԻ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ (ՀՈՍՔԻ) ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ

Ցանկության շրջանում զամբիկի սեռական օրգաններն ուռչում են և սովորաբար լինում են այնպիսի վիճակում, ինչպես միզելուց հետո, այսինքն հաճախակի սեռական

շրթերի թարթելու շարժումներ են նկատվում։ Ցանկության դեպքում բացվում է արգանդի վզիկը, սեռական օրգաններից հաճախ սպիտակավուն լորձ է հոսում, զամբիկները դառնում են անհանգիստ, ջղային, շուտ են հոգնում և մեծ մասամբ հովատակին հաճույքամբ են մոտ թողնում։ Փոխվում է մինչև անգամ նրանց կաթի բաղադրությունը. նրա մեջ ավելանում է յուղի քանակը, որի հետևանքով այդ օրերին ծծմայր զամբիկների մարուկները փորլույծ են ստանում։

Զամբիկի ցանկությունը որոշելիս չի կարելի առաջնորդվել միայն վերոհիշյալ նշաններով, որովհետև այդ արտաքին նշանները միշտ չէ, որ լավ են արտահայտված լինում և քիչ են դեպքերը, երբ մինչև անգամ անկատելի են մնում։ Այս պատճառով ձիաբուծության մեջ ընդունված է զամբիկի ցանկությունը որոշել ոչ թե արտաքին նշաններով, որը միայն օժանդակ նշանակություն ունի, այլ մեծ մասամբ հովատակի «գնությամբ»։

Սովորաբար որպես փորձահովատակ օգտագործում են առհմական տեսակետից արժեք չներկայացնող, բայց եռանդուն, ամրակազմ, համառ և բնավորությամբ ոչ չար հովատակներին։

Զամբիկի ցանկությունը հայտնաբերում են հետևյալ կերպ. փորձահովատակին, որի երկար երասաններից բռնած են լինում երկու ձիապահ, մոտեցնում են զամբիկին. երրորդ ձիապահը զամբիկին պահում է աջ ձեռքով սանձը կարճ բռնած, իսկ ձախ ձեռքով պահում է նրա մնդամը։ Փորձահովատակին մոտեցնում են զամբիկին այնպես, որ նա սկզբում հոտ քաշի գլխից, ապա նա սովորաբար հոտ է քաշում ցարանոցից, արմունկից, փորից և հետևի մասից։ Եթե զամբիկը չի վանում հովատակին, այլ ընդհակառակը զուգավորման համար դիրք է ընդունում, կնշանակի նա ցանկության շրջանում է գտնվում։ Զամբիկին վնասվածքներ չհասցնելու համար փորձահովատակը չպետք է պայտած լինի։ Ծծմայր զամբիկների ցանկության ստուգման ժամանակ մարուկը հեռու չպետք է լինի։

Սովորաբար զամբիկներին ստուգում են առավոտյան՝ մինչև նրանց կերակրելը և աշխատեցնելը։

Զիերին երամակային ձևով պահելիս կարելի է փորձահովատակի երեք ոտքը կապել (բխավել), առավոտյան և երեկոյան մի քանի ժամով թողնել զամբիկների երամակի մեջ։ Եթե զամբիկին փորձահովատակին մոտեցնելուց հետո նույնիսկ հնարավոր չի լինում պարզել, թե նա հոսքի շրջանում է թե ոչ, կամ եթե հոսքի շրջանը չափից դուրս երկար է տևում, այդ դեպքում կատարում են զամբիկի սեռական օրգանների զննում։ Եթե պարզվեց, որ հեշտոցի լորձաթաղանթը հավասարապես վարդագույն է և թեթևակի ուռած, լորձի քանակը քիչ է և նա թափանցիկ է, արգանդի պարանոցը թուլացած է և բացված, իսկ ձվարանում հեշտությամբ շոշափվում է հասունացող ֆոլիկուլը, ապա կնշանակի, որ այդ զամբիկը հոսքի շրջանում է գտնվում։ Այդ զննումները իհարկե պետք է կատարի գոռանատնտեսական անձնակազմը։

Օվուլյացիա տեղի ունենալու ժամանակը մոտավոր հշտությամբ կարելի է որոշել ռեկտալ հետազոտության միջոց-

Նկ. 38. Զամբիկի ցանկության հարանաբերումը փորձահովատակի միջոցով։

ցով։ Ռեկտալ հետազոտում կարող են կատարել հատուկ դասընթացներում սովորած՝ փորձ ունեցող անձինք։ Ռեկտալ հետազոտում կատարելիս ձեռքն ուղիղ աղիքից տանում են ներս և շոշափելով ֆոլլիկուլը, գաղափար են կազմում օվուլյացիայի մասին։ Զուգավորման այն սիստեմը, որի դեպքում բացի փորձահովատակի միջոցով ստուգելուց, կատարում են նաև զամբիկների ռեկտալ հետազոտություն, պետք է համարել ամենից կատարյալը։

ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ՍԵՐՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Զամբիկների սերմնավորումը կատարում են երկու եղանակով՝ բնական և արհեստական։ Բնական սերմնավորումը կամ, ինչպես ընդունված է այն անվանել, զուգավորումը, մի քանի ձևով է կատարվում։

Ազոնամաշ զուգավորում։ Զուգավորման այս եղանակը լայնորեն կիրառվում է ձիերի կուլտուրական ախոռային եղանակով պահպանման ժամանակ։ Նրա էությունն այն է, որ արտադրող հովատակին զամբիկներից անջատ են պահում և հայտնաբերելով ցանկության եկած զամբիկներին, մոտեցնում են հովատակին և զուգավորում։

Զուգավորումը կատարվում է այդ նպատակի համար հատկացված տեղում։ Զուգավորումից առաջ զամբիկի պոչի վերևի մասը փաթաթում են բինտով, պարանոցին հագցնում են զուգավորման լանջափոկ (շլեյկա), որի փոկերը պարանոցից առջևի ոտքերի միջով տանում են դեպի ետ և ամրացնում ցատկիչ հոդերի մոտ։ Այս արվում է նրա համար, որ զամբիկը ի վիճակի չլինի հովատակին աքացի տալու։ Զուգավորման շլեյկայի (լանջափոկ) բացակայության դեպքում զուգավորման ժամանակ ձիապահը զամբիկի գլուխը պետք է բարձր պահի, որով զամբիկի ծանրության կենտրոնը կտեղափոխվի դեպի ետ և նա ի վիճակի չի լինի հովատակին խփելու։

Երկու ձիապահ, երկու կողմից զուգավորման երասան-

ներից բռնած, հովատակին մոտեցնում են զամբիկին և թույլ են տալիս կատարելու զուգավորում։

Զուգավորման ժամանակ ձիապահը շարունակում է զամբիկի սանձը պահել ձեռքին և կարիքի դեպքում նեցուկ է տալիս նրա կրծքին։ Նույն պահին, հարկ եղած դեպքում, պահում են հովատակին, բռնելով նրա առջևի ոտքերից՝ արմունկի հատվածում։ Ավագ ձիապահը, որի ձեռքերը նախապես խնամքով պետք է լվացված լինեն, անհրաժեշտության դեպքում հովատակին օգնում է զուգավորման ակտի ժամանակ՝ ուղղում նրա առնանդամը և տանում դեպի զամբիկի հեշտոցը։ Հովատակը պետք է մնա զամբիկի վրա մինչև սեռական ակտի լրիվ ավարտումը, այսինքն սերմնահեղությունը, որը կարելի է իմանալ հովատակի պոչարմատի բնորոշ շարժումից։ Եթե զուգավորումը լրիվ չի կատարվել, ապա 10—15 րոպեից հետո պետք է կրկնել այն։ Զուգավորումից հետո հովատակի առնանդամի վրա գոյ ջուր են ցանում և քիչ մաս ածելուց հետո տանում իրեն կացոցը։ Խորհուրդ չի տրվում զուգավորումից անմիջապես հետո կերակրել հովատակին։

Սովորաբար զամբիկին առաջին անգամ թողնում են զուգավորման նրա ցանկության երևան գալու 2-րդ օրը, որից հետո թողնում են օրը մեջ, այսինքն՝ 4-րդ, 6-րդ, 8-րդ օրերը, մինչև ցանկության վերջը, երբ զամբիկը հովատակին այլևս մոտ չի թողնում։ Զուգավորումը նշված կարգով կատարելու իմաստն այն է, որ սպերմատոզոիդները բեղմնավորելու ընդունակությունը պահպանում են առնվազն մեկ օր (24 ժամ), այնպես որ զամբիկին օրմեջ զուգավորելով, մենք ամբողջ ցանկության ընթացքում նրա բեղմնավորման համար ավելի մեծ հնարավորություն ենք ստեղծում։ Եթե ռեկտալ հետազոտության միջոցով մոտավոր կերպով որոշվում է օվուլյացիայի ժամանակը, ապա կարելի է զուգավորումների թիվը պակասեցնել։ Մեզ մոտ զամբիկների ստերջության հիմնական պատճառներից մեկն այն է, որ հաճախ ցանկության ամբողջ ընթացքում զամբիկին միայն մեկ անգամ են զու-

գավարման թողնում, կամ սերմնավորում արհեստական կերպով։

Հովատակի բեռնվածությունը զուգավորման սեզոնում կախված է նրա տարիքից, առողջությունից, պտղավետությունից, անհատականությունից (սեռական էներգիայից), կերակրումից և զուգավորման սեզոնի տևողությունից։ Զորավարեկան և ավելի բարձր տարիք ունեցող հովատակների միջին բեռնվածությունը սահմանում են 35—40 զամբիկ, հաշվելով, որ սեզոնի ընթացքում զուգավորումների քանակը կկազմի մոտ 175։ Ավելի արժեքավոր կամ բեղմնավոր հովատակների բեռնվածությունը հասցնում են 50—60։ Առաջին անգամ զուգավորման համար օգտագործվող հովատակներին տալիս են 15—25 զամբիկ, այն հաշվով, որ զուգավորումների թիվը սեզոնում 80-ից չանցնի։

Առողջ, չափահաս հովատակին հարկ եղած դեպքում կարելի է օրական երկու անգամ թողնել զուգավորման, այն պայմանով, որ 2 զուգավորումների ընդմիջումը 10 ժամից պակաս չլինի. 7—10 օրը մեկ հովատակին պետք է տալ անգիստ, այսինքն չթողնել զուգավորման։

Ցանկության տևողության և զուգավորումների վերաբերյալ տվյալները գրանցվում են հատուկ մատյանում։

Ձիարուծության առաջավորների փորձը ցույց է տալիս, որ զուգավորումից ավելի լավ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է ինչպես հովատակի, այնպես էլ զամբիկների նկատմամբ անհատական մոտեցում ունենալ՝ հաշվի առնել նրանց առանձնահատկությունները, հատկապես նրանց ներվային սիստեմի տիպը։ Ձեռնարաշ զուգավորումը լայնորեն կիրառվում է մեր սովխոզներում ու կոլտնտեսային ֆերմաներում, և գործի լավ կազմակերպման դեպքում ապահովում է հղիության բարձր տոկոսը։

Զուգավորման այս եղանակն ունի մի շարք դրական կողմեր, այն է. ա) հովատակի սեռական էներգիան ավելի խնայողաբար է օգտագործվում, որով երկարանում է նրա սահմային օգտագործման ժամկետը, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում նա զուգավորման սեզոնի ըն-

թացքում, ապատ զուգավորման հետ համեմատած, կրկնակի քանակությամբ զամբիկներ է զուգավորում. բ) խորացրած տոհմական աշխատանք տանելու ավելի մեծ հնարավորություններ են ստեղծվում և գ) սահմանափակվում է որոշ վարակիչ հիվանդությունների տարածման հնարավորությունը։

Ջոկային զուգավորում։ Զուգավորման այս եղանակը լայն կիրառում ունի երամակային ձիարուծության մեջ։ Նրա էությունն այն է, որ յուրաքանչյուր 20—25 զամբիկին ամրացնում են մի հովատակ։ Այս կերպ կազմած ջոկը թողնում են արոտ, որտեղ նա ամբողջ զուգավորման կամպանիայի ընթացքում դիշեր-ցերեկ գտնվում է երամակավարի հսկողության տակ։ Ջոկի հովատակն ինքը հայտնաբերում է ցանկություն ունեցող զամբիկներին և զուգավորում։

Ջոկային զուգավորումը կանոնավոր կերպով անցկացնելու համար անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ կանոններով.

1) Ուշադրությամբ հետևել, թե հովատակը որ զամբիկներին է ծածկել, և այդ դրանցել ջոկի գրքում։

2) Ջոկից հեռացնել այն զամբիկներին, որոնց հովատակն ամենևին չի ծածկում, և նրանց, որոնցից չի հեռանում։

3) Հետևել հովատակի առողջությանը և նրան օրական լրացուցիչ տալ 4—5 կգ վարսակ։

4) Եթե զամբիկները ծածկվելուց հետո չեն հղիանում և զուգավորվելուց հետո շարունակում են գալ ցանկության, ապա այդ դեպքում ջոկի հովատակին պետք է փոխել։

5) Ջոկը կոմպլեկտավորել այնպես, որ միաժամանակ շատ զամբիկներ ցանկության չգան։

Ոչ բոլոր հովատակներն են պիտանի ջոկային զուգավորման համար։ Ջոկային զուգավորման ժամանակ հովատակը պետք է ընդունակ լինի զուգավորման ամբողջ սեզոնի ընթացքում դիմանալու երամակային պահպանման պայմաններին, պահպանելու իր ուժերը, բուծածությունն ու պտղաբերությունը, նրանք պետք է ընդունակ լինեն իրենց պաշտպանելու զամբիկների հարձակումներից։

Ջոկային զուգավորումն անցկացնելու համար բոլորից հարմար են տեղական այն ցեղերի հովատակները, որոնք սովորաբար երամակային ձևով են պահվում։

Ջոկային զուգավորումը թեև ունի որոշ թերի կողմեր, ինչպես, օրինակ, հովատակի համեմատաբար ավելի ցածր բեռնվածությունը, սակայն այն լայն կիրառում ունի ՍՍՌՄ-ում։ Դրա պատճառն այն է, որ նա մեծ ծախսեր չի պահանջում և ապահովում է հղիության ամենաբարձր տոկոսը (85—100)։

Ձիաբուծության առաջավորները ջոկային զուգավորումը որոշ ձևափոխությամբ անցկացնելով ստանում են շատ բարձր էֆեկտ։ Նրանք զուգավորումը սկսում են վաղ գարնանը, հովատակին ամրացնելով մի քանի զամբիկ միայն և հետո աստիճանաբար նոր զամբիկներ են տալիս. այս եղանակը հնարավորություն է տալիս սեզոնի ընթացքում հովատակի բեռնվածությունը բարձրացնել 40—50 զամբիկի և ապահովել հղիության շատ բարձր տոկոսը։

Ցանկապատային զուգավորում։ Զուգավորման այս ձևի համանակ մի խումբ զամբիկների քշում են այդ նպատակի համար առանձնացված, ցանկապատված մի տեղ և նրանց մոտ թողնում են նշանակված հովատակը։ Երբ վերջինս ծածկում է մեկ-երկու զամբիկի, նրան տանում են ախոռ, իսկ զամբիկներին բաց են թողնում արածելու։ Զուգավորման այս եղանակի դեպքում անհրաժեշտ է տանել զուգավորված զամբիկների ճիշտ հաշվառում։

Ցանկապատային զուգավորումը կիրառում են երամակային ձիաբուծության մեջ, գլխավորապես այն դեպքում, երբ զամբիկները բոլորովին անվարժ (խամ) են, իսկ հովատակը պատկանում է կուլտուրական ցեղերին և բարձրարժեք է։

Ցանկապատային զուգավորման դեպքում հովատակի բեռնվածությունը զուգավորման սեզոնի ընթացքում կազմում է 30—35 զամբիկ։

Արհեստական սերմնավորում։ Արհեստական սերմնավորման նշանակությունը ձիաբուծության մեջ շատ մեծ է։ Նա

հնարավորություն է տալիս մեկ ծածկի ընթացքում ստացած սպերմայով սերմնավորել 3—7 գամբիկ, իսկ սպերման նոսրացնելու (ջրիկացնելու) դեպքում՝ 15—25 գամբիկ։ Հովատակից ստացած սպերման հնարավոր է լինում տեղափոխել բավականին հեռավոր վայրեր և նրանով սերմնավորել գամբիկներին։ Այս ամենն ավելի լայն հնարավորություններ են ստեղծում բարձրարժեք հովատակների օգտագործումը, նրանց բեղմնավորությունը բարձրացնելու և նպատակահարմար կերպով գույգերի բնաբուծություն կատարելու համար։

Արհեստական սերմնավորումը մեծ նշանակություն ունի որոշ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու տեսակետից։

Արհեստական սերմնավորման արդյունքները կախված են մեծ մասամբ նրանից, թե որքան ճիշտ են կիրառվում հրահանգով նախատեսված կանոնները։ Եթե գամբիկի ցանկությունը հայտնաբերվում է ճիշտ ժամանակին և սերմնավորումը կատարվում է ամենայն բարեխղճությամբ, ապա արհեստական սերմնավորման էֆեկտը կարող է լինել շատ արագ։

Ինչպես բնական, այնպես էլ արհեստական սերմնավորման դեպքում անհրաժեշտ է ընդունված հատուկ ձևով տանել սերմնավորման ճիշտ հաշվառում։

ՁՈՒԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Զուգավորման կամպանիայի անցկացման ժամկետները կախված են ձիաբուծության ձևից (կուլտուրական և երամային) և տվյալ վայրի կլիմայական պայմաններից։

Սովորաբար կուլտուրական ախոռային պահպանման դեպքում զուգավորման կամպանիան ավելի շուտ են սկսում։ Ներկայումս ընդունված են հետևյալ ժամկետները. ախոռային պահպանման պայմաններում ձիաբուծական սովխոզներում (դավոդներում) սկսում են փետրվարի 1-ից մինչև հուլիսի մեկը, ըստ որում Միության հյուսիսային շրջանների

համար այդ ժամկետը երկու շաբաթով երկարացվում է, այսինքն սկսվում է և ավարտվում փոքր-ինչ ուշ. երամակային պահպանման պայմաններում՝ ապրիլի 15—20-ից մինչև օգոստոսի մեկը. կոլտնտեսային մասսայական ձիաբուծության մեջ զուգավորման կամպանիան սկսվում է մարտի 1-ից և վերջանում է հուլիսի 15-ին։

Ձիաբուծության առաջավորների փորձը ցույց է տալիս, որ զուգավորման կամպանիան ավելի վաղ ժամկետներում անցկացնելու դեպքում կարելի է ավելի լավ արդյունքների հասնել։

Զուգավորման կամպանիայի կազմակերպումը։ Զուգավորման կամպանիայի ճիշտ կազմակերպումը և անցկացումը վճռական նշանակություն ունի ձիերի գլխաքանակի ընդլայնացված վերարտադրման գործում։

Յուրաքանչյուր կոլտնտեսություն և սովխոզ պետք է ունենա զուգավորման իր տարեկան պլանը, որը կազմելիս պետք է նկատի ունենա հետևյալը.

1. Ձիաբուծության զարգացման պետական պլանը, իսկ տոհմային տնտեսություններում՝ նաև զույգերի ընտրության պլանը.

2. Ձիերի ցեղայնության և որակի բարձրացումը.

3. Պայքարը ստերջության դեմ.

4. Սերմնավորման եղանակը և յուրաքանչյուր տմսում զուգավորման ենթակա զամբիկների քանակը՝ ըստ ամիսների և զուգավորման ժամկետների.

5. Զամբիկների ամրացումը յուրաքանչյուր արտադրող հովատակին.

6. Սպասարկող անձնակազմի պահանջը.

7. Անհրաժեշտ ինվենտարի և շենքերի պահանջը։

Հովատակների օգտագործման պլանը կազմելիս պետք է հիշել, որ ձեռնաքաշ զուգավորման կայանի գործողության շառավիղը 3—5 կմ-ից, իսկ արհեստական սերմնավորման կայանինը՝ 5—7 կմ-ից ավելի չպետք է լինի։

Զուգավորման ենթակա են սերունդ տալու ընդունակ 3 տարեկանից բարձր բոլոր զամբիկները։ Սերունդ տալու

ընդունակ յուրաքանչյուր զամբիկի նկատմամբ, անասնաբուժական զննումից հետո, կազմվում է արձանագրություն, որը ներկայացվում է ՄՏ կայանին ի հաստատություն։

Մինչև զուգավորման կամպանիայի սկսվելը, անհրաժեշտ է անցկացնել բոլոր արտադրող-հովատակների և զամբիկների զոոտեխնիկական-անասնաբուժական զննում. հայտնաբերված հիվանդ ձիերին անհրաժեշտ է առանձնացնել բուժման համար։ Միևնույն ժամանակ հարկավոր է պարզել առաջին անգամ զուգավորման ենթակա զամբիկների քանակը, և զուգավորման ժամկետները սահմանել ելնելով նրանց զարգացման աստիճանից և ծնի ժամկետների պլանավորումից։

Զուգավորման կամպանիայի նախապատրաստման շրջանում անհրաժեշտ է բարելավել սերմնավորման ենթակա ձիերի կերակրման, խնամքի և պահպանման պայմանները, այն հաշվով, որ մինչև կամպանիայի սկսվելը, ինչպես արտադրող հովատակները, այնպես էլ զամբիկներն ունենան առհմային կոնդիցիա, այսինքն գտնվեն սնվածության այնպիսի աստիճանում, որն ամենից ավելի բարենպաստ է բարձրորակ սերունդ ստանալու համար։

Նույն շրջանում պետք է որոշել տնտեսություններում եղած բոլոր հովատակների որակը՝ ինչպես նրանց առհմային արժեքի, այնպես էլ բարձրորակ սպերմա ստանալու տեսակետից։

Անհրաժեշտ է զուգավորման կամպանիայի ընթացքում նաև կատարել արտադրող-հովատակի սպերմայի ստուգում։

Մինչև զուգավորման կամպանիայի սկսվելը հարկավոր է կարգի բերել զուգավորման տեղը, անհրաժեշտ ինվենտարը և հովատակների ախոռը։ Միաժամանակ արտադրողների համար պետք է առանձնացնել պահանջվող կերը։ Զուգավորման պլանը պետք է քննարկել արտադրական խորհրդակցություններում այն հաշվով, որ բրիգադավարը և ձիապահը իմանան, թե իրենց զամբիկները ո՞ր հովատակներով պետք է զուգավորվեն։

Զուգավորման պլանի կատարման համար պատասխա-

նատու են՝ կոլտնտեսության նախագահը, ֆերմայի վարիչը, զուգավորման կամ սերմնավորման կայանի վարիչը, բրիգադիրը, ձիապահը և զամբիկներին աշխատեցնող կոլտնտեսականը (ձիավարը)։

Տոհմական և առհասարակ զոոտեխնիկական աշխատանքի ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է տանել հաշվառում ընդունված ձևերով։

ԱՐՏԱԴՐՈՂ ՀՈՎԱՏԱԿՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Հովատակներին պետք է կերակրել այնպես, որ նրանք զուգավորման ամբողջ շրջանում գտնվեն տոհմային կոնդիցիայում, այսինքն այնպիսի վիճակում, որն առավել չափով նպաստի նրանցից սերունդ ստանալուն։

Արտադրող հովատակներին պետք է կերակրել այն հաշվով, որ նրանց հատկացված ռացիոնը լիովին ապահովի օրգանիզմի պահանջը բոլոր այն սննդանյութերի նկատմամբ, որոնք անհրաժեշտ են ինչպես նրա կյանքի պահպանման, այնպես էլ սպերմայի նորմալ արտադրանքի համար։ Բացի դրանից, արտադրողների ռացիոնալ կերակրման միջոցով կարելի է երկարացնել նրանց օգտագործման տևողությունը։

Փորձերը ցույց են տվել, որ արտադրողների օրվա ռացիոնի մեջ բացի լավորակ խոտից և վարսակից, պետք է մտցնել նաև ոլոռ, կորեկ, կանաչ կեր, որի շնորհիվ սպերմայի քանակը ավելանում է ու որակը բարձրանում։

Լավ արդյունք են տալիս նաև ձկան կամ մսի ալյուրը, թեփը, կարմիր գազարը, կաթը, հավի ձուն։ Մի խոսքով, պետք է ձգտել, որ ռացիոնն իր մեջ պարունակի անհրաժեշտ քանակությամբ լիարժեք սպիտակուցներ, հանքային նյութեր և վիտամիններ։

Զուգավորման շրջանում հովատակներին հարկավոր է այնպես կերակրել, որ 100 կգ կենդանի քաշին ընկնի մոտ 2 կերի միավոր և 100—120 գ սպիտակուց։ Օրինակ, 450—500 կգ կենդանի քաշ ունեցող հովատակն օրվա ըն-

թացքում պետք է ստանա 9—10 կերի միավոր՝ 0,90—1 կգ մարսելի սպիտակուցի պարունակությամբ։

Միջին քաշ ունեցող հովատակներին օրական պետք է տալ մինչև 10—12 կգ խոտ, ընդ որում լավ է, որ այդ քանակի կեսը կազմի մարգագետնային խոտը, իսկ մյուս կեսը՝ ցանովի ֆիթեոնածաղկավորներից ստացված խոտը (առվույտ, կորնգան, երեքնուկ և այլն)։ Եթե բացի խոտից հովատակները ստանում են նաև թարմ կանաչ խոտ (նոր հարած), ապա շոր խոտի քանակը կարելի է զգալի չափով կրճատել։ Մասուրային շրջանում կանաչ կերի քանակը կարելի է հասցնել մինչև 25 կգ։ Ավելի լավ է հովատակներին ուղղակի թողնել սրոշ ժամանակ ցանովի խոտադաշտերում արածելու։ Արևի ճառագայթները, մաքուր օդը, կանաչ կերը և ազատ շարժումները չափազանց բարերար ազդեցություն են ունենում արտադրողի առողջության և սեռական ֆունկցիայի վրա։ Հովատակների համար հատիկային կերերից լավագույնը համարվում է վարսակը, սակայն առանց սպերմայի որակը գցելու, նրա մի մասը կարելի է փոխարինել ջարդված կորեկով, գարով կամ նույնիսկ եգիպտացորենով։ Ինչպես վերևում ասացինք, խտացրած կերերից լավ է պարբերաբար տալ նաև ցորենի թեփ, որը բացի սննդարար լինելուց, հիանալի ազդեցություն է թողնում մարսողության վրա։

Սպերմայի արտադրման վրա շատ բարերար ազդեցություն են թողնում կենդանական ծագում ունեցող կերերը։ Հովատակին զտած կաթ կարելի է տալ օրական 2—8 կգ, իսկ արյան, ձկան և մսի ալյուր՝ 200—500 գ։

Հովատակին տրվելիք բոլոր տեսակի կերերը պետք է բարձրորակ լինեն։

Արտադրող հովատակների ռացիոնը կազմելիս միշտ պետք է նկատի ունենալ նրանց անհատական հատկությունները՝ սնվածությունը, առողջությունը, տարիքը, սեռական ակտիվությունը, ինչպես նաև օգտագործման աստիճանը և սպերմայի որակը։

Հովատակի սպերմայի քանակը և որակը կախված է ոչ

միայն նրա կերակրումից, այլև խնամքից և ճիշտ օգտագործումից։ Դրա համար անհրաժեշտ է հովատակներին ապահովել խնամքի և պահպանման համապատասխան պայմաններով, նրանց պետք է մաքրել օրական երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, մաքրել միջանցքում կամ դրսում, բայց ոչ կացոցում, հովատակների սմբակներն ամեն օր հատուկ երկաթե կեռի միջոցով մաքրել և դոլ ջրով լվանալ։

Արտադրող հովատակին ամեն օր պետք է ման ածել՝ անցնելով 8—9 կմ, ըստ որում վարգուն և հեծնելու հովատակներին պետք է քշել արագ, մինչև նրանց թեթև քրտնելը, իսկ վերջում քայլով, այն հաշվով, որ մինչև կացոց հասնելը նրանց քրտինքը չորացած լինի։ Ծանրաբարշ ձիերին ման են ածում 6—7 կմ տարածության վրա լծած վիճակում, քիչ բեռով ինչպես քայլով, այնպես և վարգով։ Այս հարցում անհրաժեշտ է յուրաքանչյուր հովատակի նկատմամբ ունենալ անհատական մոտեցում, այսպես՝ կան հովատակներ, որոնք ավելի լավ են գնում զուգավորման, եթե նրանց ման են ածում ոչ թե զուգավորումից առաջ, այլ հետո։ Բանող ուղղության հովատակներին կարելի է չափավոր կերպով օգտագործել գյուղատնտեսական թեթև աշխատանքների համար։

Արտադրող հովատակների խնամքը պետք է լավ լինի ամբողջ տարվա ընթացքում, իսկ նրանց զուգավորման նախապատրաստումը պետք է սկսել սերմնավորման կամպանիայից $1^1/_2$—2 ամիս առաջ։

ՀՂԻՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Արտաքինից զննելով հղիությունը հնարավոր է որոշել միայն նրա երկրորդ շրջանում, երբ զամբիկների փորը զգալի չափով մեծացած է լինում և հնարավոր է դառնում սաղմը դրսից շոշափել։

Մինչդեռ հղիության ավելի վաղ որոշումը հնարավորություն է տալիս իր ժամանակին հայտնաբերել չհղիացած զամբիկներին, նրանց կրկին սերմնավորել և դրանով իսկ

պայքարել ստերջության դեմ և մյուս կողմից հղի զամբիկների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ։

Հղիության որոշման ամենահասարակ և մատչելի ձևը հանդիսանում է ռեկտալ եղանակը։ Այս եղանակով հղիությունը որոշելու համար համապատասխան մասնագետը, ձեռքը ընդունված ձևով մշակելուց հետո, զգուշությամբ ներս է տանում զամբիկի ուղիղ աղիքից և սեռական օրգանները շոշափելով, որոշում է հղիությունը։

Ռեկտալ եղանակով հնարավոր է որոշել հղիությունը սաղմի 30—35 օրական հասակից սկսած։ Որոշման ճշտությունը շատ մեծ է. փորձված մասնագետները կարողանում են համարյա թե անվրեպ կերպով որոշել զամբիկների հղիությունը։

Գործի լավ կազմակերպման համար անհրաժեշտ է աշխատող մասնագիտական կադրեր ունենալ, որոնք պատրաստված լինեն այդ նպատակի համար կազմակերպված հատուկ դասընթացներում։

Հղիությունը կարելի է որոշել նաև հեշտոցը հետազոտելու միջոցով։ Այսպես՝ հղի զամբիկների հեշտոցը ավելի սեղմված՝ շոր է լինում, հեշտոցի և արգանդի վզիկի լորձաթաղանթը լինում է գունատ, շոր, լորձը՝ պինդ, մածուցիկ, ճարպանման. հեշտոցային հայելին կամ ձեռքը հեշտոցից ներս տանելիս զգացվում է դիմադրություն, արգանդի վզիկը սեղմ փակված է լինում, լորձով ծածկված և կենտրոնից թեքված է լինում դեպի աջ կամ ձախ, և ներքև։ Այս բոլոր նշանները ակնհայտ կերպով արտահայտված են լինում մոտ 1 ամսվա հղիության ժամանակ և տևում են մինչև նրա վերջը, այնպես որ սաղմի հասակը որոշելու տեսակետից և իր մատչելիության տեսակետից այս մեթոդը զիջում է ռեկտալ մեթոդին։ Կան հղիության վաղ որոշման և այլ եղանակներ, որոնք ավելի բարդ են, իսկ որոշման ճշտության տեսակետից զիջում են ռեկտալ մեթոդին։

ՀՂԻ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ

Հղի զամբիկին պատշաճ կերպով խնամելը և կերակրումը բարձրորակ սերունդ ստանալու առաջին նախապայմանն է։

Կերակրման ու խնամքի վատ պայմաններում ոչ միայն հնարավոր են հղի զամբիկների վիժումները, այլև մարուկները լինում են թերի զարգացած՝ փոքր, թույլ և հետագայում մինչև անգամ լավ կերակրման պայմաններում հնարավոր չէ նրանցից աճեցնել բարձրորակ ձիեր։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետը և ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն 1943 թ. մայիսի 12-ի որոշումով հողային օրգաններին պարտավորեցրին ամեն տարի օգոստոս-հոկտեմբեր ամիսների շրջանում անցկացնել զուգավորվող բոլոր զամբիկների հղիության ստուգում՝ բոլոր հղի զամբիկներին տալով հղիության վկայագրեր։

Հղի զամբիկների կերակրումը պետք է կազմակերպել այնպես, որ նրանք հղիության ամբողջ շրջանում գտնվեն ստհմական կոնդիցիայում, այսինքն ոչ նիհար լինեն, ոչ էլ շատ ճարպակալած։ Հղիության շրջանում զամբիկների վատ կերակրումը ոչ միայն բացասաբար է անդրադառնում պտղի զարգացման վրա, այլև այդ դեպքում զամբիկները հյուծվում են, որի հետևանքով ծնելուց հետո նրանց կաթնատվությունը և աշխատունակությունը ցածր է լինում։

Չնայած այս ամենին, զամբիկներին կոլտնտեսություններում հղիության շրջանում թույլ են կերակրում, կամ կերակումն ուժեղացնում են վերջին 1—1½ ամիսների ընթացքում։ Փորձերը ցույց են տվել, որ անհրաժեշտ է հղիության 4—5 ամսից սկսած, ուժեղացնել զամբիկների կերակրումը։ Միջին քաշ ունեցող բանող զամբիկների ռացիոնին մոտավորապես պետք է ավելացնել օրական 2—2,5 կերի միավոր, ընդ որում յուրաքանչյուր կերի միավոր պետք է պարունակի 75—85 գ մարսելի սպիտակուց։

Առհասարակ հղի զամբիկների ռացիոնը պետք է հա-

բուսատ լինի լիարժեք սպիտակուցներով, հանքային նյութերով և վիտամիններով։

Հանքային նյութերի և վիտամինների պակասության հետևանքով հաճախ զամբիկները ստերջ են մնում կամ տեղի են ունենում վիժումներ, ծնվում են թուլակազմ մարդիկներ։

Մոտ 500 կգ քաշ ունեցող հղի զամբիկները պահանջ են զգում օրական մոտավորապես 60—70 գ կալցիումի և 35—40 գ ֆոսֆորի։

Մսուրային շրջանում սպիտակուցների, հանքային նյութերի և վիտամինների հարուստ աղբյուրը հանդիսանում է բարձրորակ մարգագետնային, ինչպես նաև հացաղգիների և թիթեռնածաղկավորների խառնուրդից բաղկացած ցանովի խոտը։ Զուտ թիթեռնածաղկավորներից բաղկացած խոտ (առվույտ, երեքնուկ և այլն), մանավանդ եթե նրա որակն այնքան էլ լավ չի, մեծ քանակությամբ կերցնելու դեպքում կարող է առաջացնել մարսողության խանգարում։

Զամբիկներին օրական միջին հաշվով պետք է տալ յուրաքանչյուր 100 կգ քաշին՝ 3 կգ խոտ։ Խոտի մի մասը կարելի է փոխարինել գարնանացան հացահատիկների ծղոտով, որը լավ է հղիության առաջին 5—6 ամիսների ընթացքում։ Հղի զամբիկների համար լավագույն խտացրած կեր են՝ վարսակը, թեփը և քուսպը։ Հարկ եղած դեպքում վարսակի մի մասը կարելի է փոխարինել հատիկային այլ կերով։ Մսուրային շրջանում, քանի որ զամբիկներն արոտային կերից չեն օգտվում, խորհուրդ է տրվում տալ նրանց հյութալի կեր՝ ճակնդեղ և մանավանդ գազար՝ օրական 5—10 կգ։ Արմատապտուղները կերցնելուց առաջ պետք է լվանալ և մանրել։

Հղիության վերջին քառորդում լավ է դադարեցնել սիլոսով կերակրելը։

Լավ արդյունք է տալիս հղի զամբիկներին ծլեցրած հատիկով և դրոժավորած կերով կերակրելը։ Դրոժավորած խտացրած կերը պետք է տալ օրական 2 կգ չափով։

Հղի ձիերին տրվելիք բոլոր տեսակի կերերը պետք է

բարձրորակ լինեն. բորբոսնած, փթած, նեխած, սառած և առհասարակ փչացած կերը հաճախ վիժումներ է առաջացնում։ Արոտային շրջանում հղի զամբիկներին պետք է ապահովել բարձրորակ կանաչ կերով։ Արոտային կերակրումը չափազանց բարենպաստ ազդեցություն է ունենում զամբիկների հղիության վրա։ Նրանց պետք է հատկացնել լավագույն արոտամասերը։

Ծնելուց մեկ-երկու շաբաթ առաջ պետք է դադարեցնել թիթեռնածաղկավոր բույսերից բաղկացած խոտով (երեքնուկ, առվույտ, կորնգան) կերակրելը և կարելի է տալ միայն մարգագետնային խոտ։ Խտացրած կերերից լավ է ռացիոնում թողնել միայն հնդաց վարսակը և թեփը. ծնելուց 2 օր առաջ ռացիոնը կրճատվում է 1/3 չափով։

Հղիության երկրորդ շրջանում, ստամոքսը միանգամից չծանրաբեռնելու համար, լավ է զամբիկներին կերակրել օրական 4 անգամ։ Ջրել հարկավոր է այնքան անգամ, որքան անգամ կերակրում են ձիուն։ Ծնելուց մի քանի օր առաջ զամբիկներին պետք է զգուշությամբ ջրել, այսինքն յուրաքանչյուր անգամ տրվելիք ջրի քանակը 8—10 լ ավելի չպետք է լինի և ջրի ջերմաստիճանը հավասար լինի 8—9°. այդ շրջանում լավ է օրական ջրել 3 անգամ։

Հղիության նորմալ ընթացքի տեսակետից մեծ նշանակություն ունի ոչ միայն զամբիկների ճիշտ կերակրումը, այլև նրանց խնամքը։ Հղի զամբիկների մաշկն ամեն օր խնամքով պետք է մաքրել խոզանակով և շորով, իսկ տարվա տաք եղանակներին լողացնել ոչ շատ սառը ջրով։ Եթե զամբիկին չեն աշխատեցնում և նա չի արածում, ապա անհրաժեշտ է ամեն օր (բացառությամբ շատ բուք, սառնամանիք օրերի) դուրս բերել զբոսանքի։ Հնարավոր վիժումներից խուսափելու համար, առանձնապես զգույշ պետք է լինել հղի զամբիկներին աշխատեցնելիս։

Անհրաժեշտ է ախոռը միշտ պահել մաքուր, հատակը ծածկած չոր ցամքարով և աշխատել, որ կացոցներում օդը միշտ մաքուր լինի։

ԾԻՆԸ ԵՎ ՆՐԱ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ելնելով զամբիկների սերմնավորման ժամկետներից, կազմում են ծնի պլանը, հաշվելով, որ զամբիկի վերջին սերմնավորման օրվանից մինչև ծինը կազմում է միջին հաշվով 11 ամիս։ Զամբիկների հղիության տևողությունը թեև միջին հաշվով կազմում է 11 ամիս, սակայն առանձին զամբիկների մոտ կարող են զգալի տատանումներ լինել։

Հղիության տևողության վրա ազդում են արտաքին պայմանները՝ առանձնապես կերակրումը։ Դիտողությունները ցույց են տվել, որ թերսնման պայմաններում հղիության շրջանը 8—10 օրով երկարում է։ Հղիության տևողությունը որոշ չափով կախված է նաև ժառանգականությունից, պտղի սեռից և այլն։

Մնից 10—15 օր առաջ հղի զամբիկներին պետք է տեղափոխել ծինը ընդունելու համար հատկացված կացոցները, իսկ եթե զամբիկները, ինչպես այդ ընդունված է տոհմային տնտեսություններում, պահվում են առանձին կացոցներում, ապա ծինը հենց նույն կացոցումն էլ կարելի է ընդունել։ Ծինն ընդունելու համար հատկացված կացոցները պետք է նախօրոք խնամքով ախտահանել, ապահովել ցամքարով։ Զամբիկներին առանձին կացոցները տեղափոխելիս ելնում են ոչ միայն ծնի ենթադրվող ժամկետից, այլև արտաքին նշաններից։ Մոտալուտ ծնի ամենաակնհայտ նշանն է՝ կրծի մեծանալը. սկզբում մեծանում է միայն կուրծը, ավելի ուշ մեծանում են նաև պտուկները, որոնք դառնում են ավելի ուռուցիկ և նրանց ծայրերը թեքվում են դեպի մի կողմ։ Իսկ ծնից անմիջապես առաջ կուրծն ավելի առաձգական է դառնում և պտուկների ծայրերին երևում են խիժի կաթիլներ։ Սովորաբար նույն ժամանակ ուռչում են զամբիկների արտաքին սեռական գործարանները և նրանցից աննշան չորթ է հոսում։ Որոշ զամբիկների մոտ նկատվում են որովայնի և ազդրերի այտուցներ։

Հղի զամբիկների վրա մշտական հսկողություն ունենալու համար անհրաժեշտ է սահմանել մշտական հերթապահու-

թյուն, հիշելով այն, որ ծինը մեծ մասամբ տեղի է ունենում գիշերը։ Ցանկալի է ծնի համար հատկացրած կացոցներին կից ունենալ հատուկ սենյակ՝ ջուր տաքացնելու, կերը նախապատրաստելու և մանկաբարձական գործիքներ պահելու համար։

Երկունքի նշանները հետևյալներն են. զամբիկը հրաժարվում է կերից, անհանգստանում է, հաճախակի նայում է իր փորին, մերթ պառկում է, մերթ կանգնում, ման է գալիս, խիստ քրտնում և այնպիսի գիրք է ընդունում, ինչպես միզելու ժամանակ։

Եթե ծինը նորմալ է տեղի ունենում, ապա օգնության կարիք չի զգացվում, միայն հարկավոր է հսկել և դժվարությունների դեպքում օգնություն ցույց տալ։ Սովորաբար զամբիկների ծննդաբերությունը տևում է 30—40 րոպե. եթե վերջինս շատ է երկարում, կամ պտուղն անկանոն է գալիս, պետք է անհապաղ դիմել անասնաբուժական անձնակազմի օգնությանը։

Նորմալ ծնի ժամանակ պտուղը գալիս է առջևի ոտքերով, որոնց դաստակային մասի վրա հենված է լինում գլուխը։ Պտուղի դուրս գալու ժամանակ անմիջապես պետք է շուրջպտղային թաղանթը հեռացնել։ Պորտալարը մեծ մասամբ ինքն իրեն կտրվում է, իսկ եթե այդ տեղի չի ունենալ, պետք է պորտալարը մտրուկի փորից 3—5 սմ տարածության վրա կապել ախտահանած թելով և կապած տեղից 2 սմ ներքև կտրել ախտահանած մկրատով։ Կտրելուց հետո պորտալարի ծայրը ախտահանում են յոդով կամ այլ ախտահանիչ նյութերով (կրեոլին, լիզոլ)։

Մտրուկի բերանը, ականջները և ռունգները մաքրում են լորձից, որից հետո նրա մարմինը շփում են փափուկ ծղոտի ոլորով և թողնում են, որ մայրը լիզի։ Խորհուրդ չի տրվում մտրուկի մարմնին ցանել ալյուր կամ աղ. դա կարող է միայն մաշկը ավելորդ տեղը գրգռել։ Այս ամենից հետո մտրուկին ոտքի են կանգնեցնում և մոտեցնում մորը՝ ծծեցնելու։

Ինից հետո պետք է հետևել, որ ընկերքն ընկնի, որը

սովորաբար տեղի է ունենում 1—1,5 ժամ հետո, միայն երբեմն մնում է մինչև 6 ժամ։ Իսկ եթե ընկերքի ընկնելը շատ ուշանում, ապա այդպիսի դեպքերում անհապաղ պետք է դիմել անասնաբուժական անձնակազմի օգնությանը։ Ընկերքն ընկնելուց անմիջապես հետո, գոլ ջրով պետք է լվալ զամբիկի շերքը, կուրծը, հետևի ոտքերը և պոչը, որից հետո ընկերքը և թաց ցամքարը դուրս տանել ու այրել, կամ թաղել գետնի մեջ, իսկ կացոցում փռել թարմ և չոր ցամքար։

Ծնելուց անմիջապես հետո զամբիկը լինում է շատ հոգնած, քրտնած, հետևաբար կարող է շատ հեշտությամբ մրսել։ Նրա ծնողական օրգաններն այդ ժամանակ նմանվում են բաց վերքի, որտեղ հեշտությամբ կարող են ներթափանցել հիվանդություն առաջացնող միկրոօրգանիզմներ։ Այս բոլորն ասում են այն մասին, որ նոր ծնած զամբիկներին պետք է խնամել ամենամեծ հոգատարությամբ։ Շենքը պետք է լինի առանց միջանցիկ քամիների, մաքուր և ապահովված ցամքարով։ Ծնելուց 2—3 ժամ հետո զամբիկին հարկավոր է տալ գոլ ջուր և քիչ քանակությամբ թեփից պատրաստած շփոթ։ Սովորաբար զամբիկին կերակրում են ծնելուց 5—6 ժամ հետո։ Այդ ժամանակ ամենալավ կերը համարվում է բարձրորակ խոտը և ցորենի թեփից պատրաստած շփոթը։ Հետագա մի քանի օրերի ընթացքում կերակրման նույն ռեժիմը շարունակել, միայն թեփը տալ ոչ թե շփոթի տեսքով, այլ ուղղակի թրջած գոլ ջրով։

Արմատապտուղներ կարելի է տալ ինչպես ծնելուց առաջ, այնպես էլ ծնելուց հետո։ Լավ է նաև կերցնել թարմ հարած կանաչ խոտ, որը տրվում է օրական մեկ անգամ։ Առաջին 5—6 օրերի ընթացքում նոր ծնած զամբիկներին լավ է շափավոր կերակրել և միայն մի շաբաթից հետո անցնել նորմալ ռացիոնին։

ԾՄՄԱՅՐ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ ԵՎ ԽՆԱՄՔԸ

Ծծմայր զամբիկների կերակրումն ու խնամքը պետք է այնպես կազմակերպել, որ նրանք պահպանեն իրենց նորմալ

կոնդիցիան (բանող և տոհմային), միաժամանակ մեծ քանակությամբ կաթ արտադրեն, որը հսկայական նշանակություն ունի մատղուկի նորմալ աճման ու զարգացման համար։

Կերակրման լավ պայմաններում զամբիկների կաթնատվությունը բավականին բարձր է լինում, այսպես, վարգուները առաջին 2—3 ամիսների ընթացքում օրական միջին հաշվով տալիս են (մատղուկը ծծում է) 10—12 կգ կաթ, իսկ ծանրաքաշ զամբիկները ավելի շատ՝ 14—18 կգ։ Կաթնատիպ շրջանի 6 ամիսների ընթացքում վարգուն և ծանրաքաշ տիպի մատղուկները ծծում են մոտ 2000—3500 կգ կաթ։ Այս տեղից էլ կարելի է եզրակացնել, որ կաթի գոյացման համար զամբիկներին անհրաժեշտ է տալ դդալի քանակությամբ լրացուցիչ կեր։

Կաթի գոյացման համար բանող ձիու սովորական ռացիոնին օրական պետք է ավելացնել հետևյալ քանակությամբ կերեր (աղյուսակ 1)։

Աղյուսակ 1

Կաթի գոյացման համար ծծվող զամբիկներին տրվելիք լրացուցիչ կերի քանակը

	Մատղուկների կաթով կերակրումը					
	Առաջին եռամսյակի ընթացքում		2-րդ եռամսյակի ընթացքում		Երրորդ եռամսյակի ընթացքում	
	Մատղուկի վրա	Ցանկալիությունը մեկ գլխաքանակ	Մատղուկի վրա	Ցանկալիությունը մեկ գլխաքանակ	Մատղուկի վրա	Ցանկալիությունը մեկ գլխաքանակ
Բանող զամբիկներ	3,0	0.33	2,2	0,22	—	—
Տոհմական զամբիկներ						
ա) վարգուն և հնձկան	3,7	0,37	3,0	0,30	2,0	0,20
բ) ծանրաքաշ	5,3	0,53	4,3	0,43	3,0	0,30

Ծծվող զամբիկներին անհրաժեշտ է համահավասար կերպով կերակրել այնպիսի ռացիոններով, որոնք հարուստ

են լիարժեք սպիտակուցներով, հանքային նյութերով և վիտամիններով։

Ինչպես վերևում ասվեց, ծնելուց հետո, առաջին օրերին անհրաժեշտ է զամբիկին համեմատաբար պակաս կերակրել, տալով նրան չափավոր քանակությամբ խոտ, 1,5—2,5 կգ թեփ կամ մանրած վարսակ՝ շփոթի-խաշիլի ձևով, հետո աստիճանաբար կերերի քանակն ավելացնել և ծնելու 6—8 օրը՝ հասցնել լրիվ ռացիոնին։

Եթե հնարավորություն կա զամբիկներին արածացնելու, ապա նրանց հիմնական սնունդը պետք է կազմի արոտային կերը։ Արոտային կերակրումը չափազանց բարերար ազդեցություն է թողնում զամբիկի վրա և նպաստում է մեծ քանակությամբ կաթի գոյացմանը։ Չնայած դրան, արոտային շրջանում զամբիկներին պետք է լրացուցիչ կերպով տալ հատիկ (վարսակ) 1,5 մինչև 3 կգ չափով, իսկ եթե արոտը վատ է, ապա լրացուցիչ կերպով տրվում է նաև խոտ։

Մսուրային շրջանում հիմնական կերը համարվում է բարձրորակ թիթեռնածաղկավոր խոտը (առվույտ, վիկ, կորնգան, երեքնուկ), որի մի մասը լավ է փոխարինել բարձրորակ մարգագետնային խոտով։ Այդպիսի խոտն իր մեջ պարունակում է զգալի քանակությամբ սպիտակուցներ, հանքային նյութեր և վիտամիններ։ Ծծմայր զամբիկներին լավ է շտալ կոպիտ կերեր՝ ծղոտ, մղեղ, բայց խոտի պակասության դեպքում կարելի է տալ քիչ քանակությամբ գարնանացան հացահատիկների հարդ (դարման)՝ խառնած վարսակի հետ։

Խտացրած կերերից ամենալավը համարվում է վարսակը։ Օգտավետ է նաև զամբիկին տալ օրական 1—2 կգ բուսպ և 1,5—4 կգ թեփ։

Մսուրային շրջանում շատ օգտակար է կերցնել նաև հյութալի կերեր, այն է՝ գազար, ճակնդեղ և կարտոֆիլ՝ օրական 8—12 կգ. բարձրորակ սիլոս կարելի է տալ 5—8 կգ ոչ ավելի։ Հանքային նյութերից ամեն օր պետք է տալ 20—30 գրամ աղ։

Եթե ծիներ տեղի է ունեցել արոտային շրջանում, այդ

դեպքում 8—9 օր զամբիկին պետք է պահել ախոռում և դրանից հետո միայն թողնել արոտ։ Մսուրային շրջանից արոտային շրջանի անցումը հարկավոր է կատարել աստիճանաբար, հակառակ դեպքում, ինչպես զամբիկը, այնպես էլ մարուկը կարող են մարսողության խանգարում ստանալ։

Ծծմայր զամբիկների խնամքը պետք է բարձր հիմքերի վրա դրված լինի։ Նրանց կացոցները միշտ պետք է լինեն մաքուր, ցամքարը թարմ ու չոր, նրանց մաշկը ամեն օր խնամքով պետք է մաքրել և, եթե զամբիկը չի արածում, կարելի է մարուկի հետ դուրս թողնել ման գալու։

Մնելուց 15 օր անց միայն թույլ է տրվում զամբիկներին աշխատեցնել թեթև աշխատանքներում։

ՄՏՐՈՒԿՆԵՐԻ ԱՃԵՑՈՒՄԸ

Բարձրորակ բանող և տոհմային ձիեր ստանալու համար անհրաժեշտ է մարուկներին աճեցնել ճիշտ, այսինքն նպատակադիր եղանակով։

Մատղաշների աճեցումը նպատակադիր է կոչվում այն դեպքում, երբ նախապես նպատակ է դրվում ստանալ որոշակի տիպի և որակի ձի։ Այդ խնդրի իրագործումը սերտորեն կապված է զոոտեխնիկական դիտության և առաջավոր փորձի նվաճումները լայնորեն արտադրության մեջ մտցնելու հետ։

Միչուրինյան բիոլոգիան ապացուցում է, որ բույսերի և կենդանիների կողմից կյանքի պայմանների ընթացքում ձեռք բերած հատկությունները կարող են ժառանգաբար փոխանցվել սերնդին։

Դա հնարավորություն է տալիս մեզ արտաքին պայմանների ազդեցության տակ փոխել գոյություն ունեցող ձևերը մեր ցանկացած ուղղությամբ։ Կենդանու օրգանիզմի վրա ազդող ամենաուժեղ ֆակտորները հանդիսանում են՝ կերակրումը, խնամքը և մարզանքը։ Բայց այդ պայմաններն իրենց ամենամեծ ազդեցությունն են ունենում կենդանու փոքր հասակից, երբ նա ընդունակ է աճելու և զարգանալու։

Սաղմնային շրջանում պտղի (սաղմի) համար մոր օրգանիզմը հանդիսանում է արտաքին միջավայր, հետևաբար պտղի վրա կարելի է ազդել միայն մոր օրգանիզմի միջոցով։

Հղի զամբիկներին հղիության ամբողջ շրջանում կերակրման և խնամքի լավ պայմաններում պահելու դեպքում նրանցից ստացված մտրուկները կլինեն խոշոր, ամրակազմ և առողջ։ Եթե հղիության ընթացքում զամբիկը կերակրման ու խնամքի վատթար պայմաններում է գտնվում, ապա պտուղը լավ չի զարգանում և մտրուկը ծնվում է թերզարգացած (փոքր, թույլ կառուցվածքով), որը լրիվ չի վերանում, էթե մինչև անգամ ամբողջ հետարգանդային շրջանում մատղաշը կերակրման ու խնամքի բարենպաստ պայմաններում է գտնվում։ Եթե մտրուկը արգանդային շրջանում լավ է զարգացել և ծնվել է միանգամայն նորմալ վիճակում, սակայն հետո, իր աճի զարգացման ամբողջ ընթացքում, կամ մինչև անգամ միայն որոշ շրջանում կերակրման և խնամքի վատ պայմանների մեջ է, ապա նրանից բարձրարժեք կենդանի չի ստացվի և նա այս կամ այն աստիճանի թերզարգացած կլինի։ Այստեղից պետք է անել այն հետևությունը, որ սկսած ծնված օրվանից մինչև լրիվ աճն ու զարգացումը մատղաշներին պետք է ապահովել իրենց հասակի պահանջներին համապատասխան կերակրման, խնամքի և պահպանման անհրաժեշտ պայմաններով։

Աճի ու զարգացման շրջանը հարկավոր է ավելի լրիվ օգտագործել կենդանու մեջ ցանկալի տնտեսապես-օգտավետ հատկություններ զարգացնելու համար։

Որպես կանոն ընդունված է մտրուկներին կերակրման կաթնային շրջանում դաստիարակել մոր տակ՝ ծծեցնելու միջոցով։

Բարեհաջող ծնի դեպքում մտրուկը շուտով փորձեր է անում ինքնուրույն կերպով մոր կուրծը գտնելու, այդ ժամանակ պետք է նրան օգնություն ցույց տալ։ Սովորաբար մտրուկին առաջին անգամ թողնում են մորը ծծելու՝ ծնվելուց մոտ մեկ ժամ անց։ Նոր ծնած զամբիկների առաջին օրերի կա-

թը (խիժը) ըստ իր բաղադրության խիստ կերպով տարբերվում է սովորական կաթի բաղադրությունից և մարուկի համար հանդիսանում է անփոխարինելի կեր։ Մարուկը առաջին ամսվա ընթացքում ծծում է մորը շատ հաճախ՝ օրական մինչև 30—40 անգամ։ Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գամբիկների կաթնատվությունը բավականին բարձր է. այսպես, վարգուն և հեծնելու գամբիկների կաթնատվությունն առաջին 6 ամիսների ընթացքում կազմում է 1800 կգ, իսկ օրվա միջին կիթը՝ 11 կգ։ Ծանրաքարշ գամբիկներն ավելի շատ կաթ են տալիս. նրանց կաթնատվությունն առաջին ամիսների ընթացքում հասնում է օրական 16—20 կգ։ Այստեղից կարելի է անել այն եզրակացությունը, որ ծծմայր գամբիկներին կերակրելիս նրանց ըստ էության պետք է դիտել որպես կաթնատու անասունների, և ըստ այնմ կազմակերպել նրանց կերակրումը։

Ծնելուց 5—7 օր հետո գամբիկին մարուկի հետ միասին պետք է թողնել գրոսանքի, սկզբում՝ 20—30 րոպեով, իսկ հետո՝ ավելի երկար ժամանակով։ Շուրջ, անձրևային և քամի օրերին խորհուրդ չի տրվում մարուկներին դուրս թողնել։

Իրենց կյանքի առաջին տարում մարուկները շատ արագ են զարգանում և մեծ աճ են տալիս, օրինակ, ըստ պրոֆ. Պ. Դորրինինի տվյալների, վարգունների ցեղին պատկանող մարուկների օրական աճն առաջին 3 ամիսների ընթացքում կազմում է 1—1,2 կգ։ Ծանրաքարշ ցեղերի մարուկների օրական աճն ավելի ևս բարձր է լինում և միջին հաշվով կազմում է 1,4—1,6 կգ։ Այստեղից կարելի է եզրակացնել, թե որքան մեծ է ծծմայր գամբիկների լավ կերակրման նշանակությունը մարուկների նորմալ զարգացման համար։ Գամբիկների կաթնատվությունը ցածր լինելու դեպքում մարուկը վատ է աճում և նրա մազափոխությունը ավելի ուշ է կատարվում։ Թեև մոր կաթը մարուկի համար հանդիսանում է ամենալավ կերը, բայց ավելի լավ աճելու համար երկրորդ ամսից սկսած նրան պետք է սովորեցնել խտացրած կերերի։ Սկզբում մարուկին կերակրում են իր

մոր մասուրից, իսկ խտացրած կերին սովորելուց հետո՝ առանձին։ Մտրուկներին կերակրում են արոտավայրում՝ ցանկապատված տեղում, իսկ ախոռում՝ հատուկ այդ նպատակի համար հատկացված կացոցում։ Որպես լրացուցիչ կեր մտրուկներին պետք է տալ ճզմած վարսակի և թեփի խառնուրդ՝ սկսել 200 գրամից և հասցնել այն, մորից անջատելու հասակում, 2—3,5 կգ։

Մտրուկներին պետք է մորից անջատել 6 ամսական հասակից ոչ շուտ։

Մտրուկներին ծծից կտրում են ոչ թե աստիճանաբար, այլ միանգամից։ Մտրուկներին մորից անջատելուց հետո նրանց նորմալ աճը պահպանելու համար անհրաժեշտ է հատկացնել լավագույն արոտավայրերը (եթե անջատումը կատարվում է արոտային շրջանում) և լրացուցիչ կերպով տալ նրանց հետևյալ կերերը. ճզմած վարսակ կամ դարի՝ 3—4 կգ, խոտ՝ 3—5 կգ, թեփ՝ 0,5 կգ և դաշար՝ 2 կգ։

Մտրուկներին ծծից կտրելու համար լավ է նրանց բաժանել հետևյալ խմբերի. 1) փետրվարին և մարտին ծնվածներ, 2) ապրիլին և մայիսին ծնվածներ և 3) հունիս և հուլիս ամիսներին ծնվածներ։

Մտրուկներին լավ է անջատել մորից կեսօրին, լրացուցիչ կերակրման ժամանակ։ Անջատման ենթակա մտրուկներին թողնում են ախոռում և նրանց տալիս են խոտ, իսկ նրանց մայրերին ախոռից հեռացնում։ Անջատումից հետո անհրաժեշտ է խիստ հսկողություն ունենալ, որ մտրուկները չկռվեն և հարկ եղած դեպքում նրանց հանգստացնեն քորելով կամ փաղաքշելով։ Ծծից կտրած մտրուկներին 2—3 օր պահել ախոռում։ Չորրորդ օրվանից՝ առավոտյան լրացուցիչ կեր տալուց հետո մտրուկներին երկու ձիապահների հսկողությամբ թողնել արոտի, լավ է մտրուկների երամակի մեջ թողնել մեկ ծեր ստերջ զամբիկ կամ ծեր ամորձահատած արու ձի։ Սովորաբար 2—3 օրից հետո մտրուկներն արդեն հանգիստ կերպով արածում են։

Բացի արոտային կերից, մտրուկներին պետք է տալ մանրած դաշար, վարսակ կամ դարի, թեփ և քիչ քանակու-

Բյամբ խառ։ Մարուկների կերակրման այս եղանակը պետք է պահպանել մինչև ուշ աշուն՝ ցերեկը նրանց թողնել արածելու, իսկ գիշերը պահել ախոռում։ Այդ ժամանակվանից էլ և արու մարուկներին պետք է առանձին արածացնել։

Ուշ աշնանային ցրտերի և անձրևների ժամանակ դադարեցնել մարուկներին արոտ դուրս թողնելը և անցնել մսուրային պահպանման։

Մսուրային շրջանում մարուկների կերակրումը կազմակերպելիս պետք է նկատի ունենալ, որ նրանք զրկվում են այնպիսի սննդարար կերերից, ինչպիսիք են կաթը և արոտի կանաչը, որը հաճախ հաշվի չեն առնում անասնապահները և մսուրային շրջանում մատղաշներին անբավարար են կերակրում. դրա հետևանքով նրանց աճը խիստ դանդաղում է և այդպիսով նրանք մնում են թերզարգացած։

Մսուրային շրջանում մատղաշների հիմնական կերը հանդիսանում է բարձրորակ խոտը. բացի խոտից կարելի է նաև տալ քիչ քանակությամբ զարնանացան հացահատիկների հարդ։ Բացի կոպիտ կերերից անհրաժեշտ է մարուկներին տալ նաև խտացրած կեր (վարսակ, գարի, թեփ և այլն), ինչպես նաև հյութալի կերեր։ Վերջիններից ամենից օգտակարը պետք է համարել գազարը, որը հարուստ է վիտամիններով. կարելի է տալ նաև արմատապտուղներ և բարձրորակ սիլոս։

Անհրաժեշտ է մարուկներին տալ աղ՝ օրական 15—20 գ չափով, կամ քարաղի ձևով։ Խտացրած կերերը տալիս են հավասարաչափ բաժիններով — օրական 3 անգամ, իսկ կոպիտ կերերը — 4 անգամ, ըստ որում երեկոյան տրվելիք կերաբաժինը ավելի շատ պետք է լինի։

Մսուրային շրջանում մարուկների կերակրումն ու խնամքը կարելի է տանել հետևյալ հաջորդականությամբ. 1— առավոտյան ժամը 6-ին մատղաշներին ջրել, տալ կոպիտ և խտացրած կերերի առավոտյան բաժինը, կամ տալ մանրած գազար՝ հարդի հետ խառնած. կերի մնացորդը մաքրել, և ախոռը մաքրելուց հետո աղբը դուրս հանել։ 2— ժամը 10-ին երկրորդ անգամ ջրել, տալ կոպիտ և խտացրած կե-

բերի նշանակված բաժինը, որից հետո մատղաշներին թողնել դուրս՝ զբոսանքի. 3— ժամը 15-ին զբոսանքից վերադառնալուց հետո տալ կոպիտ կեր. 4— ժամը 20-ին մատղաշներին նորից ջրել և տալ խտացրած կերի մնացած մասն արմատապտուղների հետ միասին, որից հետո դիշերվա համար տալ կոպիտ կեր. 5— ժամը 24-ին հերթապահ ձիապահը տալիս է կոպիտ կերերի վերջին մնացորդը։

Տոհմային մատղաշներին հարկավոր է ավելի լավ կերակրել։ Սովորաբար նրանց ավելի երկար են թողնում մոր տակ։ Բանող տիպի մատղաշներին կերակրելիս կարելի է առաջնորդվել հետևյալ սխեմայով (կիլոգրամով).

Կենդանի քաշը . . .	200	250	300	350	400
Կերի միջոց . . .	5,0	5,7	6,3	6,7	7,2
Մարսելի սպիտակուց . . .	0,5	0,57	0,63	0,60	0,58

Այս նորմաները միայն ընդհանուր ցուցումներ են տալիս մատղաշների սննդանյութերի պահանջի մասին. դրանց հիման վրա յուրաքանչյուր կոնկրետ դեպքում զոոտեխնիկները պետք է մշակեն կերակրման սխեմաները և կերային ռացիոնները։

Երկրորդ գարնանից մեկ տարեկան մատղաշներին թողնում են արածելու։ Լավորակ արոտը նրանց համար անփոխարինելի կեր է հանդիսանում։ Մաքուր օդում շարժումները նպաստում են մկանների, ինչպես նաև սրտի և թոքերի զարգացմանը և կենդանուն առհասարակ դարձնում են ավելի առողջ ու ամրակազմ։ Բարձրորակ արոտում մատղաշները ստանում են համարյա թե բոլոր իրենց զարգացման համար անհրաժեշտ սննդանյութերը։ Այդ հասակում մատղաշ ձիերը արածելիս օրական ուտում են 30—40 կգ կանաչ։ Չնայած այս ամենին, լավ է, բացի արոտում ստացած կերից, մատղաշներին օրական լրացուցիչ տալ 2—3 կգ խտացրած կեր (վարսակ, գարի, թեփ)։

Երկրորդ ձմռան ընթացքում մատղաշների ռացիոնում կոպիտ կերերը, ինչպես նաև արմատապտուղները (դաղար, շաքարի ճակնդեղ) ու սիլոսը կարող են ավելի մեծ տեղ գրավել։

Բարձրորակ ձիեր աճեցնելու համար, բացի կերակրումից, մեծ նշանակություն ունի նաև մատղաշների խնամքն ու մարզանքը։

Նորածին մարուկներին հենց առաջին օրերից պետք է սովորեցնել մարդուն վստահել և բարեհեզ լինել։ Դրան կարելի է հասնել միայն մարուկների հանդեպ ուշադիր և փաղաքշական վերաբերմունք ցույց տալով։

Մարուկի հետ կապիտ վարվելիս նա դառնում է վախկոտ և ավելի դժվար է լինում նրան հետագայում աշխատանքի սովորեցնել։

Լավ է, դեռ մոր տակ եղած ժամանակ, մարուկին սովորեցնել նոխտայի, իսկ մորը մաքրելու ժամանակ նաև՝ խոզանակին։

Մորից անջատելուց հետո մարուկներին պետք է խնամել այնպես, ինչպես մեծահասակ ձիերին։

Ամենից առաջ մատղաշին պետք է սովորեցնել նոխտայի, եթե այդ մինչև մորից անջատելը չի կատարվել։ Դրա համար մարուկներին արածելու և զբոսանքի պետք է դուրս հանել նրա զլխին հագցրած նոխտայից բռնած. արոտից կամ զբոսանքից վերադառնալիս նույնպես պետք է նոխտայից բռնած տանել տնտոր։ Մարուկներին ստիպանաբար են սովորեցնում մաքրելու։ Սկզբում քորում են և շփում այն տեղերը, որտեղ մարուկն ինքը չի կարող քորել (պարանոցը, կուրծքը)։

Մարուկներին հարկավոր է մաքրել խոզանակով և երբեք չսովորեցնեն քերոցին (դաշավին)։ Ռունգները (քթանցքերը), շրթունքները, աչքերը և առհասարակ նուրբ, անմաշ տեղերը խոզանակով չպետք է մաքրել, այլ հարկավոր է գործածել խոնավ սրբիչ կամ սպունգ։ Մարուկների մարմինը մաքրում են նույն հաջորդականությամբ, ինչպես չափահաս ձիերին։

Խորհուրդ է տրվում պարբերաբար բարձրացնել մարուկների ոտքերը, թխկթխկացնել սմբակներին, և ներբանները մաքրել փայտի կտորով, այս ամենը նախապատրաստում է

մարուկին ապագայում պայտելու ժամանակ հնազանդ լինելու։

Եթե մարուկներն ամբողջ օրը դտնվում են արոտավայրում, ապա նրանց մարմինը խնամքով մաքրել հնարավոր չի լինում։ Այդպիսի դեպքերում բավական է օրական մեկ անգամ անմաղ մասերը սրբել խոնավ սպունդով, ոտքերը և մարմինը խնամքով մաքրել խոզանակով ու շորով։ Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ոտքերի և սմբակների գրության վրա։ Որպեսզի սմբակները այլանդակ կերպով չաճեն, անհրաժեշտ է ամեն ամիս մարուկների սմբակների ներբանային եղրը դորփիով հավասարեցնել (կլորացնել)։ Սմբակներն ամեն օր պետք է կեղտից, գոմաղբից մաքրել, իսկ տաք եղանակներին՝ ջրով լվանալ։

Մասուրային շրջանում մորից անջատած (ծծից կտրած) մարուկների համար հատկացրած ախոռը պետք է լինի տաք և լուսավոր։ Սովորաբար մի կացոցում տեղավորում են 2 մարուկ, որի համար այնտեղ տարքավորում են երկրորդ շարժական մասուրը։

Առաջին ձմռան ընթացքում, եթե ախոռում առանձին կացոններ չկան, մարուկներին կարելի է պահել 6—8 դլխից բաղկացած խմբերով, միայն այն պայմանով, որ յուրաքանչյուր գլխին հասնող հատակի տարածությունը 6—7 մ² պակաս չլինի։

Կացոցները կամ առհասարակ ախոռն ամեն օր պետք է գոմաղբից մաքրել, մարուկների տակը փռել շոր և մաքուր ցամքար ու շենքն օդափոխել ամեն օր։ Լավ է ամռանը մարուկներին, բացի մաքրելուց, լողացնել։

Ձմռանն ախոռը մաքրելու ժամանակ մարուկներին այնտեղից դուրս են անում հատուկ ցանկապատած տեղ (վարդկ), որտեղ նրանք հնարավորություն ունեն ազատ շարժվելու։

Կոլտնտեսությունները մորից անջատված մարուկներին արտադրական բրիգադներից փոխադրում են (հանձնում) ֆերմաներ։ Երբ կոլտնտեսությունը ձիա-

բուծական ֆերմա չունի, այդ դեպքում մատղաշներին խնամելու համար առանձնացվում է հատուկ բրիգադ, իսկ մարուկները, թվով քիչ լինելու դեպքում, նրանց խնամքը դրնում են հատուկ ձիապահի վրա։

Մեկ ձիապահին միջին թվով ամրացնում են 10—12 մարուկ։ Հաճախ լավ արդյունք է ստացվում, երբ մարուկներին աճեցնում են կին ձիապահները։ Նրանք իրենց մեջ վերաբերմունքով ապահովում են հնազանդ և բարեհեղ ձիերի աճեցումը։

Երկրորդ ամեհվանից սկսած՝ վարգուններին և առհասարակ լծելու ձիերի մատղաշներին սովորեցնում են նաև առանձին մնալուն և ապա լծելուն։

Լծասարքը հագցնելով մարուկին, սանձից բռնած մարդ են ածում, և այս կրկնում են մի քանի օր, մինչև նա լծասարքին սովորի, որից հետո սովորեցնում են երասաններին։

Մարուկին երասաններին սովորեցնում է բրիգադավարը ձիապահի մասնակցությամբ. լծասարքը հագցրած՝ մարուկին սանձից բռնելով դուրս են բերում երկու մարդ, իսկ բրիգադիրը երասանները բռնած գնում է հետևից։ Թեթևակի կերպով ձգելով մեկ կամ մյուս երասանը, նա ստիպում է մարուկին փոխել իր ընթացքի ուղղությունը. այսպես շարունակում են մի քանի օր, մինչև մարուկը երասաններին սովորի, որից հետո նրան լծում են։ Սովորաբար այդ նպատակի համար օգտագործում են թեթև սահնակներ կամ սայլակներ, որոնց կողաբեղինները (օգլոբլի) պետք է երկար լինեն։

Լծած մարուկին սկզբում մարդ են ածում սանձից բռնած, իսկ մեկ ուրիշը հետևից է գնում՝ ձեռքին պահած երասանները։ Այսպիսի մի քանի դասերից հետո մարդն արդեն նստում է սահնակին և զգուշությամբ քշում։

Հեծնելու ձիերին սովորեցնում են 1,5 տարեկան հասակում։ Այստեղ ևս սկզբում մատղաշին սովորեցնում են սանձին. դրանից հետո նրա վրա ամրացնում են փորքաշը, սկզբում թույլ կերպով, որը հետո ձգում են։ Փորքաշին սո-

վորելուց հետո մատղաշի մեջքին դնում են թեթև թամբ, առանց ասպանդակների, որին սովորելուց հետո՝ ամրացնում են և ասպանդակները։

Մեջքի վրա բեռ տանելուն վարժեցնում են հետևյալ կերպ. եթե ձին ցածրահասակ է, ապա մեկը դնում է ձիու ձախ կողմից և ձեռքով սեղմում է թամբին, ատաղձանաբար ավելացնելով ճնշումը, իսկ եթե մատղաշը բարձրահասակ է, ապա թամբի վրա ամրացնում են ավազով լի պարկ, ընդ որում ավազի քանակը պարկում ատաղձանաբար ավելացնում են։

Ձիուն հեծնում են մեջքին բեռ կրել սովորեցնելուց հետո։ Այդ կատարում են այսպես՝ երկու ձիապահ ձիու աջ և ձախ կողմերից սանձից բռնում են և թեթև քաշ ունեցող (մինչև 40 կգ) պատանին հեծնում է ձիուն. դրանից հետո սկսում են ձիուն մոտ ածել, իսկ հեծյալը զգուշությամբ ղեկավարում է ձիու ընթացքը։

Մատղաշներին սովորեցնելիս պետք է ցուցաբերել մեծ համբերատարություն. բղավոցները և մտրակի հարվածները միայն կարող են գործին վնասել։ Սովորեցնելու ժամանակ անշնորհք և անթույլատրելի վերաբերմունք ունենալու հետևանքով, քիչ չեն դեպքերը, երբ ձին վատ սովորություններ է ձեռք բերում և բնավորությամբ կամակոր է դառնում։ Դրանից խուսափելու համար մատղաշների վարժեցման գործի նկատմամբ պետք է ունենալ լուրջ մոտեցում, և այս աշխատանքը հանձնարարել գործին լավ ծանոթ հմուտ մարդկանց։

ՁԻԵՐԻ ՏՐԵՆԻՆԳԸ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

Տոհմային գործում ձիերի ընտրությունը և զույգերի ընտրությունը ճիշտ կերպով կատարելու համար անհրաժեշտ է տալ նրանց տոհմային գնահատականը, որի համար այլ ցուցանիշների հետ միասին հաշվի են առնում արտադրողականությունը։

Ինչպես հեծնելու, այնպես էլ լծելու բանող ձիերի արտ-

տաղրոզականությունը որոշում են փորձարկման միջոցով, որի համար ձիերին նախօրոք նախապատրաստում են՝ վարժեցնում են ու մարզում։ Փորձարկմանը նախապատրաստվող ձիերի մարզումը կոչվում է տրենինգ, իսկ մարզողը՝ տրեներ։

Կուլտուրական ցեղերի ձիերի տրենինգը սկսում են մեկուկես տարեկան հասակից, երբ նրանց աճն ու զարգացումը դեռ չի ավարտվել։ Նախքան տրենինգը, մտրուկները նախօրոք վարժեցված են լինում սանձին, լծելուն կամ հեծնելուն։

Հեծնելու ձիերին մարզում են հեծած վիճակում, իսկ վարդուններին և ծանրաբարշներին՝ լծած։

Տրենինգի ընթացքում ոչ միայն մարզվում են ձիերի մկանները, այլ օրգանիզմում առաջանում են խոշոր փոփոխություններ։ Տրենինգի հետևանքով ձիու մոտ առաջանում են պայմանական ռեֆլեքսներ, իսկ կենտրոնական ներվային համակարգի ներգործության շնորհիվ նրա օրգանիզմում ավելի կատարյալ ձևով է ընթանում նյութափոխանակությունը, գազափոխանակությունը։ Որպես արդյունք այս բոլորի, մարզված ձին ընդունակ է դառնում ավելի քիչ էներգիա ծախսելով ավելի մեծ աշխատանք կատարելու։ դրա հետ միասին, նա ավելի ուշ է հոգնում, ավելի աղատ է շնչում՝ արյան շրջանառության և շնչառական օրգանների ավելի կատարյալ աշխատանքի շնորհիվ։

Տրենինգի ընթացքում ձիու օրգանիզմից աստիճանաբար անհետանում է կուտակված ամբողջ ավելորդ ճարպը, որը վայրը փոքրանում և դառնում է ավելի հավաք, մկաններն ընդունակ են դառնում ավելի մեծ աշխատանք կատարելու։ Քանի որ ձիերի տրենինգը սկսվում է նրանց վաղ հասակում, երբ դեռ օրգանիզմի աճը չի դադարել, ապա այն բարենպաստ կերպով է ազդում հյուսվածքների և օրգանների զարգացման վրա։

Տրենինգի ժամանակ սիստեմատիկ կերպով կատարվող շարժումներից (մարզանքից) բացի բավականին մեծ նշանակություն ունի նաև մտրուկների կերակրումը։

Տրենինգի ընթացքում ձիերի ռացիոնում պետք է մտցնել ընտիր խոտ և զգալի չափով ավելացնել վարսակի քանակը։

Մատղաշ ձիերին առաջին անգամ փորձարկում են երկու տարեկան հասակում, որից հետո նրանց նորից մարզում են և փորձարկում 3 տարեկան հասակում։ Ջամբիկները հիմնականում իրենց գնահատականը ստանում են երեք տարեկանից հետո և գնում են զուգավորման, իսկ հովատակները փորձարկվում են մի տարի ևս և 4 տարեկան հասակում ստանում իրենց գնահատականը։ Բարձր մրցանակ շահած առանձին հովատակներին գլխավորապես (վարգուններին) փորձարկում են նաև չորս տարեկան դառնալուց հետո։

Հեծնելու ցեղերին պատկանող ձիերի փորձարկումը կատարվում է արշավների միջոցով. այն անձը, որը փորձարկման ժամանակ ձիու վրա նստած արշավում է, կոչվում է «ժոկեյ»։

Ժոկեյից պահանջվում է մեծ հմտություն և փորձ, որը ձեռք է բերվում տարիների ընթացքում։ Ժոկեյների քաշը երկու տարեկան հովատակների համար պետք է հավասար լինի 57 կգ, երեք տարեկանի համար՝ 59 կգ և չորս տարեկանի համար՝ 61 կգ։ Ջամբիկների համար ժոկեյի քաշը համապատասխանորեն 2-ական կգ պակաս պետք է լինի։

Հեծնելու ձիերի փորձարկումը հիմնականում կատարվում է հետևյալ տարածությունների վրա.

2 տարեկաններին՝ 1000, 1200 և 1500 մետր,
3 տարեկաններին՝ 1500, 1600, 1800 և 2400 մետր,
4 տարեկաններին՝ 1800, 2400, 3200 մետր։

Վարգուն ձիերը փորձարկվում են լծած վիճակում՝ վագրով, այսինքն՝ նրանց քշում են վարգով, այլ ոչ թե արշավով, նրանց այդ նպատակի համար պատրաստված հատուկ երկանի սայլակներին (կաչալկա) լծելով։

Վարգուններին երկու տարեկան հասակում փորձարկում են մինչև 1600 մետր տարածության վրա, 3 տարեկան հա-

սակում՝ 1600 և 2400 մետրի վրա, իսկ 4 տարեկաններին՝ 1600, 2400 և 3200 մետր տարածության վրա։

Ծանրաքարշ ձիերին փորձարկում են լծած վիճակում՝ նրանց բեռ քաշելու մաքսիմալ հնարավորությունները պարզելու համար. բացի դրանից նրանց փորձարկում են որոշ ծանրության բեռը (2—3 տոննա) քայլով և վարգով ավելի շուտ տեղ հասցնելու տեսակետից։

Փորձարկումները կազմակերպված ձևով անցկացնելու համար կառուցում են հատուկ արշավավայրեր՝ հիպոդրոմներ։ Այսպիսի հիպոդրոմներ կան Մոսկվայում, Լենինգրադում և Միության մի շարք այլ խոշոր քաղաքներում։ Երևանը ևս ունի իր նորակառույց հիպոդրոմը, որն ըստ իր մեծության, դիրքի և հնարավորությունների կարելի է լավ հիպոդրոմների շարքը դասել։

ԳԼՈՒԽ 5.

ՁԻԵՐԻ ԵՐԱՄԱԿԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Երամակային ձիաբուծության էությունն այն է, որ ձիերը ամբողջ տարին դոնվում են արոտում և սնվում արածելու միջոցով։

Երամակային ձիաբուծությունը ՍՍՌՄ-ում մեծ նշանակություն ունի։ Նա հնարավորություն է տալիս օգտագործելու Միության տափաստանային և լեռնային շրջաններում եղած այն տարածությունները, որոնք առայժմ գյուղատնտեսական կուլտուրաների մշակման համար չեն օգտագործվում։ Բացի դրանից ձիերի երամակային պահպանումն ունի այն առավելությունը, որ այս պայմաններում աճեցրած ձիերի ինքնաքաշները լինում է շատ ցածր, իսկ իրենք՝ ձիերը շատ ամրակազմ, դիմացկուն և սակավապահանջ են լինում։

Երամակային ձիաբուծությամբ զբաղվում էին դեռ շատ հին ժամանակներից սկսած, բայց նրա ձևերը և եղանակները աստիճանաբար փոփոխության են ենթարկվել։ Նախա-

սեղլյուցիան շրջանում երամակային պահպանման պայմաններում ձիերն ամբողջ տարվա ընթացքում արոտավայրերում իրենք էին հայթայթում իրենց կերը, չստանալով լրացուցիչ կերեր։ Այդօրինակ պահպանման պայմաններում հնարավոր չէր լինում աճեցնել բարձրորակ ձիեր, բացի այդ տեղի էին ունենում մեծ թվով անկումներ։ Սովետական իշխանության օրոք աստիճանաբար երամակային ձիաբուծության պայմանները բարելավվեցին, իսկ առաջավոր պետձիաբուծությունները և կոլտնտեսային ֆերմաներն արդեն անցնում են կուլտուրական երամակային պահպանման։

Ձիերի երամակային պահպանումը լայնորեն կիրառվում է Ղազախական ՍՍՌ-ում, Կիրգիզական ՍՍՌ-ում, Բաշկիրական և Բուրյաթ-Մոնղոլական ԱՍՍՌ-ում, Ալթայի և Կրասնոյարսկի երկրամասերում, Հյուսիսային Կովկասում և մասամբ՝ Անդրկովկասում։ Հայաստանում ոչ լրիվ երամակային ձևով ձիերին պահում են Իջևանի, Շամշադինի և Նոյեմբերյանի շրջաններում։

Երամակային ձիաբուծությամբ կարելի է զբաղվել տարբեր գոնաներում՝ տափաստանային, նախալեռնային և լեռնային։

Երամակային ձիաբուծության համար ոչ բոլոր ցեղի ձիերն են պիտանի, օրինակ, կուլտուրական այնպիսի ցեղեր, ինչպիսիք են հեծնելու զտարյուն կամ ծանրաքարշ ձիերը, լավ չեն կարող դիմանալ երամակային պահպանման պայմաններին և կարճ ժամանակամիջոցում կորցնում են իրենց լավ հատկությունները։

Երամակային ձևով սովորաբար պահում են մեր տեղական հայրենական ցեղերը, ինչպես, օրինակ՝ դոնի, կարաբինյան, ղազախական, բաշկիրական և այլն։

Յուրաքանչյուր ձիաբուծական տնտեսությունում, որտեղ կիրառվում է ձիերի երամակային պահպանումը, բնական կերային տարածությունները բաժանում են ձմեռային, գարնանային, ամառային և աշնանային արոտավայրերի։ Լեռնային շրջաններում ձմեռային արոտավայրերը գտնվում են ամենացածր ստորոտներում, իսկ ամառը երամակները

բարձրանում են բարձրալեռնային արոտավայրերը։ Երամակի մեջ ընդգրկված ձիերի քանակը տարբեր է լինում՝ լեռնային վայրերում 60—70 գլուխ, իսկ տափաստանային վայրերում՝ մինչև 100—120 գլուխ։

Երամակային տնտեսություններում բոնիտիրովկայից (տոհմային դնահատումից) հետո բոլոր ձիերին բաժանում են 5 խմբի. ա) տոհմային առաջին, բ) տոհմային երկրորդ, գ) երամակի վերանորոգման (ռեմոնտի) ձիեր, դ) վերանորոգման համար թույլ տրված ձիեր և ե) խոտան։ Երամակները կոմպլեկտավորում են ըստ առանձին սեռահասակային խմբերի, օրինակ՝ զամբիկների, մատղաշների և այլն։

Երամակները ղեկավարում են երամակավարները, որոնք մեծ հմտությամբ արածացնում են ձիերին, կազմակերպում են նրանց ժամանակին ջրելն ու խնամքը։

Փորձված երամակավարներն առանձին ուշադրություն են դարձնում ձիերի դիրացմանը՝ գարնանային և մանավանդ աշնանային արածացման շրջանում։

Երամակային պահպանման պայմաններում ամենից հաճախ կիրառում են ձիերի զուգավորման երամակային ձևը։ Ջոկերը սովորաբար կազմում են ապրիլի 20-ի մոտերքը։ Միջին հաշվով յուրաքանչյուր 20—35 զամբիկին ամրացնում են մեկ հովատակ՝ հաշվի առնելով նախկին տարիներում նրանից ստացված սերնդի որակը, էքստերյերը, ինչպես նաև հովատակի և զամբիկների ծագումը։ Հովատակների կռվելուց խուսափելու համար ջոկերը միմյանցից առնվազն կես կիլոմետր հեռավորության վրա պետք է արածեն։

Զուգավորման կամպանիան վերջանալուց հետո հովատակներին ջոկերից հեռացնում են, իսկ զամբիկներին համախմբում են՝ նորից կազմելով երամակներ։ Երամակային պահպանման դեպքում մտրուկներին մայրերից անջատում են աշնանը կամ գարնանը։

Եթե մտրուկների աճեցման համար կան պայմաններ՝ տաք շենքեր, բավարար քանակությամբ կոպիտ և խտացրած կերեր, այդ դեպքում մտրուկների աշնանային անջատումն ավելի լավ կլինի, նա կնպաստի մատղաշների լավ զար-

գացմանը։ Այն դեպքում, երբ այդ պայմանները չկան, անջատման ամենալավ ժամանակը գարունն է։ Մարուկները մայրերի հետ միասին լինելով, ավելի լավ են կարողանում օգտվել ձնատակի բուսականությունից (խոտից)։ Գարնան մոտերքին մարուկները բավականին մեծացած են լինում, ինքնուրույն կերպով հայթայթում են իրենց կերը և աստիճանաբար անտարբեր են դառնում իրենց մայրերի նկատմամբ։

Մեկ տարեկան հասակում պարտադիր կերպով էգ մարուկներին ջոկում են արու մարուկներից և արածեցնում են առանձին։ Կազմում են մեկ տարեկան ու երկու տարեկան արու և էգ մարուկների երամակներ, որոնց արածեցնում են առանձին-առանձին։

Երամակային ձիարուծության մեջ պարտադիր է կերի հատուկ ապահովագրական պաշարի առանձնացումը՝ ամեն մի գլխի համար 10—12 ցենտներ խոտից ոչ պակաս։ Այդ հնարավորություն կտա ձիերին լրացուցիչ կերակրել արոտավայրերի սաղցապատման, բուրի և խիստ սառնամանիքների պայմաններում։

Երամակային ձիարուծության մեջ կարևորագույն միջոցառում է հանդիսանում ախոռների, բաղանների, սրահների, քամիներից պաշտպանված տեղերի և այլ հասարակ ու էժանագին շենքերի շինարարություններ՝ այնտեղ ձիերին վատ եղանակներին պատսպարելու, տոհմական հովատակներին պահելու, շատ հյուծված, թուլացած ձիերին կազդուրելու և լավացրած մարուկներին տեղավորելու համար։

Ավելի բարձրորակ ձիեր ստեղծելու համար առաջավոր տնտեսություններում, ինչպես, օրինակ՝ բնկ. Բուդյոննու և Առաջին հեծյալ բանակի անվան պետձիարուծարաններում անցել են կուլտուրական երամակային պահվածքի ձևին, որի էությունը կայանում է նրանում, որ բացի արածելուց, ինչպես մայրական կազմը, այնպես էլ մարուկները ստանում են խոտ և հատիկային կեր։ Բացի այդ, տարվա որոշ ամիսներին մատղաշներին և արժեքավոր մեծահասակ ձիերին դիշերները պահում են ախոռներում, արոտի թողնելով

գերեկվա որոշ ժամերին։ Կուլտուրական երամակային պահպանման դեպքում նաև կիրառում են մատաղաշների տրենինգ (վարժեցում), որը լավ կերակրման հետ միասին, մի կողմից բարերար ազդեցություն է թողնում նրանց աճի և զարգացման վրա, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է տալիս փորձարկման միջոցով (արշավներ, վազքեր) հայտնաբերելու ձիերի արտադրողականությունը, հետևապես ավելի ճիշտ տալ նրանց տոհմային գնահատականը։

Կուլտուրական երամակային ձիաբուծության պայմաններում են ստացվել այնպիսի արժեքավոր նոր ցեղեր, ինչպիսիք են բուդյոնովյան և տերսկի ցեղերը։

ԳԼՈՒԽ 6.

ՏՈՀՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁԻԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Տոհմային աշխատանք ասելով պետք է հասկանալ զոոտեխնիկական միջոցառումների մի ամբողջ կոմպլեքսի կիրառումը անասնաբուծության մեջ. այն է՝ կենդանիների խնամքը, կերակրումը, մարզանքը, ընտրությունը և զույգերի ընտրությունը։ Միայն տոհմային գործի ճիշտ կազմակերպման դեպքում հնարավոր է ապահովել եղած ցեղերի սիստեմատիկ բարելավումը և նոր բարձրորակ ցեղերի ստացումը։

Մեր երկրում ձիաբուծության մեջ տոհմային աշխատանքի հիմնական խնդիրն է՝ ձիերի բանող հատկությունների (աշխատունակության) բարձրացումը, գոյություն ունեցող լավորակ ցեղերի բազմացումը, ցածրորակ ձիերի տրամախաչումը լավացնող ցեղերի ձիերի հետ և տնտեսապես բարձր օգտավետ հատկություններ ունեցող նոր տիպերի և ցեղերի ստացումը։

Ձիերի ցեղերի լավացման աշխատանքը ՍՍՌՄ-ում տարվում է պլանային կարգով, որի համար մեզ մոտ ընդունված է ցեղերի շրջանացման պլան, ընդ որում կոլտնտեսական-

ների ընդհանուր ժողովին իրավունք է վերապահվում պլանով խորհուրդ տրված ցեղերից ընտրել իրենց ցանկացած ցեղը։

ԲՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ձիաբուծության մեջ կիրառվում են բուծման հետևյալ մեթոդները՝ 1) մաքուր կամ ներցեղային բուծում, 2) միջցեղային բուծում կամ տրամախաչում։ Բացի դրանից, ձիաբուծության մեջ կիրառում են նաև միջտեսակային տրամախաչում կամ հիբրիդիզացիա։

Մաքուր բուծման էությունն այն է, որ զուգավորումը կատարվում է նույն ցեղի կենդանիների միջև։

Բուծման այս մեթոդը կիրառվում է այնպիսի ցեղերի նկատմամբ, որոնք իրենց անտեսապես օգտավետ հատկություններով հիմնականում բավարարում են ժողովրդական տնտեսության պահանջներին, այլ կերպ ասած, ընդունված են որպես պլանային, ինչպես, օրինակ, ախալ-թեքինյան, օլովյան վարգուն, դոնական, բուդյոնովյան, վլադիմիրովյան և այլ շատ ցեղեր։ Այդպիսի ցեղերի յուրահատուկ հատկությունները ամենից լավ կարելի է պաշտպանել և զարգացնել նրանց մաքուր բուծման դեպքում։

Մաքուր բուծումը չպետք է նույնացնել «ինքն իր մեջ» բուծման հետ, վերջինս հնարավոր է ինչպես մաքրացեղ բուծման, այնպես էլ խառնածին (մետիս) անասունների բուծման ժամանակ։ Անասնաբուծության պրակտիկայում մաքուր բուծման ժամանակ հաճախ դիմում են այսպես կոչված «արյան թարմացման» մեթոդին, այսինքն՝ երբ որպես արտադրող օգտագործում են նույն ցեղին պատկանող, բայց ուրիշ տնտեսությունից բերված կամ այլ գծի պատկանող հովատակի, որը ոչ մի արյունակցական կապ չպետք է ունենա տվյալ տնտեսության մեջ եղած զամբիկների հետ։

Արյան թարմացումը կիրառվում է դրական այն դեպքում, երբ տվյալ տնտեսության մեջ անասունների բուծումը տարվում է ինքն իր մեջ, մանավանդ, երբ միևնույն

ժամանակ կիրառում են ազգակցական բուծում։ Նման դեպքերում սովորաբար անասունների կենսունակությունը ընկնում է, մինչև անգամ այլասերման երևույթներ են նկատվում։ Միջցեղային բուծման կամ տրամախաչման էությունն այն է, որ զուգավորումը կատարվում է տարբեր ցեղերի անասունների միջև, այսինքն՝ զուգավորվող էգն ու արուն պատկանում են տարբեր ցեղերի։

Տրամախաչումը մեծ չափով արագացնում է ցածրորակ ցեղերի արմատական բարելավման պրոցեսը, հետևապես սոցիալիստական անասնաբուծության մեջ լայնորեն կիրառվում է այն դեպքերում, երբ տվյալ ցեղն իր անտեսապես օգտավետ հատկություններով մեր պահանջներին չի բավարարում։ Սակայն տրամախաչման կիրառումը սրանով չի սահմանափակվում, քիչ չեն դեպքերը, երբ ավելի արժեքավոր անասուններ կամ նոր ցեղեր ստանալու նպատակով տրամախաչումը կատարում են բարձրորակ ցեղերի միջև։ Օրինակ, բուդյոնովյան ցեղը ստացվել է 2 արժեքավոր ցեղերի՝ դոնական և հեծելու դատարյուն ցեղերի տրամախաչումից։

Միչուրինյան բիոլոգիան ապացուցել է, որ տրամախաչումը կենդանու ժառանգականության պահպանողականության (կոնսերվատիզմի) խախտման դյուրավոր միջոցներից մեկն է հանդիսանում։ Խախտված ժառանգականությամբ խառնածիններն արտաքին պայմանների ազդեցության տակ ավելի հեշտ են փոփոխվում։ Դա հնարավորություն է տալիս շնորհալի ընտրության և զույգերի ընտրության, կերակրման, խնամքի, մատղաշների նպատակադիր աճեցման պայմաններում ավելի կարճ ժամանակում բարելավել գոյություն ունեցող գյուղատնտեսական ցեղերը և ստանալ նոր ցեղեր։

Ցանկալի է կարծել, որ խառնածինները մեխանիկորեն միացնում են տրամախաչված ցեղերի հատկությունները։ Նրանք ձևավորում են բերում մի շարք նոր հատկություններ, որոնք արդյունք են արտաքին պայմանների ակտիվ ազդեցության, կենդանու աճի ու զարգացման ընթացքում։ Բացի

թվածից, տրամախաչումը հնարավորություն է տալիս բարձրացնելու կենդանիների կենսունակությունը, որը ըստ Տ. Դ. Լիսենկոյի, արդյունք է այն բանի, որ տարբեր ցեղերի կենդանիների սեռական բջիջների միջև զանազանությունը ավելի մեծ է լինում, որի հետևանքով նրանցից առաջացած նոր օրգանիզմի մեջ հակասականությունը բարձր է լինում և նյութերի փոխանակությունն ավելի ինտենսիվ, ուժեղ է կատարվում, իսկ այդպիսի կենդանիներն ավելի կենսունակ են լինում։

Տարբերում են տրամախաչման հետևյալ եղանակները՝

ա) վերարտադրական,

բ) ներարկման,

գ) կլանման,

դ) արդյունաբերական։

Վերարտադրական տրամախաչումը լայնորեն կիրառվում է դյուղատնտեսական կենդանիների նոր բարձրորակ ցեղեր, ցեղատներ և ցեղային խմբեր ստանալու համար։ Նա կոչվում է պարզ, երբ տրամախաչումը կատարվում է 2 ցեղերի միջև և բարդ՝ երբ տրամախաչմանը երկուսից ավելի ցեղեր են մասնակցում։ Վերարտադրական տրամախաչման ժամանակ ստացված խառնածիններին բուծում են ինքն իր մեջ, իհարկե, դրան զուգընթաց տանելով ստմային աշխատանք, ընդ որում բուծումը կարելի է տանել առաջին (հագվագյուտ դեպքերում), մեծ մասամբ երկրորդ, իսկ երբեմն նաև երրորդ սերնդի խառնածինների միջև, եթե նրանք համապատասխանում են ցանկալի տիպին։

Օրինակ, ակադեմիկոս Մ. Ֆ. Իվանովն իր հայտնի ուկրաինական տափաստանային խոզի ցեղը ստանալիս կանգ առավ երկրորդ սերնդի խառնածինների վրա։

Տրամախաչման այս եղանակի կիրառման հետևանքով ստացված անասունները ոչ միայն իրենց մեջ համատեղում են տրամախաչմանը մասնակցած ցեղերի լավագույն կողմերը, այլև հարստացված են լինում ինտենսիվ օգտակար նոր հատկություններով։

Վերարտադրական տրամախաչման մեթոդով ՍՍՌՄ-ում

ստացվել են գյուղատնտեսական կենդանիների բազմաթիվ բարձրորակ ցեղեր՝ ինչպես, օրինակ, ձիերի բուդյոնովյան և տերսկի ցեղերը։ Հին հայրենական ցեղերից որպես բարդ վերարտադրական տրամախաչման կլասիկ օրինակ կարող է ծառայել օռլովյան վարգունը, որի առաջացմանը մասնակցել են մինչև 7 ցեղ։

Արյան ներարկման մեթոդը կիրառում են այն դեպքերում, երբ ցանկանում են լավացվող ցեղի տիպը, հատկությունները հիմնականում պահպանել, լավացնելով նրա բացասական որոշ կողմերը։ Օրինակ, դոնական և կաբարդինյան ձիերի սրընթացությունը ավելացնելու նպատակով հաճախ այդ ցեղերին տրամախաչում են զատրյուն արշավի ցեղի հետ՝ կիրառելով բուծման ներարկման մեթոդը։ Ստացված խառնածինները հիմնականում պահպանելով դոնական և կաբարդինյան ցեղերի դրական կողմերը, այսինքն՝ նրանց դիմացկունությունը, առողջ, ամուր կոնստիտուցիան և երամակային պահվածքին համակերպված լինելը, միևնույն ժամանակ ավելի արագընթաց են լինում։ Այս մեթոդը կիրառում են տեղական մանր ձիերի հասակը բարձրացնելու համար։ Այսպիսով, տրամախաչման այս եղանակը բավականին լայն կիրառում ունի անասնաբուծական պրակտիկայում, մանավանդ, որ այս դեպքում ավելի քիչ քանակությամբ լավացնող ցեղի հովատակներ են պահանջվում և սոհմական աշխատանքի սիստեմում խորը փոփոխությունների կարիք չի զգացվում։

Արյան ներարկման եղանակի էությունն այն է, որ լավացնող ցեղի հովատակներով ծածկում են լավացվող գամբիկներին, ստացված սերնդի էգերին ծածկում են լավացվող ցեղի հովատակներով և դրանից ստացած սերունդը բուծում են ինքն իր մեջ։ Հաճախ երկրորդ սերնդի խառնածին էգերին մեկ անգամ էլ ծածկում են լավացվող ցեղի հովատակներով և միայն դրանից հետո ստացված խառնածին սերունդը բուծում են ինքն իր մեջ։ Երբեմն տրամախաչման այս եղանակը կիրառում են փոքր-ինչ այլ ձևով։ Վերցնում են տրամախաչման ենթակա ցեղերի առաջին սերնդի խառ-

նածին հովատակներին և նրանցով սերմնավորում լավացվող ցեղի զամբիկներին, հետո ստացած խառնածիններին բուծում են ինքն իր մեջ։ Բայց այս երկու ձևերը չի կարելի նույնացնել, քանի որ մի դեպքում սաղմը զարգանում է խառնածին զամբիկի արգանդում, իսկ մյուս դեպքում՝ լավացվող։

Տրամախաչման կլանման եղանակի դեպքում լավացվող ցեղի զամբիկներին զուգավորում են լավացնող ցեղի հովատակների հետ, ստացած խառնածին զամբիկներին դարձյալ ծածկում են լավացնող ցեղի հովատակներով և այսպես շարունակ, մինչև որ ստացված բարձրարյուն խառնածինները, ըստ իրենց տիպի և մթերատվության, մեծ չափով կմոտենան լավացնող ցեղին, որից հետո կլանումը դադարեցնում են և խառնածիններին սկսում են բուծել ինքն իր մեջ։ Սովորաբար արդեն 4-րդ, 5-րդ սերընդում կլանումն ավարտված են համարում։

Բայց անհրաժեշտ է նշել, որ լրիվ կլանում տեղի չի ունենում, քանի որ կլանող ցեղը սովորաբար այլ արտաքին պայմանների արդյունք է հանդիսանում։

Տրամախաչման այս ձևը լայն կիրառում չունի սոցիալիստական անասնաբուծության մեջ, քանի որ ավելի նպատակահարմար է ստանալ տեղի տնտեսական և բնապատմական պայմաններին հարմար մի նոր ցեղ, քան թե բոլորովին այլ պայմաններում ստացված ցեղով կլանել լավացման ենթակա ցեղը։

Մեզ մոտ բուծման կլանման մեթոդին դիմում են գլխավորապես այն դեպքերում, երբ տվյալ տնտեսության մեջ տարվում է մաքրացեղ բուծում (կոլտնտեսային տոհմային ֆերմաներում, պետտոհմաբուծարաններում), սակայն մայրական կազմի մի մասը հանդիսանում է խառնածին։ Այսպիսով, բուծման այս մեթոդը հնարավորություն է ստեղծում լավացնող ցեղերի գլխաքանակը զգալի չափով ավելացնել։

Կլանման մեթոդը միայն այն դեպքում է նշված նպատակին հասցնում, երբ խառնածինների աճեցումը կատարվում է այնպիսի պայմաններում, ինչպիսի պայմանների

համակերպված է լավացնող ցեղը։ Հակառակ պարագայում կլանման մեթոդի կիրառումը կարող է անցանկալի հետևանքների հասցնել այն իմաստով, որ խառնածինները կորցնելով լավացվող ցեղի լավ հատկությունները, միևնույն ժամանակ զուրկ են լինում նաև լավացնող (կլանող) ցեղի դրական հատկություններից (օրինակ՝ սրընթացություն, խոշորություն և այլն)։

Եթե խառնածինները աճեցվում են լավացնող ցեղի պահանջներին համապատասխանող պայմաններում, ապա արդեն 3-րդ—4-րդ սերնդում խառնածինները ըստ իրենց տիպի և հատկությունների մեծ չափով նմանվում են լավացնող ցեղին և կարող են մաքրացնող անասունների հետ օգտագործվել որպես լավացնողներ։

Բուծման կլանման մեթոդին դիմում են նաև այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում վերականգնել մի որևէ ոչնչացած ցեղ նրա հատ ու կենտ մնացած ներկայացուցիչներից։ Օրինակ, ներկայումս Աղրբեջանում աշխատանք է տարվում առաջներում հայտնի Ղարաբաղի ցեղը վերականգնելու ուղղությամբ։

Արդյունաբերական տրամախաչման նպատակն է ստանալ առաջին սերնդի խառնածիններ անտեսական օգտագործման համար, հետևաբար այս մեթոդի դեպքում խառնածիններին ինքն իր մեջ չեն բուծում որոշակի տիպի ձիերի խումբ ստանալու համար, այլ յուրաքանչյուր անգամ վերցնում են նշանակված ցեղերը և նրանցից աճեցնում խառնածին սերունդ։ Արդյունաբերական տրամախաչման ճանապարհով ստացված խառնածինները լինում են բարձր կենսունակության, եռանդուն, ամրակազմ և ավելի քիչ պահանջկոտ։

Ակներև է, որ այս մեթոդի դեպքում անհրաժեշտ է երկու ցեղերի վերարտադրման մշտական աղբյուր ունենալ, որ հնարավոր լինի անընդմեջ խառնածինների սերունդ աճեցնել։

ՍՍՌՄ-ում արդյունաբերական տրամախաչումը հաջողությամբ կիրառվում է մսատու անասնաբուծության մեջ։ Ձիա-

բուծության մեջ այս մեթոդը համեմատաբար սահմանափակ գործադրում ունի։ Արդյունաբերական տրամախաչումը որոշ չափով օգտագործվում է Ղազախական և Կիրգիզական ՍՍՌ-ում, որտեղ տեղական ձիերը այս մեթոդով տրամախաչում են հեծնելու զտարյուն, դոնական և բուդյոնովյան ցեղերի հետ, ստանալով բավականին լավորակ օգտագործելի ձիեր. բացի այդ, վերջերս սկսել են ծանրաքարշ ձիերին տրամախաչել վարգումների հետ, ինչպես նաև տեղական ցածր արդյունավետ ցեղերի ձիերին՝ ծանրաքարշերի և վարգումների հետ։

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ԲՈՒԾՈՒՄ

Այս կամ այն սատիճանի ազգակցական կապ ունեցող կենդանիների զուգավորումը կոչվում է ազգակցական բուծում։ Ազգակցական բուծումը կարող է տարվել ինչպես շատ մոտ ազգակցական կապ ունեցող կենդանիների (նեղ ազգակցական բուծում), այնպես և միմյանցից ավելի հեռու կանգնած կենդանիների միջև։

Ինչպես պարզված է, ազգակցական, մանավանդ նեղ ազգակցական բուծումը դցում է կենդանիների կենսունակությունը և հաճախ հասցնում է նրանց այլասերման, բայց միևնույն ժամանակ կարող է բարձրացնել սերնդի մեջ ժառանգականությունը։ Այդ նկատի ունենալով Տ. Դ. Լիսենկոն խորհուրդ է տալիս ազգակցական բուծում կիրառել միայն տոհմական սովխոզներում և գիտա-հետազոտական բազաներում, այն էլ նոր ցեղեր ստանալու ժամանակ, քանի որ այս դեպքում ազգակցական բուծումը նպաստում է խառնածիններին ավելի կարճ ժամանակում կայունացնելու՝ բարձրացնելու նրանց ժառանգականությունը։ Միևնույն ժամանակ նշված տիպի տնտեսություններն ավելի լայն հնարավորություններ ունեն հնարավոր այլասերման դեմ պայքարելու։

Կոլտնտեսային ֆերմաները, ինչպես տոհմային, այնպես էլ ապրանքային, պետք է խուսափեն ազգակցական բուծման կիրառումից։

ԲՈՒՏՈՒՄ ԸՍՏ ԳԾԵՐԻ

Կուլտուրական տոհմային անասնաբուծության մեջ լայնորեն կիրառվում է գծային բուծումը, որը արագացնում և հեշտացնում է ցեղերի բարելավումը։

Ցեղի մեջ գիծ կազմում են մի խումբ կենդանիներ, որոնք առաջացել են մի որևէ աչքի ընկնող նախնիից և որոնք ըստ իրենց էքստերյերի, տիպի, արտադրողականության ու ժառանգականության նմանվում են այդ նախնիին, հետևապես և միմյանց։ Ըստ գծերի բուծումը կատարում են միայն տվյալ գծին պատկանող կենդանիների միջև։

Գիծը սերնդից սերունդ ընտրության, զույգերի ընտրության և արտաքին պայմանների (կերակրում, խնամք, մարզանք և այլն) ազդեցության տակ աստիճանաբար փոխվում է և ավելի կատարելագործվում։ Ցեղի մեջ ստեղծվում են մի քանի գծեր։

Գիծը սովորաբար հովատակի գծով են տանում, որովհետև նա անհամեմատ ավելի շատ սերունդ է տալիս, քան զամբիկը։ Երբ տվյալ գիծը աստիճանաբար դադարում է գոյություն ունենալուց, հիմնում են նոր գծեր։ Զամբիկի գիծը սովորաբար կոչվում է ընտանիք։

Զիարուծության մեջ հաճախ դիմում են միջգծային բուծման, այսինքն մի որևէ գծի պատկանող հովատակը զուգավորում են մի այլ գծի պատկանող զամբիկի հետ։ Միջգծային բուծումը կիրառում են՝ մի կողմից նեղ ազգակցական բուծումից խուսափելու և մյուս կողմից երկու գծերի լավագույն կողմերը սերնդի մեջ միաձուլելու համար։

Գծային և միջգծային բուծումը կարելի է սելեկցիայի (ընտրության) ամենակատարյալ ձևերից մեկը համարել։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶՈՒՅԳԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԻԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Եղած ցեղերի բարելավման և նոր բարձրորակ ցեղերի ստացման գործում, կերակրման, խնամքի և մարզանքի հետ միասին, հսկայական նշանակություն ունի ձիերի ընտրությունը։

Ընտրության էությունն այն է, որ տվյալ տնտեսության մեջ (տոհմային) եղած ձիերի գլխաքանակից բուծման համար ընտրում են լավերին, շնորհալի կերպով տարվող զույգերի ընտրության միջոցով ապահովում են գլխաքանակի բարելավումը սերնդից սերունդ։ Եթե գոյություն ունեցող (մինչև անգամ լավագույն) ցեղերի մեջ սիստեմատիկաբար ընտրություն և զույգերի ընտրություն չտարվի, այդ ցեղը կսկսի աստիճանաբար վատանալ։ Ճիշտ ընտրություն կատարելու համար անհրաժեշտ է նախօրոք տալ ձիերի տոհմային գնահատականը (ենթարկել բոնիտիրովկայի) և դրանից ելնելով միայն կատարել ընտրություն։

ԲՈՆԻՏԻՐՈՎԿԱ

Բոնիտիրովկայի նպատակն է որոշել ձիերի տոհմային արժեքը և նրանց նշանակումը կոնսլեքսային գնահատման հիման վրա։ Կոմպլեքսային գնահատումը կատարում են ըստ ձիերի ծագման, չափումների, էքստերյերի, աշխատունակության և սերնդի որակի։

Բոլոր այն տնտեսությունները և կազմակերպությունները, որոնք ունեն տոհմային ձիեր, պարտավոր են ամեն տարի աշնանը անցկացնել բոնիտիրովկա։

Ձիերի բոնիտիրովկան հատուկ հրահանգի համաձայն կատարում է բոնիտյոր-զոոտեխնիկը, որը նախապես հաստատվում է Գյուղատնտեսության մինիստրության կողմից։

Յուրաքանչյուր տոհմային ձի առաջին անգամ բոնիտիրովկայի է ենթարկվում 2,5—3,5 տարեկան հասակում, երկրորդ բոնիտիրովկան կատարում են 3,5—4,5 տարեկան և երրորդ բոնիտիրովկան՝ 7,5—8,5 տարեկան հասակում, ըստ որում առաջին բոնիտիրովկան կատարում են ըստ ծագման, չափումների և էքստերյերի, 2-րդ բոնիտիրովկայի ժամանակ, բացի թվածից հաշվի են առնում և աշխատունակությունը, իսկ երրորդ անգամ բոնիտիրովկայի ենթարկելիս նկատի են ունենում նաև սերնդի որակը։ Բոնիտիրովկան

կատարում են աշնան ամիսներին։ Համաձայն հրահանգի բոնիտիրովկա անցկացնում է բոնիտյոր-զոոտեխնիկը։

Ձիերի բոնիտիրովկան կատարելիս հաշվի են առնում հետևյալ ցուցանիշները.

1) ծագումը և տիպիկությունը,

2) չափումները,

3) էքստերյերը,

4) աշխատունակությունը,

5) սերնդի որակը։

Նշված յուրաքանչյուր ցուցանիշը գնահատվում է տասը բալային սիստեմով։

Բոնիտիրովկան ավարտելուց հետո հաշվում են յուրաքանչյուր ցուցանիշի համար ձիու ստացած բալերի քանակը և դրա հիման վրա տալիս են նրա կոմպլեքս գնահատականը, այսինքն որոշում են նրա դասը։

Ձիերի տոհմական գնահատումը կատարելուց հետո, դրա հիման վրա, նրանց բաժանում են որակական խմբերի՝ դասերի։

Ընդունված է ձիերին ըստ իրենց տոհմային արժեքի բաժանել հետևյալ դասերի.

1) էլիտա — բարձրագույն դասն է, որն ընդգրկում է ցեղի տոհմային հատկությունների տեսակետից ամենաարժեքավոր ձիերին։

2) առաջին դաս—որին պատկանող ձիերը բավարարում են ցեղի հիմնական պահանջները.

3) երկրորդ դաս — ընդգրկում է տոհմային նշանակություն ունեցող մնացած ձիերին։

Այն ձիերը, որոնց հնարավոր չէ ոչ մի դասի մեջ մտցնել, տոհմային չեն համարվում։

Բոնիտիրովկայից ստացված նյութերը օգտագործվում են ընտրության և զույգերի ընտրության համար, նրանց հիման վրա կազմում են զուգավորման պլանը, ձիերին գրանցում են տոհմային գրքերում և տալիս են տնտեսության մեջ եղած ձիերի տոհմային գնահատականը։

ԶՈՒՅԳԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Զույգերի ընտրություն կատարելիս, այսինքն զամբիկներին հովատակների կցելիս, առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.

1. Հովատակը մեկ դասով պետք է զամբիկներից բարձր լինի, իսկ եթե զամբիկները էլիտ դասին են պատկանում, ապա նրանց պետք է զուգավորել էլիտ դասի ամենաբարձրորակ հովատակների հետ։

2. Միատեսակ էքստերյերային թերություններ ունեցող զամբիկին և հովատակին միմյանց հետ չզուգավորել։

3. Զամբիկին հովատակի կցելիս նկատի ունենալ նրանց ազգակցական կապը, այսինքն՝ եթե ցանկանում են խուսափել ազգակցական բուծումից, պետք է հետևել, որ նրանք ազգակից չլինեն և ընդհակառակը՝ եթե ազգակցական բուծումը ցանկալի է, ապա պետք է նկատի առնել նրանց ազգակցական մոտիկության աստիճանը։

4. Նկատի են ունենում զամբիկի և հովատակի դիծը, այսինքն՝ եթե ցանկանում են գծային բուծում անցկացնել, ապա պետք է հետևել, որ զամբիկը և հովատակը նույն գծին պատկանեն, իսկ եթե միջգծային բուծում է անցկացվելու, այդ դեպքում զամբիկը և հովատակը ցանկալի գծերի ներկայացուցիչները պետք է լինեն։

5. Նկատի են ունենում հովատակի և զամբիկի անհատական հատկությունները։

6. Նկատի են ունենում հովատակի և զամբիկի տարիքը, այն իմաստով, որ մեծահասակ զամբիկներին կցում են ավելի երիտասարդ արտադրողներին, և ընդհակառակը։

ԲՈՒԾԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՏՈՀՄԱՅԻՆ ԳՐՔԵՐ

Յուրաքանչյուր տոհմային տնտեսություն պետք է ունենա իր գործարանային գրքերը, որտեղ գրանցվում են արտադրող-հովատակի, մայրական կապմի և սերնդի վերաբերյալ տվյալները։ Գործարանային գրքերում գրանցվում է նշված ձիերի խմբերի ամրողջ գլխաքանակը, անկախ նրանց

որակից։ Գործարանային գրքերում գրանցում են ձիերի ծագմանը, էքստերյերին, աշխատունակությանը և սերնդի որակին վերաբերող բոլոր տվյալները։

Գործարանային գրքերի տվյալները հիմք են ծառայում բոնիտիրովկայի և առհասարակ տոհմային աշխատանքների համար։

Տոհմային գրքերը հնարավորություն են տալիս ավելի ճիշտ կարծիք ունենալ ձիերի տոհմային արժեքի մասին և դրանից ելնելով կատարել ընտրություն, հետևապես և ցեղի բարելավում, այլ կերպ ասած տոհմային գրքերը ապահովում են տոհմային գործի ավելի բարձր մակարդակը։

Տոհմային գրքերը լինում են շրջանային և պետական։ Տոհմային գրքերում մտցնում են տվյալներ՝ այնտեղ գրանցված ձիերի ծագման, էքստերյերի, արտադրողականության և սերնդի որակի վերաբերյալ։ Տոհմային գրքերում գրանցում են միայն այն ձիերին, որոնք ըստ իրենց ցուցանիշների համապատասխանում են տոհմային գրքի պահանջներին (ստանդարտին)։

Շրջանային տոհմային գրքում գրանցում են զատցեղ և խառնածին բոլոր այն ձիերին, որոնք իրենց տեսքով օգտակար հատկություններով համապատասխանում են սահմանված պահանջներին։

Պետական տոհմային գրքում գրանցում են կուլտուրական (լավացնող) ցեղի բոլոր այն զատցեղ և բարձրարյուն (բարձր սերունդների) ձիերը, որոնք բավարարում են տվյալ տոհմային գրքի պահանջներին։

Պետական տոհմային գրքի աշխատանքները ղեկավարում է Գյուղատնտեսության մինիստրությունը՝ հանձինս հատուկ տեսչի։

ՊԵՏԶԻԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐ (զավոդներ)

Պետձիաբուծարանները սովխոզներ են, որոնք մեր ժողովրդական տնտեսությանը մատակարարում են բարձրորակ տոհմային մատերիալ՝ մասնավորապես արտադրող-հովատակներ։ Միևնույն ժամանակ պետձիաբուծարաններում

խարացրած տոհմային աշխատանքի շնորհիվ բարելավվում են եղած ցեղերը և հարկ եղած դեպքում ստեղծվում նորերը։

Պետձիաբուծարանները բազմաճյուղանի տնտեսություններ են, սակայն առաջատար դերը պատկանում է ձիաբուծությանը։ Պետտոհմաբուծարաններում կենտրոնացված է ՍՍՌՄ-ում բուծվող պլանային ցեղերի տոհմային արժեքի տեսակետից ամենաբարձրորակ գլխաքանակը։ Պետձիաբուծարանները ամեն տարի վաճառում են պետախոռներին, սովխոզներին և տոհմային ֆերմա ունեցող կոլտնտեսություններին մի քանի հազար գլուխ վարգուն, ծանրաքարշ և հեծնելու տիպերին պատկանող արտադրող-հովատակներ։

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՀՄԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐ

Տոհմային մատերիալ ստանալու երկրորդ աղբյուրը հանդիսանում է պետական տոհմաբուծարանը։ Պետտոհմաբուծարանները իրենց գլխաքանակը չունեն և կոչված են ղեկավարելու կոլտնտեսային տոհմային ֆերմաների աշխատանքները։ Նրանք կազմակերպվում են այն շրջաններում, որտեղ կոլտնտեսություններում բուծվող ձիերը տոհմային արժեք ունեն։

Այսպիսով, պետական տոհմաբուծարանը նպատակ ունի ժամանակակից կոլտնտեսություններին աճեցնելու տոհմային մատերիալ՝ գլխավորապես կոլտնտեսային ապրանքային ֆերմաների ձիերի գլխաքանակի լավացման համար։

Այս նպատակով պետտոհմաբուծարանի կողմից սպասարկվող գոնայում ամբողջ տոհմային գործը և առհասարակ զոոտեխնիկական բոլոր միջոցառումները կոլտնտեսական տոհմային ֆերմաներում տանում են պետտոհմաբուծարանի մասնագետները։

ՊԵՏԱԿԱՆ ԱԽՈՌՆԵՐ

Պետական ախոռներում պահվում են պետությանը պատկանող պլանային ցեղերի արտադրող-հովատակներ, որոնց զուգավորման կամպանիայի նախօրյակին փոխադրում են կոլտնտեսությունները կամ զուգավորման կայանները՝ օդ-

տագործման համար։ Զուգավորման կամպանիան վերջանալուց հետո հովատակները նորից վերադարձնում են պետական ախոռին, որտեղ նրանք պահվում են մինչև մյուս տարի՝ զուգավորման շրջանում օգտագործելու համար։ Մասսայական ձիաբուծության լավացման գործում պետական ախոռների դերը շատ մեծ է, բացի այն, որ նրանք կոլտնտեսային ձիաբուծությունը ապահովում են բարձրորակ արտադրողներով, այլև լայնորեն մասնակցում են զոոտեխնիկական միջոցառումների անցկացմանը կոլտնտեսություններում։

1943 թվականից սկսած պետական ախոռները նաև զբաղվում են տոհմային մատղաշներ աճեցնելու գործով, նպատակ ունենալով առաջին հերթին պետախոռի արտադրող-հովատակների համալրումը։ Այս նպատակով պետախոռին կից կազմակերպում են մայրական բուծարան, որն բնդգրկում է փոքրաթիվ գամբիկներ։ Բացի դրանից պետախոռը կարող է սովխոզներից գնել տոհմային մարուկներ, կամ էլ կոնտրակտացիայի ճանապարհով կոլտնտեսային տոհմային ֆերմաներից ձեռք բերել լավորակ մատղաշներ և աճեցնել։ Պետախոռները արտադրող-հովատակներով ապահովելու հիմնական աղբյուրը մնում են պետձիաբուծարանները։

ՀՍՍՌ Պետական ախոռին կից ևս կազմակերպվել է բուծարան, որտեղ մի խումբ ցեղական գամբիկներից ստանում են և աճեցնում հովատակացուներ։

Ավելի արագ էֆեկտ ստանալու համար Պետական ախոռը կազմակերպում է նաև արհեստական սերմնավորման կայաններ և իր հովատակների մեծ մասը օգտագործում է այդ ճանապարհով։

ՅՈՒՅԱՀԱՆԳԵՍՆԵՐ

Յուցահանգեսը կարևորագույն զոոտեխնիկական միջոցառումներից մեկն է, որը հայտնաբերում և արտացոլում է տնտեսության անասնաբուծության վիճակը, լավագույն

ներմուծումները և հնարավորություն է տալիս կատարված զոոտեխնիկական աշխատանքի հաշվեհարդար կատարել։

Միևնույն ժամանակ անասնաբուծության ֆրոնտում աշխատողների համար ցուցահանդեսը փորձի փոխանակման և նրանց քաջալերման լավագույն միջոցներից մեկն է։ Ցուցահանդեսները դեռ նախապատրաստական շրջանից սկսած խթանում են աշխատանքի սոցիալիստական մեթոդների ծավալումը և նպաստում զոոտեխնիկական դիտելիքները մասսաների լայն սեփականությունը դարձնելուն։ Ըստ իրենց բնույթի ցուցահանդեսները կարող են լինել՝ ա) ընդհանուր գյուղատնտեսական, որի մեջ կմտնի և անասնաբուծությունը, բ) անասնաբուծական, որը կարող է ընդգրկել բոլոր ճյուղերը, գ) անասնաբուծական մի որևէ ճյուղի, օրինակ՝ ձիաբուծության և վերջապես դ) միայն մեկ ցեղի համար։

Ըստ մասշտաբի ցուցահանդեսները կարող են լինել՝ համամիութենական, ռեսպուբլիկական, մարզային կամ երկրամասային և շրջանային։

Կառավարության և պարտիայի ցուցումների համաձայն շրջանային ցուցահանդեսներ պետք է կազմակերպվեն ամեն տարի։ Շրջանային ցուցահանդեսի կազմակերպման և անցկացման համար կազմակերպվում է կոմիտե հետևյալ կազմով՝ ՄՏԿ-ի ներկայացուցիչ, զոոտեխնիկ, անասնաբույժ, սեռատեմաբուծարանի և սովխոզների ղեկավարներ (եթե այդպիսիք կան շրջանում), անասնապահության առաջավորների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ։

Ցուցահանդեսը հաճախ ընդգրկում է նաև գյուղատնտեսության մյուս ճյուղերն ու անց է կացվում աշնանը՝ բերքահավաքի վերջում. այս դեպքում կոմիտեի կազմի մեջ մտնում է նաև ագրոնոմը։

Մեծ նշանակություն ունի նախապատրաստական շրջանը, երբ ծավալվում է սոցմրցումը՝ ցուցահանդեսին մասնակցելու իրավունք ձեռք բերելու համար։

Ցուցահանդեսում ձիերի և առհասարակ էքսպոնատների գնահատումը կատարվում է ՍՍՌՄ Գյուղատնտեսության

մինիստրության հրահանգի հիման վրա՝ հատուկ էքսպերտային հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ մտնում են շրջանային զոոտեխնիկը, անասնաբույժը և անասնապահության առաջավորները։

Անհրաժեշտ է էքսպոնատների գնահատումը կատարել նախքան ցուցահանդեսի բացումը, որը հնարավորություն կտա հաճախորդներին իմանալու նրա արդյունքները։

Ցուցահանդեսի վերջում բարձր ցուցանիշների համար պարգևատրվում են լավագույն տնտեսությունները, անասնապահության առաջավորները և լավագույն ձիերը։

ԳԼՈՒԽ 7.

ՁԻՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԲԱՆՈՂ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոլտնտեսություններում ձիերը օգտագործում են առաջին հերթին լծած՝ բեռներ տեղափոխելու և գանազան գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու համար, և ապա նաև հեծնելու, իսկ մասամբ էլ որպես բեռնակիր անասուն։

Բանող ձիու աշխատանքը ընդունված է որոշել երկու ցուցանիշներով՝ 1) քարշի ուժով և 2) անցած տարածությամբ։

Բազմապատկելով քարշի ուժը (կգ) անցած տարածության վրա (մետրերով), կստանանք ձիու կատարած աշխատանքի քանակը՝ կիլոգրամոմետրերով։

Քարշի ուժ կոչվում է այն ուժը, որը ձին գործադրում է սայլը, գյուղմեքենան կամ գործիքը տեղափոխելու համար՝ հաղթահարելով նրանց դիմադրությունը։

Քարշի ուժը որոշում են հատուկ գործիքի՝ ուժաչափի (դինամոմետրի) միջոցով, որի մեկ ծայրը ամրացնում են սայլին, իսկ մյուսը՝ վալյոկին։ Ձիու աշխատանքի ժամանակ ուժաչափի զսպանակը ձգվում է, և նրա վրա եղած սլաքը ցույց է տալիս ձիու զարգացրած քարշի ուժը կիլոգրամներով։ Քարշի ուժը ավելի հեշտ կարելի է որոշել հետևյալ կերպ. բեռի քաշը, վերցրած սայլի հետ միասին,

բարդմապատակում են ավյալ ճանապարհի շփման գործակցի հետ, ստացած թիվը կտա քարշի ուժի չափը կիլոգրամներով. օրինակ՝ եթե բեռի քաշը սայլի հետ միասին կազմում է 800 կգ, իսկ ճանապարհի շփման գործակիցը՝ 0,05, ապա նշված 800 կգ բեռը տեղափոխելու համար ձիու գործադրած քարշի ուժը հավասար կլինի՝ 800×0,05=40 կգ։

Իմանալով քարշի ուժի չափը, կարելի է որոշել ավյալ ճանապարհի շփման գործակիցը. դրա համար հարկավոր է քարշի ուժը, արտահայտված կգ-ով, բաժանել բեռի վրա (կգ). այսպես, մեր վերցրած օրինակի դեպքում՝ 40 կգ քարշի ուժը բաժանելով բեռի 800 կգ քաշի վրա կստանանք տրվյալ ճանապարհի շփման գործակիցը, որը հավասար է 0,05։

Ճանապարհների շփման գործակցի միջոցով քարշի ուժի որոշումը հեշտացնելու համար, դիտական հիմնարկների կողմից նախօրոք ուժաչափի միջոցով որոշվում են զանազան ճանապարհների շփման գործակիցները, որի ավյալները բերում ենք հավելվածի № 1 աղյուսակում։ Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, քարշի ուժը որոշելու համար, նշված աղյուսակում պետք է գտնել մեր ունեցած ճանապարհին (օրինակ՝ միջին որակի խճուղի) համապատասխանող շփման գործակիցը և բազմապատկել բեռի և սայլի քաշի վրա՝ միասին վերցրած։

Գյուղատնտեսական տարբեր աշխատանքների ժամանակ ձիու գործադրած քարշի ուժի, կամ ինչպես ընդունված է անվանել՝ քարշային դիմադրության չափը զետեղված է հավելվածի № 2 աղյուսակում։

ՁԻԵՐԻ ՆՈՐՄԱԼ ՔԱՐՇԻ ՈՒԺԸ

Ձիու քարշի ուժը՝ նրա բանող հատկությունները բնորոշող կարևորագույն ցուցանիշներից մեկն է։ Հավասար պայմաններում, որքան ձիու քարշի ուժը մեծ լինի, այնքան նա ավելի ուժեղ կլինի և ավելի մեծ աշխատանք կկատարի։

Քարշի ուժը առաջին հերթին կախված է ձիու կենդանի քաշից։ Որպես կանոն՝ ավելի խոշոր և ծանր քաշ ունեցող

ձիերը ընդունակ են ցուցաբերելու ավելի մեծ չափի քարշի ուժ։ Մեծ նշանակություն ունի նաև ձիու մկանների զարգացումը և նրանց մարզվածությունը, աշխատանքին վարժ լինելը, գիրության աստիճանը, առողջական դրությունը և այլն։

Քանի որ ձիու քարշի ուժը մեծ չափով կախված է նրա կենդանի քաշից, ապա գործնականում նորմալ քարշի ուժի չափը սահմանելիս, ելնում են ձիու կենդանի քաշից։

Գիտությունը պարզել է, որ ձիուն օրվա ընթացքում բայլով նորմալ բեռնվածությամբ աշխատեցնելու համար, նրա քարշի ուժը պետք է հավասար լինի իր կենդանի քաշի 13—14%-ին, ըստ որում ավելի ուժեղ, տոկուն և աշխատանքի ավելի վարժ ձիերի համար նորմալ քարշի ուժը կարելի է փոքր-ինչ ավելի բարձր ընդունել։

Անհրաժեշտ ենք համարում նշել այն, որ աշխատանքի վարժ ձին շատ կարճ ժամանակամիջոցում ընդունակ է զարգացնել անհամեմատ ավելի մեծ քարշի ուժ, այն է՝ իր կենդանի քաշի 60—80%-ի, իսկ երբեմն 90 և ավելի տոկոսի չափ։ Սակայն այդպիսի ուժեղ լարվածությամբ ձին կարող է անցնել ընդամենը մի քանի մետր տարածություն։

Կան մի շարք պայմաններ, որոնք գցում են ձիու քարշի ուժը. 1) երբ ձիու սմբակները սահում են (սոթ են տալիս), 2) երբ ճանապարհը վերելք է, այս դեպքում ձին ստիպված է լինում լրացուցիչ կերպով ուժ գործադրելու՝ թեքությունը հաղթահարելու համար, այստեղից էլ՝ որքան ավելի մեծ լինի թեքությունը, այնքան բեռը թեթև պետք է լինի, որ ձին ի վիճակի լինի առաջ շարժվելու։ Օրինակ՝ եթե ճանապարհի թեքության անկյունը հավասար է 7°, այդ դեպքում ձին իր սեփական մարմնի և բեռի տեղափոխման համար գործադրում է որոշ լրացուցիչ ուժ, որ հավասար է իր կենդանի քաշի և բեռի (սայլի հետ միասին) քաշի 12%-ին։ 3) երբ մի քանի ձի միասին են լծված լինում, նրանց շարժումների անհամաձայնության և որոշ այլ պատճառների հետևանքով յուրաքանչյուր ձիու քարշի ուժը որոշ չափով պակասում է։ Կա կարծիք, որ որքան ավելի շատ թվով ձիեր լծված լինեն միասին, այնքան քարշի ուժի կորուստը ավելի

մեծ կլինի, սակայն այս տեսակետը այնքան էլ ճիշտ չէ։ Բազմաձիանի լուծքի շնորհալի կիրառումը Հյուսիսային Կովկասի պայմաններում ցույց է տալիս, որ քարշի ուժի պակասումը օրինաչափորեն չի կատարվում, այլ ընդհակառակը, այդ կորուստը կարելի է հասցնել համեմատաբար փոքր չափերի։

Որքան ձիերն ըստ իրենց արագության, եռանդի և աշխատունակության միմյանց համապատասխան լինեն, այնքան քարշի ուժի կորուստը ավելի քիչ կլինի. 4) եթե ձին աշխատելիս անընդհատ շրջան է կատարում, ապա նա լրացուցիչ ճիգ է գործադրում իր մարմինը շրջելու համար, որը գցում է քարշի ուժի չափը, և որքան ավելի փոքր լինի շրջանը, այնքան ձիու քարշի ուժը ավելի կպակասի։

ՁԻՈՒ ԸՆԹԱՑՔԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ

Բացի քարշի ուժից, ձիու բանող հատկությունները որոշելու համար չափազանց կարևոր նշանակություն ունի նրա ընթացքի արագությունը։

Հավասար պայմաններում, որքան ձիու ընթացքը ավելի արագ լինի, այնքան նրա կատարած աշխատանքը ժամանակի մեկ միավորում ավելի շատ կլինի։

Ձիերի ճիշտ օգտագործման խնդրում մեծ նշանակություն ունի նրանց արագության ճիշտ ընտրությունը, այսինքն թե տվյալ աշխատանքը ինչ արագությամբ պետք է կատարել։ Արագությունը ընդունված է չափել մեկ ժամում անցած կիլոմետրերի, կամ մեկ վայրկյանում անցած մետրերի քանակով։ Բանող ձիերը, նայած աշխատանքի բնույթին, ցեղին և իրենց վիճակին, թայլով աշխատելիս մեկ ժամում անցնում են 3—6 կմ։ Օրինակ, մեր տեղական մանր ձիերի միջին արագությունը 3,5—4 կմ է, իսկ ծանրաքարշ ձիերի և վարգունների խառնածինները մեկ ժամում անցնում են 4,5—5,5 կմ։

Հնձող մեքենաները (հնձի, խոտհար) աշխատեցնելիս ձիու արագությունը 4,5—5 կմ պակաս չպետք է լինի մեկ

ժամում, այլապես մեքենայի կարող մեխանիզմը չի կարող աշխատել։

Գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ ձիերի մեծ մասամբ քայլով են աշխատեցնում։

Ձիերին վարգով են (ոիս) քշում միայն թեթև բեռներ տեղափոխելու ժամանակ, երբ քարշի ուժը նրանց կենդանի քաշի 7—8%-ից չի անցնում։ Բայց որքան էլ բեռը թեթև լինի, ձիուն անընդհատ վարգով չի կարելի աշխատեցնել։ Վարգի արագությունը սովորաբար մեկ ժամում հավասար է 8—12 կմ։ Խորհուրդ է տրվում թեթև բեռներ տեղափոխելիս ձիուն պարբերաբար քշել մերթ վարգով, մերթ քայլով, օրինակ, 10 րոպե քայլով, 5 րոպե վարգով, կամ 10 րոպե քայլով, 15—20 րոպե վարգով, և այլն։

Արագությունը, քարշի ուժը և աշխատանքի ժամանակը որոշ հարաբերության մեջ են գտնվում։ Այդ արտահայտվում է նրանում, որ եթե կարիք կա ձիու արագությունը ավելացնելու, ապա անհրաժեշտ է պակասեցնել կա՛մ քարշի ուժի չափը, կա՛մ աշխատանքի տևողությունը և կա՛մ երկուսն էլ միասին վերցրած։

ՁԻՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակի մեկ միավորում կատարած աշխատանքը կոչվում է հզորություն։

Սովորաբար ձիու աշխատանքի հզորությունը չափում են կիլոգրամոմետրերով՝ մեկ վայրկյանում։ Օրինակ, եթե աշխատանքի ժամանակ ձիու քարշի ուժը հավասար է 75 կգ և 1 մետր տարածությունը նա անցնում է 1 վայրկյանում, ապա նրա աշխատանքի հզորությունը կլինի 75 կիլոգրամոմետր՝ 1 վայրկյանում։ Այդպիսի հզորությունը ընդունված է անվանել ձիու ուժ։ Սովորաբար միջին մեծության ձիու հզորությունը հավասար է լինում 0,6—0,7 ձիու ուժի. միայն խոշոր ծանրաբարշ ձիերն աշխատում են մոտավորապես մեկ ձիու ուժի հզորությամբ։ Կարճ ժամանակամիջոցում ձին ընդունակ է զարգացնել մինչև 6—8 և ավելի ձիու ուժի հզ-

վասարվող հզորություն։ Նույն հզորությունը կարելի է ստանալ ժամանակի մեկ միավորում, քարշի ուժի և արագության տարբեր փոխհարաբերության դեպքում։ Օրինակ՝ մեկ վայրկյանում 60 կիլոգրամոմետր հզորություն կարելի է ստանալ՝ եթե քարշի ուժը մեկ վայրկյանում հավասար է 60 կգ, իսկ արագությունը մեկ վայրկյանում՝ 1 մ, կամ՝ եթե քարշի ուժը կազմում է 15 կգ, իսկ արագությունը 1 վայրկյանում՝ 4 մետր, հետևապես հզորությունն ինքնըստինքյան չի կարող բնորոշել ձիու աշխատանքն անհրաժեշտ ճշտությամբ, եթե հայտնի չեն նրա բաղկացուցիչ մասերը՝ քարշի ուժը և արագությունը։

ՁԻՈՒ ԴԻՄԱՑԿՈՒՆԱՈՒԹՅՈՒՆԸ

Դիմացկունությունը բանող ձիու կարևոր հատկություններից մեկն է։ Դիմացկունության կամ տոկունության հատկությունը բնորոշ է միայն կենդանի օրգանիզմին։ Ի տարբերություն մեխանիկական շարժիչի, բանող անասունը անընդհատ չի կարող աշխատել և երկար ժամանակամիջոցում ցուցաբերել նույն հզորությունը։

Երկարատև աշխատանքի ժամանակ ձիու աշխատունակությունը անխուսափելիորեն ընկնում է նրա հոգնելու հետևանքով, ուստի անհրաժեշտ է աշխատող կենդանուն պարբերաբար հանգիստ տալ, իր ուժերը վերականգնելու համար։

Դիմացկուն կոչվում է այն ձին, որն օրրատոր կատարում է մեծ աշխատանք, ավելի ուշ է հոգնում և իր ուժերը վերականգնելու համար պահանջում է ավելի կարճ ժամանակամիջոց։

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուժեղ, տոկուն ձիերը, ծանր աշխատանքից հետո մեկ ժամ հանգըստանալու ընթացքում հասնում են միանգամայն նորմալ դրության. նրանց զարկերակը (պուլսը), շնչառությունը և ջերմաստիճանը լինում է նորմալ։

Որպես ծայրահեղ հոգնածության կոնկրետ ցուցանիշներ

կարող են ծառայել՝ շատ արագ շնչառությունը (մեկ րոպեում 100 և ավելի), արագացած զարկերակը (մեկ րոպեում 100 և ավելի զարկ) և մարմնի ջերմաստիճանի բարձրացումը (մինչև 40° և ավելի) և հաճախ նկատվող մկանների և ոտքերի դողոցը։ Սովորաբար այդպիսի դեպքերում ձին հրաժարվում է կերից և հոգնած տեսք է ունենում։

Եթե նշված երևույթները 30 րոպե հանգստանալուց հետո զգալի չափով չեն նվազում, ապա այդ ցույց է տալիս ձիու ծայրահեղ հոգնածությունը։ Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է ձիուն տալ ավելի երկարատև հանգիստ և պակասեցնել նրա բեռնվածությունը։

Հանգիստ վիճակում առողջ ձիու կլինիկական նշանները հետևյալն են՝ շնչումների քանակը մեկ րոպեում հավասար է 8—20, զարկերակի հաճախականությունը՝ 36—44, մարմնի ջերմաստիճանը՝ 37,6—38,4։ Անհրաժեշտ է նշել, որ նորմալ աշխատանքի ժամանակ ձիու ջերմաստիճանը փոքր-ինչ կարող է բարձրանալ՝ մինչև 39—39,5°, իսկ շոգ ժամանակ՝ զարկերակը և շնչառությունը արագանալ։

ՁԻՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ինչպես վերևում նշեցինք, ձիու մեխանիկական աշխատանքը չափվում է կիլոգրամոմետրերով, իսկ երկար տարածությունների վրա՝ կիլոգրամոկիլոմետրերով, որը ստացվում է քաշքի ուժը (կգ) անցած ճանապարհի (մետրերով կամ կիլոմետրերով) վրա բազմապատկելու միջոցով։ Օրինակ, եթե քաշքի ուժը հավասար է 60 կգ, իսկ ձիու անցած հանապարհը՝ 20 կմ, ապա ձիու կատարած աշխատանքը կկազմի 1200 կիլոգրամոկիլոմետր։

Ելնելով օրվա ընթացքում ձիու կատարած աշխատանքի ծավալից, վերջինս բաժանում են՝ թեթև (կամ փոքր), միջակ և ծանր (կամ մեծ) կատեգորիաների։ Քանի որ նորմալ քաշքի ուժի մեծությունը հիմնականում կախված է ձիու կենդանի քաշից, ապա միանգամայն պարզ է, որ ավելի խոշոր, հետևապես և ծանր ձիու համար տվյալ աշխատանքը կարող

է լինել թեթև, իսկ ավելի մանր ձիերի համար՝ միջակ կամ մինչև անգամ ծանր։ Դրա համար էլ ձիու բեռնվածության չափը որոշելիս միշտ էլ նկատի են ունենում նրա կենդանի քաշը, նորմալ քարշի ուժը և միայն այն ժամանակ սահմանում նրա համար թեթև, միջակ կամ ծանր աշխատանք։ Ելնելով դրանից ձիու օրվա աշխատանքը կարելի է արտահայտել հետևյալ թվերով (աղ. 2)։

Աղյուսակ 2

Ձիու օրվա աշխատանքը կիլոգրամոմետրերով։
(Նորմալ քարշի ուժի դեպքում)։

Ձիու քաշը (կգ)	300	400	500	600
Նորմալ քարշի ուժը (կգ) քայլի ժամանակ	45	60	70	80
Թեթև աշխատանք (անցած հանապարհը 15 կմ)	700	900	1100	1200
Միջին աշխատանք (անցած հանապարհը 25 կմ)	1200	1500	1800	2000
Ծանր աշխատանք (անցած հանապարհը 35 կմ)	1600	2100	2500	2800

Որպես կանոն ձին ավելի լրիվ չափով և ռացիոնալ կերպով է օգտագործվում, երբ նա ամբողջ աշխատանքային օրը (9 ժամ օգտակար աշխատանք) աշխատում է իր համար նորմալ քարշի ուժով և արագությամբ։

Բեռների մասսայական փոխադրումների ժամանակ ընդունված է ձիու աշխատանքը հաշվել տոննակիլոմետրերով։

Տոննակիլոմետր կոչվում է ձիու այն աշխատանքը, որը անհրաժեշտ է մեկ տոննա բեռը մեկ կիլոմետր տարածության վրա տեղափոխելու համար։

Սովխոզներում և քաղաքային տրանսպորտում ձիերի տարեկան արտադրողականությունը հաշվում են աշխատանքի ձիաօրերով։

Ձիուն օրվա ընթացքում պետք է աշխատեցնել 8—9 ժամ։

Գիտականորեն ապացուցված է, որ աշխատանքի այդպիսի տևողությունը, ձիու ռացիոնալ կերակրման, խնամքի և օգտագործման պայմաններում, չի վնասում նրան։ Իհարկե, ձիու աշխատանքային օրվա ընդհանուր տևողությունը ավելի երկար է և միջին հաշվով 12—15 ժամ է կազմում, որովհետև դրա մեջ, բացի բուն աշխատանքից, մտնում են նաև կանգառները, ընդմիջումները, ոլորանները, ձին լծելու և արձակելու, ինչպես նաև բառնալու և բեռնաթափման համար պահանջվող ժամանակը։ Աշխատանքային օրվա տևողությունը նաև կապված է աշխատանքի սեզոնից։ Գարնան և ամռան ամիսներին, ցերեկը երկար լինելու պատճառով, աշխատանքային օրվա տևողությունը ավելի երկար է լինում, քան ձմռան և աշնան ամիսներին։

Պետք է ձգտել բատ հնարավորության օրվա ընթացքում ժամանակի ավելորդ կորուստներ չտալ և դրանով երկարացնել ձիու փաստացի աշխատանքի ժամերը (օգտավետ աշխատանքը)։

ՁԻԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ձիերի արտադրողականությունը դաշտային աշխատանքների ժամանակ ընդունված է չափել հեկտարներով։

Ձիու օրվա հնարավոր արտադրանքը որոշելու համար, անհրաժեշտ է դիտենալ գյուղատնտեսական գործիքի ընդգրկումը մետրերով, ձիու ընթացքի արագությունը և օգտավետ աշխատանքի տևողությունը։ Օգտավետ աշխատանքի տևողությունը (ժամանակը) բազմապատկելով ընթացքի արագությամբ, որոշում են այն տարածությունը (ճանապարհի երկարությունը մետրերով), որը կարող է անցնել ձին աշխատանքային օրվա ընթացքում։ Ճանապարհի երկարությունը բազմապատկելով գործիքի ընդգրկմամբ, որոշում են այն տարածությունը (քառակուսի մետրերով), որը կարելի է մշակել մեկ օրվա ընթացքում։ Այս տարածությու-

նը հեկտարներով արտահայտելու համար բաժանում են 10.000-ի։

Օրինակ՝ եթե վար անելիս գութանի ընդգրկումը հավասար է 0,25 մետրի, ձիու միջին արագությունը մեկ ժամում հավասար է 3,5 կմ կամ 3500 մետր, իսկ օրական աշխատանքի տևողությունը օրվա ընթացքում 8 ժամ է, ապա մեկ օրվա արտադրողականությունը հեկտարներով հավասար կլինի՝ 3500×8×0,25=0,7 հեկտար. այդ նշանակում է, որ ձին 8 ժամվա ընթացքում անցել է 28000 մետր ճանապարհ, որը բազմապատկելով գութանի ընդգրկման վրա (0,25) ստանում ենք 7,000 քառ. մ կամ 0,7 հեկտար մշակված տարածություն։

Մյուս կողմից, եթե մեզ հայտնի է արտադրողականության չափը օրվա ընթացքում, ապա մենք կարող ենք իմանալ նրա աշխատանքի ծավալը արտահայտված կիլոգրամոկիլոմետրերով։ Դրա համար հարկավոր է մշակված տարածությունը բաժանել գյուղգործիքի կամ մեքենայի ընդգրկման վրա, որը կտա մեզ անցած ճանապարհը։ Վերջինս կիլոմետրերով բազմապատկելով ձիու քաշի ուժով, կստանանք օրվա ընթացքում նրա կատարած աշխատանքը կիլոգրամոկիլոմետրերով։

ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԻՆ

Ինչպես յուրաքանչյուր ձիու, այնպես էլ գյուղատնտեսական (բանող) ձիու որակը կախված է ցեղից, նրա ծագումից և աճեցման պայմաններից։ Գյուղատնտեսական ձին պետք է լինի ամրակազմ և բավականին մասսիվ։ Նրա իրանը փորքինչ ավելի երկար պետք է լինի, քան բարձրությունը (մինչև մինչև գետին), կրծքի վանդակը պետք է լինի լայն, խորը և երկար, մեջքը և գոտկատեղը՝ լայն և միջակ երկարության, գավակը՝ բավականին երկար և ուժեղ, որովայնը՝ մեծածավալ, ոսկրակազմը՝ ամուր և մկանները՝ լավ զարգացած։ Նրա վերջավորությունները (ոտքերը) պետք է լինեն

միջակ երկարության, ամուր, ճիշտ դրված և ամուր սրմ-յակներով։ Բայց ամենից կարևորն այն է, որ գյուղատնտեսական ձին ունենա լավ բանող հատկություններ, այսինքն ունենա բավականին արագ շարժումներ, լինի տոկուն և ուժեղ։

Մեծ նշանակություն ունի նաև ձիու խառնվածքը. լավ է, որ ձին ունենա բարձր կենսունակություն, լինի փութաջան, հասկացող և հնազանդ։ Նա չար չպետք է լինի։

Ինչպես շատ դյուրագրգիռ, այնպես էլ շատ թմրած ձիերը լավ չեն համարվում գյուղատնտեսական աշխատանքների համար։

Հայաստանի տեղական ձիերը գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար այնքան պիտանի չեն։ Նրանք զարգացած չեն լծելու ուղղությամբ, մանր են, թեթև, տաքարյուն, թեև հիանալի կերպով հարմարված են մեր տեղական պայմաններին և պահանջկոտ չեն։

Մեր պայմաններում գյուղատնտեսական աշխատանքների համար միանգամայն պիտանի պետք է համարել տեղական ձիերի և արդենների խառնածինները, որոնք տեղական ձիերից խոշոր են, բավականին մասսիվ, բայց միևնույն ժամանակ դյուրաշարժ և մեր պայմաններին լավ հարմարեցված։ Այդպիսի ձիերի բավականին մեծ խումբ մենք ունենք Ստեփանավանի և Կալինինոյի շրջաններում։ Լավ են նաև տեղական ձիերի և վարդունների խառնածինները։

ԲԱՆՈՂ ՁԻԵՐԻ ԽՆԱՄՔԸ

Ձիերի ռացիոնալ օգտագործումը հնարավոր է միայն կերակրման և խնամքի պատշաճ պայմաններում։

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ձիու մաքրության վրա, որից զգալի չափով կախված է նրա առողջությունը։ Աշխատանքի ժամանակ ձին քրտնում է, որը չորանալով, փոշու, թեփի և կեղտի այլ մասնիկների հետ խառնվելով կպչում է մաշկին, փակելով մաշկի ծակոտիները, որոնց միջոցով կատարվում է մաշկային շնչառությունը։

Բացի դրանից, կեղտոտ մաշկի վրա ավելի հեշտությամբ են զարգանում պարազիտները և առաջ են գալիս զանազան մաշկային հիվանդություններ։

Բանող ձիերին պետք է մաքրել առավոտյան, մինչև աշխատանքի սկսվելը։

Ձիերին մաքրում են խոզանակով, իսկ քերոցը (զարշավը) օգտագործում են միայն խոզանակը մաքրելու համար։ Թույլ չի տրվում ձիերին մաքրել քերոցով, որովհետև քերոցը ավելորդ տեղը մաշկը գրգռում է և կարող է մինչև անգամ վնասվածքներ հասցնել նրան։ Խոզանակով մաքրելուց առաջ, մաշկի վրա շորացած քրտինքն ու կեղտը նախապես մաքրում են ծղոտի ոլորով։

Լավ եղանակին ձիերին մաքրում են դրսում, իսկ ցուրտ, անձրև օրերին՝ ախոռի միջանցքում։

Ձիուն մաքրում են որոշ հաջորդականությամբ. սկզբում ձիու ամբողջ մարմինը շփում են մազին հակառակ ուղղությամբ՝ ծղոտե ոլորով և միայն դրանից հետո մաքրում խոզանակով։ Սկզբում մաքրում են ձիու գլուխը, հետո պարանոցի և կրծքի ձախ կողմը, առջևի ձախ ոտքը և ապա մեջքի, փորի, գավակի ձախ կողմը և վերջում հետևի ձախ ոտքը, որից հետո նույն կարգով մաքրում են կենդանու աջ կողմը։ Ձիուն մաքրելիս մոտ շորս անգամ մազին հակառակ և մազի ուղղությամբ խոզանակով շարժում կատարելուց հետո, յուրաքանչյուր անգամ խոզանակը մաքրում են քսելով քերոցին։ Հավաքված թիփը և կեղտը քերոցի վրայից հեռացնում են, թեթև կերպով խփելով նրան հատակի վրա դրված մի որևէ կոշտ առարկայի։ Ձիու ավելի նուրբ մասերը սրբում են շորով։

Բաշը, ճակատափունջը և պոչը սանրում են փայտյա դանակով կամ սանրով, իսկ խճճված մազերը ուղղում ձեռքով։

Ձիերին անհրաժեշտ է հիմնականում մաքրել առավոտյան, իսկ երեկոյան աշխատանքից հետո մաքրել թեթև կերպով։

Եթե աշխատանքից հետո ձին տաքացած է, քրտնած,

ապա նրան հարկավոր է 20—30 բոպե ման ածել և հետո միայն տանել ախոռը ու անուրը հանել։

Խորհուրդ է տրվում աշխատանքից հետո ձիու մարմինը, մանավանդ անուրի (խոմուտի) և լծախամբիկի տեղը, ծղոտի ալրով շփել, որը կնպաստի արյան շրջանառության ուժեղացմանը և նրան կպաշտպանի զանազան բորբոքումներից։

Ձիուն՝ աշխատանքից ցեխոտված և թրջված վիճակում վերադառնալու դեպքում, պետք է մաքրել նրա թաց տեղերը չորանալուց հետո։ Առանձնապես կարևոր է խնամքով չորացնել և ցեխից մաքրել ձիու ոտքերի ստորին մասը, մասնավորապես կոճղամատները (խոզանակները)։

Ամառը, երբ ջրի ջերմաստիճանը 18-ից ցածր չէ, շատ օգտավետ է ձիերին լողացնել դետում, լճակում, ընտրելով հարմար տեղ, իսկ եթե հարմար տեղ չկա, կարելի է լողացնել՝ ջուրը դուլլով ձիու վրա լցնելով, որի ժամանակ նրա մարմինը տրորում են ծղոտի ալրով։

Տաքացած, քրտնած վիճակում, ինչպես նաև կեսօրվա շոգին, ձիուն չի կարելի լողացնել։

Եթե ձին հատիկային կեր է ընդունել, ապա նրան կարելի է լողացնել միայն 1,5—2 ժամ հետո։ Ձիուն ջրում լողացնելիս թողնում են 10—15 բոպե, հետևելով, որ նրա գլուխը միշտ ջրից դուրս մնա՝ ականջները ջուր լցվելուց խուսափելու համար։ Լողացնելուց հետո ձիերին հարկավոր է ման ածել և ապա նրանց մարմինը տրորել չոր ծղոտի ալրով։

Ամռանը ձիերին անհրաժեշտ է պաշտպանել ճանճերից և միջատներից։ Միջատների պատճառած անհանգստության հետևանքով ձիերի արտադրողականությունը զգալի չափով ընկնում է։

Ձիերին միջատներից պաշտպանելու համար խորհուրդ է տրվում նրանց ամբողջ մարմնին (մաղերին և մաշկին) քսել հեքսաքլորանի սուսպենզիա (2 մաս հեքսաքլորանը 8 մաս ջրի հետ)։ Այդ միջոցառումը ձիերին միջատների (զանազան ճանճերի) հարձակումից պաշտպանում է մոտ 16 օր, որից հետո հարկավոր է նման մշակումը պարբերաբար կրկնել։ Ախոռներում ճանճերի դեմ պայքարելու համար հեքսաքլո-

բանի և ջրի նշված խառնուրդով սրսկում են ախոռի պատերը, առաստաղը, միջնորմները և այլն։ Լավ է նաև լուսամուտները ներկել լեղակով։

Չափազանց մեծ նշանակություն ունի ձիերի սմբակների խնամքը և ճիշտ պայտելը։ Քիչ չեն դեպքերը, երբ սմբակները փչանալու հետևանքով ձիերի արտադրողականությունը խիստ կերպով ընկնում է, կամ նրանք բոլորովին դուրս են գալիս շարքից։

Մասուրային պահպանման պայմաններում անհրաժեշտ է ամեն օր աշխատանքից առաջ, և մանավանդ հետո, սմբակները լվանալ ջրով և մաքրել։ Սմբակները մաքրելու համար օգտվում են հատուկ այդ նպատակի համար գործադրվող փայտյա դանակից կամ բութ երկաթե կեռից։ Լվանալուց հետո սմբակները խնամքով շորով շորացնում են, որից հետո քսում են քիչ վազելին կամ մաքուր ճարպ։ Ոչ մի դեպքում թույլ չի տրվում սմբակները առատ յուղել և մանավանդ նրանց վրա քսել մազութ։ Առնվազն 1,5 ամիսը մեկ անգամ սմբակների եզրերը կարում և հարթում են, ըստ որում ներբանները պետք է հարթել շատ զգուշությամբ, միայն վերցնելով վերևի բարակ շերտը։ Եթե պայտը նույնիսկ մաշված չէ, 1—1,5 ամիսը մեկ անգամ պետք է հանել, նորից պայտել, որովհետև այդ ժամանակամիջոցում սմբակը բավականաչափ աճած է լինում։

Անհրաժեշտ է ձիերին պայտել ժամանակին և ճիշտ կերպով։

Բանող ձիերի ախոռը պետք է լինի ընդարձակ, լուսավոր, չոր, տաք և օդը՝ մաքուր։ Ախոռում կացոցների հատակը լավ է, որ լինի կավից, դրա համար կավն շաղախի հետ խառնում են հարդ և դրանով մոտ 30 սմ հաստությամբ պատում են հատակը, խնամքով դոփանում (տրամբովկա) և թողնում են չորանալու։ Եթե հատակը չորանալուց հետո ճաքճքում է, ապա պատրաստում են կավի և կրի լուծույթ և լցնում են ճեղքերի մեջ։ Հատակը 30 սմ բարձր պետք է լինի ախոռի շրջապատի տարածությունից և լուսրանչյուր մեկ մետրի վրա 2 սմ թեքություն պետք է ունենա։ Այսպիսի

հատակը պահանջում է մշտական հսկողություն. խորդուբորդություններ և փոսեր առաջանալու դեպքում անհրաժեշտ է անմիջապես վերանորոգել։

Լավ է համարվում նաև տախտակապատ հատակը, որտեղում հատակի հիմքը անում են կավից։

Անկախ նրանից, թե ախոռի հատակը ինչպիսին է, բանող ձիերի տակը պետք է փռել ցամքար։ Ցամքարը լավ է պահպանում հատակը, ծծում է մեզը և կենդանին հնարավորություն է ունենում պառկելու և հանգստանալու փափուկ տեղում։ Որպես ցամքար ամենից լավ է օգտագործել աշնանացան հացահատիկների ծղոտը։ Մսուրային պահպանության ժամանակ օրական միջին հաշվով մեկ ձիու համար պետք է նախատեսել 2—3 կգ ծղոտ։ Ցամքարի համար կարելի է օգտագործել նաև չոր տորֆը (գորշ) և փայտի թեփը։

Ամեն օր առավոտյան և երեկոյան պետք է ախոռը մաքրել, ոտքը դուրս տանել և ցամքարը փոխել։ Առհասարակ ախոռը հարկավոր է մաքուր պահել և պայքարել մկների, առնետների և այլ կրծողների դեմ։

ԲԱՆՈՂ ՁԻԵՐԻ ԿԵՐԱԿՐՈՒՄԸ

Ձիու առողջ վիճակը և աշխատունակությունն առաջին հերթին կախված են նրա կերակրումից։ Յուրաքանչյուր կոլտնտեսությունում անհրաժեշտ է ձիերի համար ստեղծել կերային ֆոնդ և այն ծախսել խնայողաբար։

Բանող ձիերի կերակրումը պետք է համապատասխանի նրանց կատարած աշխատանքին։ Որքան ավելի ծանր է ձիու աշխատանքը, այնքան նրան ավելի լավ պետք է կերակրել։ Պակաս կերակրման պայմաններում ձին վատ է աշխատում, արագորեն հյուծվում է, նրա արտադրողականությունը օրըստօրե ընկնում է, և շուտով նա դուրս է գալիս շարքից։

Չնայած կառավարության և պարտիայի ցուցումներին, թիշ չեն դեպքեր, երբ կոլտնտեսությունը ժամանակին հող

չի տանում ձիերի համար կոպիտ և խտացրած կերերը առանձնացնելու, որի հետևանքով բանող ձիերը չեն ապահովվում անհրաժեշտ քանակությամբ կերերով։ Կերակրման վատ պայմաններում բանող ձիերը չեն կարող ցուցաբերել բարձր աշխատունակություն, հետևապես նրանց արտադրողականությունը լինում է չափազանց ցածր։

Բացի կոպիտ և խտացրած կերերի կուտակումից, կոլտնտեսություններին խորհուրդ է տրվում ֆերմայամերձ հողամասերում ցանել դաղար, շաքարի ճակնդեղ և կարտոֆիլ՝ յուրաքանչյուր ձիուն 0,1 հեկտարի չափով։

Ձիերին տրվելիք կերերը ամենից առաջ պետք է լինեն լավորակ։ Գոսացած, նեխած և առհասարակ փչացած կերերը առաջացնում են ձիերի մարսողական գործարանների զանազան լուրջ հիվանդություններ։

Բանող ձիերի հիմնական կերերից մեկը հանդիսանում է խոտը։ Ուստի անհրաժեշտ է նրանց ապահովել բավարար քանակությամբ բարձրորակ խոտով (առվույտ, երեքնուկ, մարգագետնային խոտ և այլն)։

Ձիերի համար լավագույն խտացրած կերերը հանդիսանում են վարսակը, դարին, թեփը և ապա միայն քուսպը։ Հատիկային կերերից պետք է դերադասել վարսակը, որը թեև բան իր սննդարժեքի դիջում է շատ այլ հատիկների, բայց ավելի անվտանգ է ձիու համար։ Վարսակը կամ դարին խորհուրդ է տրվում տալ ձիուն ճղմած վիճակում, կամ էլ հարդի հետ խառնած։ Եգիպտացորենի հատիկները նույնպես կարող են ձիերի համար որպես կեր ծառայել։ Վերջինս ռացիոնում պետք է կազմի հատիկային կերի կեսից ոչ ավելին։ Ցորենի կամ տարեկանի թեփը ավտրարար խառնում են թրջած հարդի հետ։ Արևածաղկի կամ կտավհատի քուսպի մեծ քանակությունը կարող է առաջացնել աստմոքսի խանդարում։ Առհասարակ բոլոր տեսակի քուսպերն էլ քիչ քանակությամբ են տալիս ձիերին (մինչև 1 կգ)։ Ձիերին քուսպ տալիս են չոր վիճակում, քուսպջարդիչի միջոցով մանրացնելուց հետո։

Հյութալի կերերից ձիերի համար օգտագործում են ճա-

կընդեղը (ավելի լավ է շաքարի ճակնդեղը), գազարը, կարտոֆիլը և սիլոսը։

Ճակնդեղը, գազարը կերցնում են հում վիճակում, կարտոֆելուց հետո խառնելով հարդի հետ, իսկ կարտոֆիլը՝ խաշած, որը ճմռում են և դարձյալ խառնում են հարդի հետ, վրան ցանելով մի քիչ աղ կամ աղաջուր։

Թեև ձիերին սիլոս տրվում է ավելի սահմանափակ քանակությամբ, քան տավարին, (10 կգ-ից ոչ ավելի), բայց և այնպես ձիերի համար էլ նա հանդիսանում է արժեքավոր կեր։

Սիլոսը անպայման պետք է բարձրորակ լինի։ Դերազանցելի է հատուկ սիլոսային կուլտուրաներից պատրաստած սիլոսը։ այդպիսին չլինելու դեպքում կարելի է տալ լավորակ մարգագետնային բույսերից պատրաստած սիլոս։ Կանաչ կերը, որը ձին ստանում է կամ արոտում, կամ էլ քաղած վիճակում, հանդիսանում է լիարժեք և հեշտ յուրացվող կեր։ Կանաչ կերը հարուստ է վիտամիններով, սպիտակուցներով և հանքային նյութերով։

Քաղած կանաչը ձիերին պետք է կերցնել միայն թարմ վիճակում, չթողնել, որ նա մնալով տաքանա։

Ամառը՝ ձիերին, աշխատանքից ազատ ժամանակ, պետք է թողնել, ըստ հնարավորին, ավելի երկար ժամանակ արոտում արածելու։

Կոմբիկերները, մանավանդ այն տեսակները, որոնք պատրաստված են հատկապես բանող ձիերի համար, հանդիսանում են շատ արժեքավոր կերեր, բայց կոլտնտեսություններում դեռ լայն օգտագործում չեն գտել։

Երբ ձիու ռացիոնի մեջ հանքային նյութերով հարուստ կերեր չեն մտնում, ինչպես, օրինակ՝ ցորենի թեփը, առվույտը և այլն, ապա խորհուրդ է տրվում նրան ավելացնել սոկրի այլուր, որը հարուստ է կալցիումի և ֆոսֆորի աղերով։ Անկախ նրանից, թե ձին ինչպիսի կերեր է ստանում, անհրաժեշտ է նրան տալ աղ։ Բանող ձիերին օրական մեկ գլխին պետք է տալ 30—50 գ աղ։ դերազանցելի է քարաղը,

որը գնում են մսուրում, որպեսզի ձին հնարավորություն ունենա իր ուժի պահանջը բավարարել։

Բանող ձիերին պետք է կերակրել ըստ նորմաների։ Կերանորմաները սահմանվում են ձիու կենդանի քաշից, աշխատանքի չափից, գիրության աստիճանից, նկատի են առնում հղիությունը և այլ անհատական հատկություններ։

Կերանորմաները կրավական է փոփոխել ամիսը 1—2 անգամ։ Բանող ձիերի կերային ռացիոնը կազմելիս պետք է առաջնորդվել գրականության մեջ տրված նորմաներով։

Սովորաբար որպես բանող ձիերի կերակրման օրինակելի նորմաներ օգտագործում են պրոֆ. Ի. Ա. Պոպովի մշակած նորմաները։ (Աղյուսակ 3)։

Աղյուսակ 3

Բանող ձիերի կերանորմաները։

(Օրական մեկ գլխի համար (կգ.))։

Չիու կենդանի քաշը (կգ)	Զաշխատող		Թեթև աշխատանքի դեպքում		Միջակ աշխատանքի դեպքում		Ծանր աշխատանքի դեպքում	
	Կերի միավոր	Ապիտակից	Կերի միավոր	Ապիտակից	Կերի միավոր	Ապիտակից	Կերի միավոր	Ապիտակից
400	4·8	0,26	5,7—6,1	0.36—0.40	6.7—7,7	0.47—0.54	8.3—10,0	0.61—0.66
500	5,5	0,30	7,1—7,7	0,46—0.50	8,4—9,7	0,59—0.68	10,4—12,5	0,77—0,83
600	6,2	0.33	8.5—9.2	0,55—0.60	10,0—11.6	0,70—0.81	12,5—15,0	0.92—1,00

Ցանկալի է, որ կերային ռացիոնը բաղկացած լինի կոպիտ, խտացրած և հյութալի կերերից։

Կոպիտ կերերը ռացիոնում պետք է նախատեսնել յուրաքանչյուր 100 կգ կենդանի քաշին 3—3,5 կգ չափով, մնացած կերի միավորների պակասը լրացնելով խտացրած և հյութալի կերերի հաշվին։ Ամառը կարելի է ձիերին արա-

ծեցնել և այդ դեպքում արոտային կերը կարող է ծածկել ձիու կերի պահանջի մոտ 40 տոկոսը։

Բերենք բանող ձիերի օրական կերաբաժնի (ռացիոնի) մի քանի օրինակներ։

1) 400 կգ քաշ ունեցող և միջակ աշխատանք կատարող ձիերի համար՝

Կեր (կգ.)	Կերի միավոր (կգ.)
Վարսակ 2	2,0
Քուսպ բամբակի 1	1,1
Մարգագետնային խոտ 8	3,2
Առվույտ 2	1,0
Հյութալի կերեր 3	0,4
16	7,7

2) 400 կգ քաշ ունեցող և ծանր աշխատանք կատարող ձիերի համար.

Գարու ծղոտ՝ 6 կգ, լավորակ խոտ՝ 6 կգ, կարտոֆիլ կամ ճակնդեղ՝ 4—5 կգ և վարսակ կամ գարի՝ 3—4 կգ։ Նշված ռացիոնը կարելի է փոխարինել 15 կգ խոտով և 2—3 կգ հատիկային կերով։

3) 400 կգ քաշ ունեցող և միջակ աշխատանք կատարող ձիերի համար կարելի է խորհուրդ տալ նաև հետևյալ ռացիոնը. խոտ՝ 12 կգ, արմատապտուղներ՝ 6 կգ և վարսակ՝ 3 կգ, կամ խոտ՝ 4 կգ, կանաչ կեր՝ 40 կգ, վարսակ՝ 2 կգ, կամ խոտ՝ 6 կգ, ծղոտ՝ 6 կգ, կարտոֆիլ՝ 6 կգ, վարսակ՝ 3 կգ և թեփ՝ 1 կգ։

Այլ կերերի բացակայության դեպքում, բանող ձիերին կարելի է կերակրել միայն խոտով, կամ կանաչ կերով. միայն այս դեպքում հնարավոր է նրանց օգտագործել թեթև կամ միջակ աշխատանք կատարելու համար, նշված կերերը տալով մեծ բանականությամբ և հաճախակի։ Այդպիսի դեպքերում օրական տրվում է մինչև 25 կգ առվույտի խոտ։

Ծծմայր բանող զամբիկներին կաթի գոյացման համար առաջին 3 ամիսների ընթացքում պետք է նախատեսել լրա-

ցուցիչ 3 կերի միավոր, իսկ հաջորդ 3 ամսվա ընթացքում՝ 2 կերի միավոր։

Հղիության երկրորդ շրջանից սկսած բանող զամբիկների օրվա կերանորմաներին ավելացնում են 1,5—2 կերի միավոր։ Գործնականում այս հարցը լուծում են այսպես՝ հղի և ծծմայր զամբիկների բեռնվածությունը պակասեցնում են 1/3 չափով, պահպանելով անփոփոխ նրանց կերանորմաները։

Ձիերի կերակրման և ջրելու տեխնիկան պետք է հարմարված լինի նրանց մարսողության առանձնահատկություններին։ Իր կենդանի քաշի համեմատությամբ ձիու ստամոքսը համեմատաբար փոքր է, դրա համար չուրաքանչյուր անգամ տրվելիք կերի քանակը շատ մեծ չպետք է լինի։ Բացի դրանից, ձին բավականին դանդաղ է ուտում կերը, որը ծամում է մեծ խնամքով և կուլ տալիս փոքր բաժիններով (15—20 գրամ)։ Կերը ծամելիս ձին արտադրում է մեծ քանակությամբ թուք (կերի քաշից 3—4 անգամ ավելի), որով թրջվում է կերը և այնպես հասնում ստամոքսը։ Կերը այնքան էլ երկար չի մնում ստամոքսում (օրինակ՝ ընդունած 25 կգ խոտից 2 ժամից հետո ստամոքսում մնում է միայն 40%, իսկ 5 ժամից հետո՝ 20%)։

Ձիերին բավարար չափով և ժամանակին կերակրելու և ջրելու դեպքում նրանց օրգանիզմը ապահովվում է անհրաժեշտ սննդանյութերով և կանոնավորվում է նյութափոխանակությունը։ Փորձերը ցույց են տվել, որ միայն հանգիստը, առանց կերակրման, չի կարող ձիու աշխատունակությունը լրիվ վերականգնել ընդմիջման ընթացքում։

Որքան ձիու գիրության աստիճանը ցածր է, այնքան ավելի հեշտությամբ է խախտվում նրա օրգանիզմում նյութափոխանակությունը, հետևաբար և ընկնում աշխատունակությունը։ Վատ գիրացած ձին, ոչ լիարժեք կերակրման պայմաններում, աշխատանքը մեծ մասամբ կատարում է ի հաշիվ իր մկանային հյուսվածքի, որի վերականգնումը շատ դժվարությամբ է կատարվում։

Վերոհիշյալից բխում է այն, որ ձիերի բարձր արտադրո-

գականությունը ապահովելու համար անհրաժեշտ է նրանց միշտ պահել գիրության նորմալ վիճակում։

Դրա համար ոչ միայն պետք է ձիերին ապահովել անհրաժեշտ քանակությամբ լավորակ կերերով, այլև աշխատանքային օրվա և գիշերային հանգստի ժամանակ ճիշտ կազմակերպել նրանց կերակրումն ու ջրելը։

Զիարուծական ինստիտուտի տվյալների համաձայն, լրիվ բեռնվածությամբ աշխատեցնելիս՝ նորմալ գրության ձիերին աշխատանքային օրվա ընթացքում պետք է կերակրել և ջրել յուրաքանչյուր երեք ժամը մեկ անգամ։ Այդ ժամանակամիջոցում նրանք ընդունակ են կատարել 500—600 կիլոգրամոկիլոմետր աշխատանք։ Իսկ միջակ և մանավանդ միջակից ցածր գիրության ձիերին 300—400 կիլոգրամոկիլոմետր աշխատանք կատարելուց հետո պետք է կերակրել և ջրել աշխատանքի ընթացքում՝ յուրաքանչյուր 2 ժամը մեկ անգամ։ Ըստ որում յուրաքանչյուր ընդմիջման ընթացքում տրված կերը պետք է հավասար լինի մոտավորապես 2—3 կերի միավորի։

Որպես կանոն բանող ձիերին պետք է ջրել կերակրումից և ընդմիջումից 30 րոպե առաջ, ինչպես և աշխատանքը վերսկսելուց անմիջապես առաջ։

Ամեն մի ընդմիջման տևողությունը մասամբ կախված է նրանից, թե ինչպիսի կեր ենք տալիս ձիուն։ Օրինակ, եթե միայն խոտով ենք կերակրում, ապա ընդմիջումն ավելի երկար պետք է լինի, մանավանդ եթե ձին բացի խոտից ստանում է նաև խտացրած կեր։ Միջին հաշվով ձին 5—6 կգ խոտը կամ 16 կգ կանաչը ուտում է 1,5 ժամում։ Նույն ինստիտուտի տվյալներով (Ե. Վ. Կոժևնիկով և ուրիշները), այն աշխատանքների ժամանակ, որոնք ըստ իրենց բնույթի կանգառներ չեն պահանջում (վար, փոցխում), բացի հիմնական ընդմիջումներից, ամեն 45—50 րոպեն մեկ ձիուն պետք է տալ կարճատև (10—15 րոպե) հանգիստ։ Այդ ընդմիջումները ևս պետք է օգտագործել ձիերին կերակրելու համար՝ հենց կանգնած տեղում։

Դիշերվա ընթացքում ձիերին պետք է կերակրել 3—4 անգամ, փոքր բաժիններով։

Կարճատև՝ 10—15 րոպե տևող ընդմիջումների ժամանակ լավ է ձիերին տալ միայն խոտ։

Տրանսպորտային աշխատանքների ժամանակ բացի ճաշվա ընդմիջումից ձիերի կերակրման համար պետք է օգտագործել բեռնելու և բեռնաթափ անելու հետ կապված բոլոր կանգառները։ Ինչպես կերակրումից առաջ, այնպես էլ հետո, ձիուն 1—2 կմ անպայմանորեն պետք է քշել քայլով։ Ճանապարհին ձիուն ջրում են կերակրումից, հետևապես և հանգստից, մոտ կես ժամ առաջ։

Հաճախակի կերակրումը հնարավորություն է տալիս ձիու աշխատանքային օրը հասցնել 8—9 ժամի և միևնույն ժամանակ պահպանել նրա աշխատունակությունը։

Աշխատանքային օրվա ընթացքում բանող ձիերին, թեթև աշխատանք կատարելու դեպքում, կարելի է կերակրել միայն մեկ անգամ։ Իսկ եթե փորձենք կերակրման այդպիսի պայմաններում ձիերին միջակ և մանավանդ ծանր աշխատանքի համար օգտագործել, ապա նրանք արագորեն կհյուծվեն և նրանց արտադրողականությունը կարճ ժամանակում խիստ կպակասի, որի հետևանքով ձիերին հնարավոր կլինի աշխատեցնել հազիվ օրական 4 ժամ։

Տարբեր տեսակի կերերը պետք է ձիերին տալ որոշ հերթականությամբ։ Խորհուրդ է տրվում սկզբից ձիերին տալ կոպիտ կերերն, ինչպես, օրինակ՝ խոտը, և միայն որոշ ժամանակ անցնելուց հետո՝ հատիկային կերը։ Իսկ եթե ձին ստանում է նաև հյութալի կեր, ապա կոպիտ կերից հետո լավ է տալ հյութալի և վերջում՝ հատիկային կերը։

Աշխատանքից վերադարձած ձիերին հանգստի հենց սկզբից անմիջապես տալիս են խոտ, իսկ հատիկային կերը՝ միայն 1—2 ժամից հետո։ Կերն ընդունելուց հետո, ձիուն պետք է տալ հանգիստ (1—2 ժամ) և միայն դրանից հետո վերսկսել աշխատանքը։ Եթե ձիուն աշխատեցնում են կերակրելուց անմիջապես հետո, ապա նրանք հաճախ հիվան-

դանում են ծակոցներով՝ այսինքն աղեստամոքսային գործարանների խանգարումով։

Աշխատանքից հետո ձիերին ջրում են մեծ մասամբ կերակրման ժամանակ, երբ նրանք կոպիտ կերի մի մասը արդեն կերել են և որոշ չափով հանգստացել։ Խորհուրդ չի տրվում ձիերին ջրել հատիկային կեր ընդունելուց անմիջապես հետո, ոչ այնքան նրա համար, որ ջուրը անմարս հացահատիկը կարող է դուրս քշել ստամոքսից, այլ որովհետև դրա հետևանքով կարող են առաջանալ մարսողական գործարանների ծանր խանգարումներ։

Տարվա ընթացքում կերերի ծախսման ճիշտ պլանավորումը մեծ նշանակություն ունի։ Օրինակ՝ աշնանը կոպիտ կերերից նպատակահարմար է ավելի շատ կերցնել հարդը (ծղոտը), մզեղը՝ խոտը թողնելով ձմռան և գարնան ամիսների համար։ Բայց դա չի նշանակում, որ կարելի է ձմռան ընթացքում ձիերին վատ կերակրել և միայն գարնանային սեզոնի սկզբին նրանց կերակրումը լավացնել։

Այդ կերպ կերակրելու դեպքում ձիերը սկսում են նիհարել և մինչև անգամ, եթե գարնան աշխատանքների ընթացքում խիստ բարելավենք նրանց կերակրումը, միևնույն է, նրանք ի վիճակի չեն լինի աշխատել բարձր արտադրողականությամբ։

Միջին մեծության գյուղատնտեսական ձիու կերերի տարեկան ընդհանուր պահանջը կազմում է մոտ 35—40 ցենտներ կերի միավոր։ Այդ ընդհանուր քանակից 25—30% ընկնում է արոտային կերի վրա, 20—35%՝ խոտացրած կերերի, որպես կոպիտ կեր՝ 35—45% և որպես հյութալի կեր՝ 5—8%։ Կերերի նման փոխհարաբերության դեպքում կարելի է ճիշտ ռացիոններ կազմել, հետևապես և ձիերին պահել լավ վիճակում։

ՁԻԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՈՒՄԸ

Կոլտնտեսության բոլոր բանող ձիերը ամրացվում են արտադրական բրիգադներին։ Բրիգադի ներսում յուրաքանչյուր ձին ամրացվում է ձիապահին, որը ապահովում է ձիու խնամքն ու նրա համար պատասխանատու է միայն ախոռում գտնված ժամանակ։ Ձին ամրացվում է և ձիավարին, որը ձիու համար պատասխանատու է միայն աշխատանքի ժամանակ։ Ձիերի ամրացումը ձիապահին և ձիավարին կատարում է կոլտնտեսության վարչությունը, իսկ հաստատում է կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովը։ Բրիգադին ամրացված բոլոր ձիերի ընդհանուր պատասխանատվությունը ընկնում է բրիգադավարի վրա։

Աշխատանքի այս ձևի բաշխումը հնարավորություն է տալիս խուսափելու դիմաղրկությունից։ Ձիապահին ամրացվում է 10-ից մինչև 15 գլուխ ձի, իսկ ձիավարին՝ 1—2 ձի։ Ամրացումը կատարվում է հատուկ ակտի միջոցով։ Բանող ձիերին ամրացնում են բանիմաց և փորձված կոլտնտեսականներին։ Ձիավարը պետք է քաջ ծանոթ լինի ձիերի ռացիոնալ (ճիշտ) օգտագործման սկզբունքներին և աշխատանքի ժամանակ պետք է խստիվ պահպանի ձիերի կերակրման, ջրելու և խնամելու կարգը։

Կառավարությունը և պարտիան խորհուրդ են տալիս՝ այն կոլտնտեսություններում, որտեղ ձիերի քանակը 15-ից ավելի է, կոլտնտեսականներից նշանակել ձիաբուծության գծով վարիչ, որը ընտրում է ձիապահներ և ձիավարներ և անմիջականորեն ղեկավարում է ձիերի օգտագործման, խնամքի, կերակրման և բուծման (բանող գամբիկներին՝ նաև ժամանակին ուերմնավորելը) բոլոր աշխատանքները։

Ձիաբուծական ֆերմա ունեցող կոլտնտեսություններում ձիաբուծության ղեկավարի պարտականությունները դրվում են ֆերմայի վարիչի վրա, իսկ մնացած կոլտնտեսություններում՝ ավագ ձիապահի վրա։ Գյուղատնտեսական արտելի վարչության նախագահը պատասխանատու է կոլտնտեսու-

թյան բոլոր ձիերի աշխատանքի ճիշտ պլանավորման և կազմակերպման համար։

Ձիավարն ամեն անգամ ձին ձիապահից ընդունելիս ուշադրությամբ զննում է, որ նա առողջ լինի։ Եթե ձին ունի վնասվածքներ, կամ կերը լավ չի կերել, հիվանդ է, ապա այդպիսի դեպքում ձիավարը չի ընդունում ձին և այս մասին անհապաղ հայտնում է ավագ ձիապահին։ Աշխատանքից հետո ձիապահն իր հերթին ձիավարի ներկայությամբ ուշի-ուշով զննում է ձիուն և լծասարքը, վնասվածքներ, թերություններ նկատելու դեպքում ձիապահն այդ մասին իրազեկ է դարձնում ավագ ձիապահին, ձիաբուծության վարիչին (կամ ֆերմայի վարիչին), կամ կոլտնտեսության վարչության նախագահին, որպեսզի ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնվեն։

ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1949 թվի հոկտեմբերի 15-ի որոշման համաձայն, առնվազն երեք ամիսը մեկ անգամ պետք է անցկացնել բոլոր ձիերի ստուգատես։

Զոոտեխնիկական և անասնաբուժական անձնակազմին իրավունք է վերապահվում ազատել աշխատանքից բոլոր հիվանդ և հյուծված ձիերին մինչև նրանց բուժվելը և կազդուրվելը։ Ավելի հաճախակի կազմակերպված ստուգումները կարող են միայն օգուտ բերել գործին։

Նորմալ վիճակի և առողջ ձին պետք է լինի միջակ գիրության և բարձր աշխատունակություն ունենա։ Հարթ փայլուն մազերը, առույգ հայացքը և լավ ախորժակը ցույց են տալիս ձիու առողջ լինելը։

Աշխատանքի վարձատրումը կատարվում է ՍՍՌՄ Գյուղատնտեսության մինիստրության 1954 թվականի հունվարի 5-ի № 4 հրամանի հավելվածի համաձայն, ըստ որի՝

ա) Հասակավոր ձիեր խնամող ձիապահին ամրացվում է 10-ից մինչև 15 գլուխ ձի։

Ձիապահին աշխատանքներ են գրանցվում պահպանված յուրաքանչյուր ձիու և նրա խնամքի համար, հաշվի առնելով գիրությունը, ամսական 2-ից 4 աշխատանք։

Ստացված յուրաքանչյուր առողջ մտրուկի համար՝ 10 աշխատանք և այդ մտրուկը մինչև մորից անջատելը աճեցնելու համար՝ 15 աշխատանք։

բ) Մորից անջատելուց հետո մինչև 3 տարեկան մատղաշներ խնամող ձիապահին ամրացվում է 12—16 գլուխ։

Նրան աշխատանքներ են գրանցվում՝ պահպանված յուրաքանչյուր գլխի և խնամքի համար, հաշվի առնելով գիրությունը, ամսական 2,0—3,5 աշխատանք։

գ) Գիշերային արածեցման դեպքում ձիապահին ամրացնում են 20—30 գլուխ հասակավոր ձիեր կամ մինչև 3 տարեկան հասակի մատղաշներ և նրան աշխատանքներ են գրանցվում պահպանված յուրաքանչյուր գլխի համար, հաշվի առնելով գիրության վիճակը, ամառվա ժամանակաշրջանում՝ ամսական 0,7—1,0 աշխատանք, գարնան և աշնան ժամանակաշրջանում՝ 1,0—1,5 աշխատանք։

դ) Ձիերի երամակային պահպանման դեպքում 2—4 մարդուց բաղկացած երամակային բրիգադին ամրացվում են 60—150 գլուխ դամբիկներ կամ մինչև 3 տարեկան մատղաշներ։

Երամակային բրիգադին աշխատանքներ են գրանցվում պահպանված յուրաքանչյուր գլխի համար, հաշվի առնելով գիրությունը, ամսական՝ 0,5—2,0 աշխատանք։

Ստացված յուրաքանչյուր առողջ մտրուկի համար՝ 4—6 աշխատանք, իսկ այդ մտրուկը մինչև մորից անջատելը աճեցնելու համար՝ նորից 6—9 աշխատանք. աշխատանքի և նստելու համար վարժեցրած յուրաքանչյուր ձիու համար՝ 3—5 աշխատանք. յուրաքանչյուր ձի խարանելու (դաղմելու) համար 0,15 աշխատանք։

Ստացված մտրուկների և պահպանած գլխաքանակի համար գրանցված աշխատանքների բաշխումը երամակային բրիգադի անդամների միջև սահմանվում է կոլտնտեսության վարչության կողմից երամակը բրիգադին ամրացնելու ժա-

մանակ, հաշվի առնելով նրանց որակավորումը և աշխատանքի ստաժը։

և) Վարժեցման մեջ գտնվող տոհմային մատղաշներ խնամող ձիապահին ամրացվում է 4—6 գլուխ։ Նրան աշխօրեր են գրանցվում պահպանած յուրաքանչյուր գլխի համար, հաշվի առնելով դիրությունը, ամսական՝ 3,5—6 աշխօր։

զ) Մարզիչ ձիավարին կամ մարզիչ ժոկեյին ամրացվում են 12—24 գլուխ տոհմային մատղաշներ և նրան աշխօրեր են գրանցվում վարժեցման աշխատանքի համար, յուրաքանչյուր գլխի համար ամսական 1,0—3,0 աշխօր։

Մարզիչի օգնականին աշխօրեր են գրանցվում մարզիչին գրանցված աշխօրերի 60—80 տոկոսի չափով։

է) Արտադրող հովատակներ խնամող ձիապահին աշխօրեր են գրանցվում՝ արտադրող հովատակների կերակրման, խնամքի և պահպանման համար—յուրաքանչյուր գլխի համար ոչ զուգավորման շրջանում ամսական 8—10 աշխօր և զուգավորման շրջանում՝ 10—13 աշխօր, նրան ամրացված հովատակով ծածկված և հղիություն հաստատված յուրաքանչյուր զամբիկի համար՝ 2—3 աշխօր։

ը) Ձիավարին՝ աշխատեցնելու համար ամրացված յուրաքանչյուր ձիու համար, միջին դիրության դեպքում, գրանցվում է ամսական 3 աշխօր, իսկ լավ դիրության դեպքում—6 աշխօր և նրան ամրացված զամբիկներից ստացված ու մինչև մորից անջատելը պահպանված յուրաքանչյուր մորուկի համար — 10 աշխօր։

ժ) Արտադրական բրիգադի բրիգադիրին ամրացված յուրաքանչյուր միջակ դիրության ձիու համար ամսական գրանցվում է 0,2 աշխօր, յուրաքանչյուր լավ դիրության ձիու համար՝ ամսական 0,4 աշխօր, բացի այդ, ստացված և մինչև մորից անջատելն աճեցրած յուրաքանչյուր մորուկի համար՝ 3 աշխօր։

Արտադրական բրիգադների բրիգադիրներին ու ձիավարներին միջակից ցածր դիրության ձիերի համար աշխօ-

բեր չեն գրանցվում։ Ձիերի վրա վերք կամ այլ վնասվածք առաջանալու համար մեղավորներից հետ է պահվում մինչև ձիու առողջանալը, ձիու յուրաքանչյուր օրվա պարապուրդի համար 2-ական աշխատանք, իսկ դամբիկի վիժման համար մեղավորներից՝ 20 աշխատանք։

Ավագ ձիապահին կամ ավագ երամակավարին ձիապահների և երամակապահների աշխատանքը ղեկավարելու համար ամսական լրացուցիչ գրանցվում է 10—15 աշխատանք։

ՁԻԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Տնտեսության բանող ձիերին ըստ հնարավորության ավելի լրիվ և ճիշտ կերպով օգտագործելու համար, անհրաժեշտ է նրանց աշխատանքը պլանավորել։ Պլանը պետք է ընդգրկի ինչպես կոլտնտեսության մեջ, այնպես էլ նրանից դուրս տարվող բոլոր աշխատանքները և պետք է ապահովի գյուղատնտեսական աշխատանքների կատարումը նշանակված ժամկետներին։ Պլանն ընդգրկում է ինչպես ամբողջ տարվա ընթացքում տարվելիք աշխատանքները, այնպես էլ գյուղատնտեսական աշխատանքների առանձին շրջանները։

Ձիերի ճիշտ օգտագործման կազմակերպումը նպատակ ունի՝

1) ապահովել նրանց աշխատանքի բարձր արտադրողականությունը՝ կերի լավ հատուցման պայմաններում, 2) խնայել ձիերի միջոցով կատարվող աշխատանքների ինքնարժեքը, 3) ըստ հնարավորության, ավելի երկար ժամանակ պահպանել ձիերի լրիվ աշխատունակությունը, 4) յուրաքանչյուր բանող դամբիկից ամեն տարի ստանալ սերունդ։

Դրա համար անհրաժեշտ է, որ բանող ձիերը միշտ լինեն ցանկալի դիրքության։ Ճիշտ կերպով որոշել նրանց բեռնվածությունը և օգտագործման տևողությունը օրվա ընթացքում (մինչև 8—9 ժամ)։

Անհրաժեշտ է տնտեսության մեջ օգտագործվող ձիերին խմբավորել ըստ իրենց աշխատունակության։ Այդ հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ձիուն օգտագործել ավե-

լի նպատակահարմար, վնաս չհասցնելով նրա առողջությանը։

Առաջին խմբի մեջ առանձնացնում են ավելի ուժեղ և դեր ձիերին, որոնց օգտագործում են լրիվ բեռնվածությամբ՝ ավելի ծանր աշխատանքների համար։

Երկրորդ խմբի մեջ մացնում են ավելի նվազ ուժեղ և ավելի ցածր դիրքային ձիերին, այս խմբի ձիերին օգտագործում են ավելի թեթև աշխատանքների մեջ, նրանց համար սահմանելով ավելի ցածր արտադրանորմաներ։

Երրորդ խմբի մեջ առանձնացնում են երիտասարդ (առաջին անգամ օգտագործվող) ձիերին, հղի և ծծմայր զամբիկներին, նրանց համար սահմանելով ամենացածր արտադրանորմաները։

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ընդհանուր առմամբ դաշտային աշխատանքները ձիու համար կարելի է ավելի ծանր համարել, քան տրանսպորտային աշխատանքները։

Գյուղատնտեսական աշխատանքների մեծ մասը ձիուց պահանջում են մեծ լարվածություն։

Ինչպես հայտնի է, դաշտային աշխատանքները կապված են ժամկետների հետ, այստեղից էլ մեծ նշանակություն է ստանում տրակտորի և ձիու աշխատանքի հաջող զուգորդումը, որը երկուսի աշխատանքն էլ ավելի էֆեկտիվ է դարձնում։ Պետք է ձգտել ըստ հնարավորության ձիու աշխատանքը պլանավորել այնպես, որ ձին տարվա մեջ ավելի երկար ժամանակաշրջանում օգտագործվի։

Որպես կանոն տրակտորի միջոցով պետք է կատարել ավելի ծանր աշխատանքները, ինչպես, օրինակ՝ խորը վարը, ցանքը, հունձը, կալսումը և այլն, ավելի թեթև աշխատանքների կատարումը թողնելով ձիերին։ Որոշ պայմաններում վարն ու ցանքը կատարում են ձիերով, օրինակ, փոքր կամ տրակտորի աշխատանքի համար անհարմար դիրք ունեցող հողակտորների վրա։

Պետք է ամեն կերպ աշխատել գարնանային գյուղատնտեսական աշխատանքներն ըստ հնարավորության կատարել ավելի սեղմ ժամկետներում. դրա հետևանքով գարնանային սեզոնում ստեղծվում է ինչպես կենդանի, այնպես էլ մեքենայացված քարշող ուժի օգտագործման մեծ լարվածություն։ Այստեղից էլ անհրաժեշտ է՝ որքան կարելի է ավելի լրիվ կերպով օգտագործել բանող անասուններին, մասնավորապես ձիերին։ Դրա համար ձիերին նախօրոք, ըստ նրանց աշխատունակության, բաժանում են առանձին խմբերի և կազմում են նրանց օգտագործման պլանը։ Ձիերին բարձր արտադրողականությամբ օգտագործելու համար անհրաժեշտ է նրանց համապատասխան ձևով նախապատրաստել գաշտային աշխատանքների համար։ Գարնանացանի նախօրյակին պետք է ձիերին հանգիստ տալ և ուժեղացնել նրանց կերակրումը. դա առանձնապես անհրաժեշտ է այն ձիերի համար, որոնք ձմռան ընթացքում լարված աշխատանք են տարել, կամ նիհար են ու հյուծված։

Կոլտնտեսություններում կատարած դիտողությունները ցույց են տալիս, որ եթե մինչև գարնանացանի սկսվելը ձիերը վատ են կերակրվել, ապա աշխատանքի ընթացքում, մինչև անգամ լավ կերակրման դեպքում մնում են նիհար և նրանց արտադրողականությունը ցածր է լինում։

Մինչև գարնանային աշխատանքների սկսվելը պետք է լծելու համար ընտրել ձիերի զույգերը։

Եթե ձիերն արդեն զույգ-զույգ ընտրված են և աշխատում են, ապա լավ կլինի նորից ստուգել զույգերի ընտրության ճշտությունը։ Չպետք է մոռանալ, որ ձիերի զույգերի ճիշտ ընտրությունը՝ նրանց ռացիոնալ օգտագործման անհրաժեշտ պայմաններից մեկն է հանդիսանում։ Միասին լծվող ձիերը, որքան հնարավոր է, ըստ իրենց աշխատունակության, տոկունության և խառնվածքի (տեմպերամենտի) պետք է նման լինեն։

Ինչպես հայտնի է, ձիու աշխատունակությունը մեծ չա-

փով կախված է նրա բարձրությունից, կենդանի քաշից և մասսիվությունից։ Դրա համար էլ ձիերի զույգերը ընտրելիս պետք է նկատի ունենալ նշված ցուցանիշները, ինչպես նաև նրանց գիրությունը և առողջության դրությունը։ Բացի այս ամենից, միասին լծվող ձիերը պետք է հարմարված լինեն միասին աշխատելու, այլապես նրանք հանգիստ համահավասար քայլով չեն կարող աշխատել, որի հետևանքով կընկնի նրանց արտադրողականությունը։

Մինչև գարնանացանի աշխատանքների սկսվելն անհրաժեշտ է երիտասարդ ձիերին աստիճանաբար աշխատանքի վարժեցնել. նույնը վերաբերում է նաև այն մեծահասակ ձիերին, որոնք երկարատև հանգիստ են ունեցել. ինչպես, օրինակ, ծծմայր զամբիկները։ Դրա համար մինչև վար ու ցանքի աշխատանքների սկսվելը ձիերին օգտագործում են թեթև բեռների փոխադրման և այլ թեթև աշխատանքների համար, ինչպես, օրինակ, աշնանացանների և ցրտահարկի փոցխումը և այլն։ Անհրաժեշտ է նաև կարգի բերել լծասարքը, գյուղատնտեսական գործիքները, ֆուրգոնները և այլն։

Ձիերի դաշտային աշխատանքներին պատրաստ լինելը ստուգելու համար լավ է բրիգադներով նախապես դաշտ դուրս գալ, որը հնարավորություն կտա եղած թերություններն ավելի լավ նկատել և դրանք վերացնել։

Գարնանային շրջանում կոլտնտեսություններում ձիերի միջոցով կատարում են հետևյալ աշխատանքները՝ փոցխումը, ցանքը, կուլտիվացիան, որոշ դեպքերում վարը և այլն։ Այդ շրջանում ձիերին լայնորեն օգտագործում են նաև սերմացուն, զանազան պարարտանյութերը դաշտ տեղափոխելու, ինչպես նաև տրակտորների համար վառելանյութ և կոլտնտեսականների համար սննդամթերքներ, ջուր հասցնելու համար։

Ձիերին դաշտային աշխատանքների համար օգտագործելիս՝ պետք է ձգտել որքան կարելի է բարձրացնել նրանց աշխատանքի արտադրողականությունը, կրճատել պարապուրդները և այսպիսով ավելացնել օգտավետ աշխատանքի տևողությունը օրվա ընթացքում։

Գարնանային աշխատանքների շրջանը համընկնում է ձիերի զուգավորման կամպանիայի սկզբի հետ, ուստի պետք է ձգտել այնպես կազմակերպել զուգավորման գործը, որ յուրաքանչյուր զամբիկից մարուկ ստացվի։

Այս հարցում մեծ նշանակություն ունի ոչ միայն զամբիկների ժամանակին սերմնավորելը, այլև նրանց աշխատեցնելու, խնամելու և կերակրելու ճիշտ ռեժիմը՝ հնարավոր վաղ վիժումները կանխելու համար։

Գարնանային դաշտային աշխատանքների համար պետք է սահմանել աշխատանքային օրվա հետևյալ ռեժիմը.

ժամը 5—8 — աշխատանք.
» 8—9 — ընդմիջում նախաճաշի համար.
» 9—11 — աշխատանք.
» 11—2 — հաշվա ընդմիջում և ձիերի կերակրումը խոտով և խտացրած կերերով։
» 2—5 — աշխատանք.
» 5—6 — երեկոյան հանգիստ.
» 6—9 — աշխատանքի շարունակություն։

Ձիերի նորմալ աշխատունակության համար խտացրած կերերի պակասության դեպքում տրվում է խտացրած կեր 2 կգ. և խոտ՝ 21 կգ. որը կազմում է 11,7 կերային միավոր։ Կարելի է խորհուրդ տալ օրվա աշխատակարգի հետևյալ սխեման՝

ժամը 5—7 $^1/_2$ — աշխատանք.
» 7$^1/_2$ — 9 — կերակրում (4 կգ խոտ).
ժամը 9—11 — աշխատանք.
» 11—2 — կերակրում (5 կգ խոտ և 1 կգ խտացրած կեր).
» 2—4$^1/_2$ — աշխատանք.
» 4$^1/_2$ — 6 — կեսօրյա հանգիստ և կերակրում (4 կգ խոտ).
» 6—8 — աշխատանք։

Ձիերին ջրում են կերակրումներից, կեսօրյա հանգստից

և աշխատանքային օրվա վերջից 30 րոպե առաջ։ Ցանկալի է ձիերին ջրել նաև ճաշվա ընդմիջման վերջում։

Երեկոյան ժամը 8-ից մինչև առավոտյան ժամը 5-ը ձիերին հանգիստ է տրվում, որի ընթացքում 2—3 կգ կերաբաժիններով կերցնում են օրվա նորմայից մնացած խոտը։ Ձիերին ջրում են դիշերվա ժամը 11-ին, առավոտյան ժամը 4-ին և աշխատանքի դուրս գալուց առաջ։

Առավոտյան ժամը 4-ին ձիերին տալիս են 1 կգ վարսակ։ Այս պայմաններում 400 կգ քաշ ունեցող ձին պետք է դատարի մոտ 1500 կիլոգրամոկիլոմետր աշխատանք, որը մոտավորապես կհամապատասխանի 0,6 հեկտար փափուկ վարի։ Ընդմիջումների ժամանակ ձիերին կերակրում են ու ջրում տեղում, կամ աշխատանքի վայրից ոչ հեռու։ Իսկ յուրաքանչյուր 35—50 րոպեն մեկ տրվող կարճատև (11—15 րոպե) հանգստի ժամանակ, ձիերին մի քիչ խոտ են տալիս հենց կանգ առած տեղում, ինչպես ասում են՝ «ակոսում»։ Լավ է շարաթը մեկ անգամ ստուգել ձիերի կենդանի քաշը և վերջինս նկատելի չափով պակասելու դեպքում, ուժեղացնել կերակրումը։ Նիհարելու հետևանքով ձիու անուրը (խոմուտը) իր վրա մեծանում է և շփման տեղում շատ հեշտությամբ վերք առաջացնում։ Դրա համար պետք է միշտ հետևել, որ եթե անուրը տվյալ ձիուն արդեն չի համապատասխանում, անհրաժեշտ է նորից հարմարեցնել նրան։

Դաշտավարական բրիգադի բրիգադիրը նախօրոք որոշում է, թե տվյալ հողամասը քանի դլուխ ձի է հարկավոր ուղարկել։ Աշխատանքի ուղարկված ձիերի ավելորդ քանակը միայն իջեցնում է նրանց ամեն մեկի արտադրողականությունը։

Ձիերի արտադրողականության բարձրացման գործում մեծ նշանակություն ունի պայքարը դատարկ շարժընթացների դեմ։ Կոլտնտեսությունների պրակտիկան ցույց է տալիս, որ բանող ձիերի համար կացատեղի կազմակերպումը մեծ չափով նպաստում է խուսափելու դատարկ շարժընթացներից։

Եթե մշակվող հողամասը գտնվում է տնտեսությունից մինչև 2 կմ հեռավորության վրա, ապա բրիգադի համար

Նպատակահարմար է առավոտյան վաղ գալ աշխատանքի վայրը (դաշտ) և երեկոյան վերադառնալ տնտեսություն։ Այդ այս դեպքում, վատ եղանակից պատսպարվելու համար, անհրաժեշտ է դաշտում ստեղծել հարմարություններ — շվաքարան, ծածկ և այլն։

Անհրաժեշտ է նաև ձիերի կերակրման համար ունենալ տաշտակներ և ջրելու համար՝ դույլեր։

Եթե դաշտը տնտեսությունից բավականաչափ հեռու է գտնվում (2 կմ ավելի), ապա միանգամայն նպատակահարմար է այնտեղ կայմակերպել կացատեղ՝ կառուցելով էժանագին շեներ (սարայներ) ձիերը պատսպարելու և լծասարքը, կերերը և ինվենտարը պահելու համար։

Ձիերի աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար ցանկալի է, որ մշակվող հողամասի երկարությունը մոտ 1500 մ լինի, որի դեպքում վարի մի շրջանը ձիերը անցնում են մոտ 50 բոպեում։ Դա հնարավորություն է տալիս ձիերի կարճատև կանգառները միշտ նույն տեղում ունենալ, հետևապես և ձիերի կերը, մաճկալի իրերը և նրա համար սննդամթերքները մի տեղում պահել։ Որքան վարելաշերտը լայն է և կարճ, այնքան ձիերը ավելի շատ դատարկ շրջընթաց տարածություն պիտի անցնեն։

Անկախ հողամասի ձևից, վարի ժամանակ ձիերին յուրաքանչյուր 45—50 բոպեում տալիս են կարճատև (10—15 բոպե) հանգիստ։ Իսկ ավելի թույլ ձիերի համար այդ դադարներն ավելի հաճախակի պետք է լինեն։

Մեր պայմաններում ձիերին ավելի հաճախ օգտագործում են փոցխելու համար։ Սովորաբար փոցխումը համարում են թեթև աշխատանք, որովհետև այս դեպքում ձիու գործադրած քարշի ուժն այնքան մեծ չի լինում, սակայն հողը փուխր լինելու հետևանքով հերկը փոցխելիս ձիու ոտքերը համարյա մինչև կապի հոդերը խրվում են հողի մեջ, որով մեծ չափով դժվարանում է նրա աշխատանքը։ Ուստի այդպիսի դեպքերում ձիու բեռնվածությունը որոշելիս այս հանգամանքը պետք է նկատի ունենալ և նրա նորմալ քարշի ուժը 20—25 տոկոս պակաս նախատեսել։

Անթույլատրելի է փափուկ հերկի փոցխումը կատարել ձիու վրա նստած, որովհետև այս դեպքում ձին ավելի շատ կխրվի հողի մեջ։

Շարքացանն աշխատեցնելիս ձիերի գործադրած քարշի ուժը կախված է շարքացանի կոնստրուկցիայից, նրա խոփիկների կամ դիսկերի քանակից, ցանքի խորությունից և հողի որակից։ Այդ դեպքում ևս փափուկ, փուխր հերկի վրա ցանք կատարելիս ձին ավելորդ էներգիա է ծախսում։

Գարնանացանի աշխատանքներին սովորաբար հաջորդում է ցելերի մշակումը։ Վաղ ցելերի մշակման ժամանակ կարելի է առաջնորդվել ձիերի օգտագործման այն կարգ ու կանոնով, ինչ որ ընդունված է գարնանացանի ժամանակ։

Լավ է գարնանացանի և վաղ ցելերի մշակման աշխատանքները ավարտելուց հետո ձիերին 10—15 օրով հանգիստ տալ։ Այդ ժամանակաշրջանում սկսվում է արոտային շրջանը և ձիերին կարելի է տալ նաև բաղած կանաչ խոտ։ Եթե մինչև խոտհնձի աշխատանքների սկսվելը դեռ բավականին ժամանակ կա, ապա ձիերին կարելի է օգտագործել միջշարքային մշակության և ներտնտեսական զանազան փոխադրումների համար։

ՁԻՈՒ ԱՄԱՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ամառային շրջանում ձիերի կատարած աշխատանքի ծավալն ավելի մեծ է լինում և ավելի բազմազան։ Ամառվա ընթացքում ձիերը հիմնականում օգտագործվում են խոտհնձի, հացահատիկների բերքահավաքի, շարքահերկ կուլտուրաների մշակության և աշնանացանի համար հողամասեր նախապատրաստելու, իսկ լեռնային շրջաններում մինչև անգամ՝ աշնանացանքի մի մասը կատարելու համար։ Բոլոր բոլոր աշխատանքները ժամանակին կատարելու համար անհրաժեշտ է կազմել կենդանի քաշող ուժի, այդ թվում և ձիերի աշխատանքի մանրամասն պլանը։ Պլանում պետք է նախատեսել ձիերի լայն օգտագործումը, առանձնապես բերքահավաքի մեքենաներն աշխատեցնելու համար, ինչպես,

օրինակ՝ խոտհար, հնձի մեքենաները, ձիափոցխները և այլն։ Այս անհրաժեշտ է նրա համար, որ ձիու ամառվա բոլոր աշխատանքներից կարևորը բերքահավաքն է։ Ամռանը ձիերին մեծ չափով պետք է օգտագործել նաև պետպարտավորությունների գծով, հանձնվելիք գյուղատնտեսական մթերքները ժամանակին նշանակված պունկտերը փոխադրելու համար։

Բերքահավաքի շրջանում ձիերի աշխատանքը պետք է սկսել արևածագին և վերջացնել արևը մայր մտնելու ժամանակ, տալով նրանց 2—3½ ժամ հանգիստ՝ ճաշին և ավելի կարճատև հանգիստ՝ նախաճաշին և ճաշից հետո, չհաշված 45—50 բոպեն մեկ անգամ տրվող կարճատև կանգառները։

Խոտհար և հնձող մեքենաներն աշխատեցնելիս նպատակահարմար է կազմակերպել ձիերի երկհերթ հերթափոխային օգտագործումը, մանավանդ, երբ մեքենաների պակաս է զգացվում։ Ամենից հարմար է ձիերի հերթափոխային աշխատանքը կազմակերպել հետևյալ ձևով՝ մեկ հերթափոխը աշխատեցնել մինչև ցերեկվա ընդմիջումը, մյուսը՝ ընդմիջումից հետո, օրվա երկրորդ կեսին։ Եթե ձիերը ուժեղ չեն, ապա պետք է ձիերի հերթափոխությունը 3—4 անգամ կատարել։

Ձիերի մասսայական օգտագործման ժամանակ նպատակահարմար է մեքենաների վերանորոգումը կազմակերպել տեղում — դաշտում, որը հնարավորություն կտա կրճատելու ձիերի պարապուրդները։

Լծասարքը փչացնելու պատճառով առաջացած պարապուրդները կրճատելու համար, ձիերի վրա աշխատող կոլտնտեսականները պետք է իրենց հետ ունենան վերանորոգման համար անհրաժեշտ գործիքներ և նյութեր՝ լծասարքն անմիջապես վերանորոգելու համար։ Խոտհար, հնձող և բերքահավաքի այլ մեքենաներն աշխատեցնելիս, պետք է ի նկատի ունենալ այն, որ աջ կողմի ձին (մեքենայի կտրող մասի կողմը) ավելի է ուժ գործադրում, քան ձախ կողմի ձին. դրա համար աջ կողմում լծած ձին պետք է ավելի ուժեղ լինի, քան ձախ կողմում լծածը։

Թեթև մեծածավալ բեռների, ինչպես, օրինակ՝ խոտի, ծղոտի, օրանի տեղափոխման ժամանակ, սայլը, ֆուրգոնը պետք է հարմարեցնել այդ նպատակի համար։ Մեծածավալ բեռների տեղափոխման համար ամենից լավ է ունենալ ուկրաինական տիպի գրոբինաներով սայլեր, որոնք ոչ միայն հնարավորություն են տալիս փոխադրումները անկորուստ կատարելու, այլև բեռի բարձումը կատարելու ավելի կարճ ժամանակամիջոցում, կրճատելով դրա համար պարապուրդը. պարապուրդների կրճատման հարցում մեծ նշանակություն ունի սայլերը կամ ֆուրգոնները բարձելու և բեռնաթափելու համար պահանջվող ժամանակամիջոցի կրճատումը։

Թեև խոտհարը, հնձի և բերքահավաքի այլ մեքենաներն աշխատեցնելու համար ձիերի գործադրած քարշի ուժն այնքան էլ մեծ չէ, բայց և այնպես նրանց համար այդ աշխատանքը հանդիսանում է ծանր, քանի որ ձիերից այն պահանջում է բավականին մեծ արագություն (1 ժամում 4,5—5 կմ)։ Դրա համար նշված մեքենաներին պետք է լծել ավելի ուժեղ և տոկուն ձիեր, որոնք նաև ընդունակ լինեն արագ քայլելու։ Տնտեսության մեջ այդպիսի ձիերի բացակայության դեպքում երկու ձիու փոխարեն երեք ձի են լծում։

Որովհետև բերքահավաքի աշխատանքները կատարվում են տարվա շող եղանակներին, ապա պետք է հսկել, որ ձիերին հաճախակի ջրեն, այն է՝ օրական հինգ անգամ։

Խոտհնձի շրջանում, քանի որ ձիերին ամեն 2—3 ժամը մեկ կերակրում են թարմ հնձած կանաչ խոտով, խոտացրած կերերի քանակը պետք է զգալի չափով կրճատել։ Այդ շրջանում սովորաբար կանաչով կերակրում են կարճատև ընդմիջումների ժամանակ, իսկ խոտացրած կերերը տալիս են ճաշվա մեծ ընդմիջումին և առավոտյան՝ մինչև աշխատանքն սկսելը։ Գիշերը ձիերին կերցնում են թաղած կանաչ խոտ, կամ թողնում արածելու։

Բերքահավաքի ընթացքում ձիերի աշխատանքի կարգ ու կանոնն ըստ էության մնում է նույնը, ինչ որ գարնանացանի աշխատանքների ժամանակ։

ՁԻՄԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Աշնան ընթացքում ձիերի կատարած աշխատանքը հիմնականում հետևյալն է. հացահատիկային կուլտուրաների բերքահավաքի ավարտումը և կալսումը, աշնանացանը, ցրտահերկը, կարտոֆիլի բերքահավաքը և այլն։ Բացի դաշտային աշխատանքներից, աշնանը ձիերին լայնորեն օգտագործում են զանազան բեռների տեղափոխման համար, ինչպես, օրինակ, բերքի փոխադրումը դաշտերից մթերման կայանները կամ կոլտնտեսության պահեստները, վառելափայտի, շինանյութերի փոխադրումը և այլն։

Թված բոլոր աշխատանքները ձիուց մեծ լարվածություն են պահանջում, ինչպես, օրինակ, կարտոֆիլի և ճակնդեղի բերքահավաքը, փափուկ դաշտի միջով բերքի տեղափոխումը, կամ ցրտահերկը, որը որպես կանոն կատարում են զգալի խորությամբ։

Աշնան աշխատանքն ավելի լարված է լինում նաև այն պատճառով, որ ցերեկը, հետևապես և աշխատանքային օրը, ավելի կարճ է լինում, քան ամառվա ամիսներին։ Այդ շրջանում հղի զամբիկների մեծ մասն արդեն ազատված է լինում ծանր աշխատանքից և օգտագործվում է միայն թեթև աշխատանքների համար, ինչպես, օրինակ, անասնապահական ֆերմաների սպասարկումը։

Աշնանային դաշտային աշխատանքների, մանավանդ կարտոֆիլի բերքահավաքի համար, հատկացնում են ամենաուժեղ ձիերին (առաջին խմբից) այդպիսիների պակասի դեպքում մեկ լծի մեջ ավելացնում են ձիերի քանակը։ Նույնը կարելի է ասել աշնանավարի՝ ցրտահերկի աշխատանքների մասին, որոնց համար նույնպես պահանջվում են ուժեղ և տոկուն ձիեր։

Միջակ, թույլ և հղի զամբիկներին պետք է օգտագործել ավելի թեթև աշխատանքների համար։

Վարի ժամանակ ձիերի աշխատանքը որոշ չափով թեթևացնելու համար անհրաժեշտ է գութանները միշտ սարքին պահել, իսկ խոփերը ժամանակին զոդել։

Աշնանը, ցերեկները կարճանալու հետևանքով, աշխատանքային օրը շատ չկարճացնելու համար, պակասեցնում են ընդմիջումների քանակը՝ երեք ընդմիջման փոխարեն տալով 2 ընդմիջում, կամ ընդմիջումների քանակը թողնելով նույնը, կրճատում են նրանց տևողությունը։ Այդպիսի կրճատում հնարավոր է միայն այն դեպքում, երբ ձիերն ընդմիջումների ժամանակ, բացի խոտից, ստանում են 1,5—2 կգ ճզմած կամ ջարդված հացահատիկ։

Ձիերի կերակրման համար օգտագործում են նաև կարճատև հանգիստները (15 րոպե), որոնք նրանց տրվում են լծած վիճակում, աշխատանքի տեղում (ակոսում)։ Ինչպես և մյուս բոլոր դեպքերում, ձիերին ջրում են ընդմիջումից և կերակրումից 30 րոպե առաջ։

Ինչպես վերևում նշեցինք, ցրտահերկը ձիերի համար ամենածանր աշխատանքներից մեկն է համարվում, դրա համար էլ նպատակահարմար է և միանգամայն ձեռնտու մեկ լույդ ձիու փոխարեն լծել չորս կամ ավելի ձիեր։

Այսպես, եթե 2 ձին մի խոփանի դուքանով օրական վարեն 0,5—0,7 հեկտար տարածություն, ապա չորս ձին երկխոփանի դուքանով (ընդգրկումը՝ 54 սմ) նույն ժամանակամիջոցում կկատարեն 1,3 հեկտար։ Բազմաձիանի լուծքն իրեն առանձնապես արդարացնում է տնտեսության մեջ աշխատավոր ձեռքերի պակաս զգացվելու դեպքում։

Աշնան սեզոնում տրանսպորտի աշխատանքները (բեռների տեղափոխումը) ձիերի աշխատանքի մեջ մեծ տեղ են գրավում, մանավանդ հնձած հացահատիկի (քուլաշի) տեղափոխումը, ինչպես նաև գանազան շինանյութերի փոխադրումն անասնաշենքերի և այլ շինարարության համար։

ՁԻՈՒ ՁՄԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ձմեռը ձիերին օգտագործում են կոլտնտեսության համար տնտեսանյութ փոխադրելու, ինչպես նաև գոմաղբը դաշտ տանելու և քիմիական պարարտանյութերը տեղափոխելու համար։

Ձմեռային շրջանում ձիերին ավելի մեծ չափով են օգտագործում անասնապահական ֆերմաների սպասարկման համար, թեև բանող ձիերի քանակը այդ շրջանում պակասում է այն պատճառով, որ զամբիկների մեծ մասն արդեն հղիության վերջին շրջանում են լինում, երբ ծնելուց 2 ամիս առաջ բոլորովին դադարում են նրանց աշխատեցնել։

Ավելի նպատակահարմար է ձիերին առաջին հերթին օգտագործել կոլտնտեսությունից դուրս կատարվող փոխադրումների համար, իսկ ներտնտեսական աշխատանքները կատարել եզներով։

Ձմռան ընթացքում ձիերի օգտագործումը պետք է կազմակերպել այնպես, որ նրանք միևնույն ժամանակ նախապատրաստվեն գարնանային աշխատանքներին։ Շատ հաճախ ձիերն աշնան աշխատանքների վերջում լինում են նիհար և մինչև անգամ՝ հյուծված։ Այդպիսի ձիերին հարկավոր է տալ երկարատև հանգիստ և միևնույն ժամանակ լավացնել նրանց կերակրումն ու խնամքը այն հաշվով, որ գարնանային սեզոնի սկզբին նրանք արդեն նորմալ վիճակում լինեն։

Ուժեղ սառնամանիքների ժամանակ պետք է ձիերին պաշտպանել մրսելուց և ցրտահարությունից։

Պետք է հետևել, որ աշխատանքի ընթացքում ձիերը շատ չքրտնեն և աշխատանքից վերադառնալիս վերջին մեկ կիլոմետր տարածությունը անցնեն քայլով։ Ախոռում, մանավանդ, եթե այն ցուրտ է, աշխատանքից վերադարձած ձիերին պետք է տապճակով (ձիու ծածկոց) ծածկել, մինչև նրանց նորմալ դրության գալը։ Նույնը պետք է անել, երբ աշխատանքի ընթացքում տաքացած ձիուն կանգնեցնում են։

Շատ խիստ սառնամանիքների ժամանակ (—35—40° և ավելի) ձիու մարմնի մազով չպատված մասերը՝ կուրծը, փոշտը, հարկավոր է յուղել ճարպով կամ վազելինով, այդ մասերը ցրտահարությունից պաշտպանելու համար։ Այդպիսի օրերին մետաղյա սանձի վրա պետք է փաթաթել մառլա կամ շորի կտոր, որ սառը մետաղը ձիու շրթունքների անկյուններին չդպնի։

Խիստ ցուրտ օրերին բեռներ փոխադրելիս, ճանապարհին ձիուն պետք է խոտ տալ, որովհետև խոտը ուտելու ընթացքում ձին զգալի տաքանում է։ Նույն նպատակով նաև աշնդեպքում, երբ ախոռը ցուրտ է, պետք է ձիերին որպես լրացուցիչ կեր՝ տալ խոտ։

Ձմեռային շրջանում ևս աշխատանքի ընթացքում ձիերին մի քանի անգամ հանգիստ է տրվում, որի ժամանակ նրանց կերակրում են ու ջրում։

Երկար տարածություններ բեռներ տեղափոխելիս, անհրաժեշտ է 10—20 կմ անցնելուց հետո ձիերին հանգիստ տալ և նրանց կերակրել։

Սայլը (ֆուրգոնը) դատարկ քշելիս, լոմ է 2—3 կմ դնալ վարգով, 0,5—1 կմ՝ քայլով, և այսպես շարունակ։

Ձմեռը ձիերին պետք է պայտել ձմեռային պայտով, հակառակ դեպքում ձիու արտադրողականությունը մեծ չափով կընկնի, իսկ հաճախ նրան աշխատեցնել անհնարին կդառնա։

ՁԻՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Գյուղատնտեսության մեջ ձին, բացի դաշտային աշխատանքներից, լայնորեն օգտագործվում է նաև փոխադրումների (տրանսպորտի) համար։

Կոլտնտեսությունների խոշորացման, ագրոտեխնիկայի ավելի բարդացման և բերքատվության բարձրացման հետ միասին՝ տրանսպորտային աշխատանքների ծավալն ավելի է մեծանում։ Ավտոմեքենաների քանակի ավելացումը կոլտնտեսություններում ամենևին չի նսեմացնում ձիու դերը տրանսպորտային աշխատանքների մեջ։

Ավտոմեքենաները գլխավորապես օգտագործվում են ծանր բեռները հեռու տարածությունների վրա տեղափոխելու համար։ Թեթև քաշ ունեցող մեծածավալ բեռը ձեռնտու չէ ավտոմեքենայով փոխադրել, մանավանդ կարճ տարածությունների վրա։ Այդպիսի դեպքերում նպատակահարմար է օգտագործել կենդանի քաշող ուժը և առաջին հերթին՝ ձիերը։

Ձիերը լայնորեն օգտագործում են գոմաղբը, հանքային

պարարտանյութերը, սերմացուն, զանազան կերերը, ջուրը դաշտ տեղափոխելու համար, ինչպես նաև մարդագետիններից և դաշտերից հարած խոտն ու օրանը դյուղ տեղափոխելու համար։

Տրանսպորտային աշխատանքներում ձիերի արտադրողականությունը բարձրացնելու համար մեծ նշանակություն ունի նրանց բեռնվածության չափի ճիշտ որոշումը, լծասարքի լավ վիճակը և կերակրման, ջրելու ու խնամքի ճիշտ ռեժիմը։

Ներքնատեսային փոխադրումների ժամանակ, բացի ճաշվա ընդմիջումից, ձիերին կերակրում են նաև շատ թե քիչ երկար կանգառների ժամանակ (սայլի բարձում, բեռնաթափում), նույնը կարելի է ասել նրանց ջրելու նկատմամբ։ Բեռները երկար տարածությունների վրա փոխադրելիս, թույլ ձիերին կերակրում են ճանապարհին հանգիստ տալով՝ յուրաքանչյուր 15 կմ ճանապարհ անցնելուց հետո, իսկ ավելի ուժեղ և տոկուն ձիերին՝ 20—25 կմ-ից հետո։ Կերակրումից հետո ձիերն առնվազն 2 կմ պետք է քայլով գնան, որից հետո միայն կարելի է նրանց ջրել վարգով (ոռս)։ Հեռավոր փոխադրումների ժամանակ ձիերին ջրում են կանգառից (ընդմիջումից) կես ժամ առաջ, բայց որում, եթե ձիերը քրտնած են կամ տաքացած, ապա նրանց ջրում են սանձը բերանին, կամ էլ ջրի վրա գցում են մի բուռ խոտ։

Որպես կանոն, տրանսպորտային աշխատանքների ժամանակ ճանապարհի սկզբի և վերջի 1—2 կմ տարածությունը պետք է անցնել անպայման քայլով։

Ձիերին՝ ճանապարհին կերակրելու համար օգտվում են տոպրակներից, պարկերից և ցանցերից, որոնք այս նպատակի համար միանգամայն հարմար պետք է համարել։

Ձիու աշխատանքը թեթևացնելու տեսակետից բավականին մեծ նշանակություն ունի բեռի դասավորումը սայլակի վրա։ Այսպես, եթե ճանապարհը շատ անհավասար է, խորդուբորդություններով և վերելքներով, այդ դեպքում ավելի շատ ծանրաբեռնում են սայլակի առջևի մասը, իսկ ճանապարհը հարթ, լավ լինելու դեպքում՝ ընդհակառակը, բեռի

ծանրության ավելի մեծ մասը զցում են հետևի անիվների վրա, դրանով իսկ պակասեցնելով սայլի դիմադրությունը։

Ցեխի, վատ ճանապարհի դեպքում ավելի նպատակահարմար է լծած ձիերի քանակը ավելացնել, քան թե բեռի չափը պակասեցնել։

Տրանսպորտային աշխատանքների համար ավելի ձեռնտու է երկու ձի լծել սայլակին, քան մեկ ձի լծելու դեպքում քարշի ուժի ավելի մեծ մասը կդնա զատարկ սայլակի տեղափոխման համար։

ՀՂԻ ԵՎ ԾԾՄԱՅՐ ԶԱՄԲԻԿՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Ձիերի գլխաքանակի ընդլայնացրած վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է հղի և ծծմայր զամբիկների օգտագործման հարցին առանձնահատուկ մոտեցում ունենալ։

Հղի զամբիկների նկատմամբ հղիության սկզբից ևեթ անհրաժեշտ է ցուցաբերել հոգատար վերաբերմունք՝ հնարավոր վաղ վիժումները կանխելու և զարգացող սաղմի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով։

Այս տեսակետից չափազանց մեծ նշանակություն ունեն կառավարության և պարտիայի որոշումները՝ հղի զամբիկների օգտագործման հարցի վերաբերյալ։

Կառավարությունը և պարտիան խորհուրդ են տալիս կոլտնտեսություններին՝ ծանր աշխատանքից ազատել այն հղի զամբիկներին, որոնց արդեն տրված է պահպանական վկայագիր (հղիության 6-րդ ամսից), միևնույն ժամանակ՝ բարձրացնել հղի և ծծմայր զամբիկների վրա աշխատող կոլտնտեսականների աշխատանքի վարձատրման նորմաները։

Բացի դրանից, ծնելուց 2 ամիս առաջ և ծնելուց հետո, առաջին 15 օրերի ընթացքում, զամբիկներին աշխատեցնելը բոլորովին արգելվում է։

Նշված միջոցառումները իրագործելու համար բոլոր կոլտնտեսությունները, համաձայն ՍՍՌՄ Գյուղատնտեսության

մինիստրության 1949 թ. 21/10 հրամանի, պարտավոր են տարին մեկ անգամ իր ժամանակին ստուգել սերմնավորված բոլոր զամբիկներին՝ հղիներին հայտնաբերելու և նրանց պահպանական վկայագրեր տալու համար։

Նույն որոշմամբ նախատեսվում է 1950 թվականից կոլտնտեսություններում և սովխոզներում ռեկտալ մեթոդով յուրաքանչյուր զամբիկի հղիությունը որոշելու համար վճարել 3 ռուբլի։

Բացի դրանից, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1948 թ. 19/4 որոշման համաձայն յուրաքանչյուր վիժած զամբիկի դիմաց մեղավոր անձից պահվում է 20 աշխատ։

Համաձայն ՍՍՌՄ Մինիստրների Սովետի և Համ(բ)Պ ԿԿ-ի որոշման, կոլտնտեսություններում ապրանքային ձիաբուծությունն ավելի ևս զարգացնելու նպատակով, կոլտնտեսություններին թույլ է տրվում ձիաբուծության զարգացման պետական պլանը և ձիերի վաճառման առաջադրանքը կատարելուց հետո, կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ, ձիերի արտապլանային գլխաքանակից վաճառել ուրիշ կոլտնտեսություններին և ստացված գումարի 50%-ը ըստ աշխատանքի բաժանել կոլտնտեսականների միջև։

Ինչպես նշեցինք, զամբիկների հղիության սկզբի շրջանից, նրանց արտադրանքորմաներն անհրաժեշտ է պակասեցնել, հասցնելով նորմալ բեռնվածության 3/4-ին։

Հղի զամբիկներին օգտագործում են համեմատաբար ավելի թեթև աշխատանքներում (կուլտիվացիա, փոփոկ վար և այլն) և լավ ճանապարհներով բեռների տեղափոխման համար։

Ավելի նպատակահարմար է հղի զամբիկների աշխատանքը թեթևացնել, լծելով ավելի թվով ձիեր, աշխատանքի ծավալը թողնելով նույնը։

Հղի զամբիկներին օգտագործելիս, պետք է խուսափել այնպիսի աշխատանքներից, որոնք համարվում են թեթև, բայց կարճ ժամանակամիջոցում պահանջում են ուժերի մեծ լարվածություն, ինչպես, օրինակ՝ կարտոֆիլի, ճակնդեղի տեղափոխումը դաշտից, բեռների փոխադրումը այնպիսի

հանապարհով, որտեղ կան ուժեղ խոշընդոտներ և այլն։ Նույնը կարելի է ասել բերքահավաքի մեքենաները (խոտհար, հնձող) աշխատեցնելու վերաբերյալ, այն իմաստով, որ այս դեպքում թեև ձիերից այնքան էլ ուժ չի պահանջվում, բայց դրա փոխարեն պահանջվում է բավականին մեծ արագություն, որի հետևանքով նրանց աշխատանքը դառնում է շատ լարված։

Բույլ չի տրվում հղի զամբիկներին քշել շատ արագ, ինչպես նաև կատարել շատ խիստ, հանկարծակի շրջումներ։

Վաղ գարնանը, ձնհալքի ժամանակ, լավ է հղի զամբիկներին ամենևին չաշխատեցնել։ Նույնը կարելի է ասել աշնան-ձմռան ամիսների մասին, երբ հղի ձիերին կամ բոլորովին ազատում են աշխատանքից և կամ նրանց օգտագործում են շատ թեթև աշխատանքների համար։

Հղի զամբիկներին օրվա ընթացքում պետք է կերակրել և ջրել առնվազն 6 անգամ, իսկ աշխատանքի ժամանակ՝ յուրաքանչյուր 2—3 ժամը մեկ անգամ։

Մեծ նշանակություն ունի աշխատանքից բոլորովին ազատված հղի զամբիկների ճիշտ կերակրումն ու խնամքը։ Անհրաժեշտ է ամեն օր կերակրումից հետո նրանց դուրս թողնել զրոսանքի, այդ նպատակի համար հատկացված հատուկ տեղում։

Բաց օդում գտնվելը շափազանց բարերար ազդեցություն է թողնում ձիու օրգանիզմի վրա՝ ուժեղացնում է նյութերի փոխանակությունը և բարենպաստ պայմաններ է ստեղծում սազմի զարգացման համար։

Եթե ձիերի ռացիոնում բացակայում է բարձրորակ վիտամիններ պարունակող խոտը, ապա հնարավոր վիժումները կանխելու համար օգտավետ է հղի զամբիկներին տալ ծլած հացահատիկ։

Հղի զամբիկներին կերակրելու ժամանակ առանձնակի ուշադրություն պետք է դարձնել կերի որակի վրա։ Ցածրորակ, փչացած, նեխած, սառած կերերը հաճախ առաջացնում են վիժում։

Ծնելուց 8—10 օր առաջ, զամբիկներին տրվելիք կերի

ընդհանուր քանակը պետք է որոշ չափով կրճատել. լավ է այդ օրերին նրանց տալ 5—6 կգ խոտ և 2—3 կգ ցորենի թեփ, կամ նույն քանակությամբ ջարդած վարսակ։ Նշված խտացրած կերերը լավ է տալ թրջած վիճակում։

Երբ զամբիկի կացցում նեղվածք է, ապա ծնից մի քանի օր առաջ անհրաժեշտ է նրան տեղափոխել ավելի ազատ տեղ, միաժամանակ ավելացնելով ցամքարի քանակը։

Հղիության վերջին օրերին, հղի զամբիկների նկատմամբ պետք է խիստ հսկողություն սահմանել, հարկ եղած դեպքում նրանց օգնություն ցույց տալ։ Ծնելուց հետո, առաջին մի քանի օրը զամբիկներին տալիս են միայն խոտ և թեփ՝ խաշիլի ձևով։

Հինգերորդ օրվանից ռացիոնի մեջ աստիճանաբար մտցնում են հատիկային կերեր, օգտավետ է տալ նաև գազար, կանաչ կեր, կամ մտրուկի հետ զամբիկին թողնել արածելու։

Ինչպես վերևում ասվեց, մայր զամբիկներին սկսում են աշխատեցնել՝ ծնելուց 15 օր հետո, միայն աստիճանաբար ավելացնելով նրանց բեռնվածությունը։

Ծծմայր զամբիկին աշխատեցնելիս անհրաժեշտ է մեծ խնամքով վերաբերվել մտրուկի հետ։ Լավ է առաջին 3—4 ամիսների ընթացքում մտրուկին միշտ թողնել մոր հետ, իսկ դրանից հետո, մինչև ծծից կտրելը (6—7 ամսական հասակը), կարելի է մորից պահել անջատ, սակայն նրանից ոչ հեռու և հաճախակի թողնել մորը ծծելու։

Ծնելուց հետո առաջին ամիսներին զամբիկներին չպետք է օգտագործել երկար ճանապարհներ անցնելու համար, քանի որ մտրուկն անընդհատ մոր հետևից վազելով հոգնում է և հետ է մնում նրանից։

Պետք է խուսափել ծծմայր զամբիկներին օգտագործել խոտհար, հնձող մեքենաների վրա, որովհետև մոր կողքից վազող մտրուկը հեշտությամբ կարող է հարող մեքենայի զանակի տակն ընկնել։

ՁԻՈՒ ԼՄԱՍԱՐՔԸ ԵՎ ՁԻԱՍԱՅԼԵՐԸ

Ձիու աշխատունակությունը մեծ չափով կախված է լծասարքի որակից։ Վատորակ, սխալ պատրաստված և տվյալ ձիու վրա լավ չհարմարեցված լծասարքը ոչ միայն զցում է ձիու արտադրողականությունը, այլև հաճախ ձիու մարմնի վրա առաջացնում է զանազան վերքեր և վնասվածքներ, որի հետևանքով ընկնում է ձիու արտադրողականությունը և կամ երկար ժամանակ ձին բոլորովին շարքից դուրս է գալիս։

Ամենից առաջ լծասարքը պետք է լինի ամուր, թեթև և ձիու վրա լավ նստած, այսինքն այնպես, որ ձիու մարմնի զանազան մասերում վնասվածքներ չառաջացնի, չկաշկանդի ձիու շարժումները և չդժվարացնի նրա շնչառությունն ու արյան շրջանառությունը։

Սովորաբար ձիու լծասարքի մեջ մտնում են հետևյալ հիմնական մասերը. 1) սանձը, 2) անուրը (խոմուտը), 3) լծաթամբիկը իր փորքաշով, 4) շրջափոկը (շլեյա), 5) լծաթամբիկի փոկը (ներեղսեդելնիկ), 6) երասանը (վոժը), 7) ադեղը (դուգա), 8) ձգափոկը (պոստրոմկա), 9) նոխտան և այլն։

Սանձը ծառայում է միայն ձիու ղեկավարման համար և նա չպետք է ձիուն կապելու համար օգտագործել։

Սանձը պետք է լինի անհրաժեշտ ամրության և լավ նստի ձիու գլխին, այլ կերպ ասած՝ սանձի բոլոր մասերը ըստ իրենց չափի պետք է համապատասխանեն գլխի բոլոր այն մասերին, որ նրանք ընդգրկում են։

Անուրը հանդիսանում է լծասարքի ամենագլխավոր և պատասխանատու մասը։ Աշխատանքի ժամանակ քարշի ուժի հիմնական ճնշումը ընկնում է անուրի վրա, դրա համար էլ ձիու աշխատունակությունը մեծ չափով կախված է անուրի որակից և նրա՝ ձիու վրա հարմար նստելուց։

Անուրը պետք է լինի ամուր, ըստ իր չափի և ձևի համապատասխանի ձիու պարանոցին, կիպ հարի (հենվի) նրան, ուսերին (թիակներին) և մեղավին, իսկ իր ստորին մասով՝ բազկաթիակային հոդերին։

Ձիու վրա լավ հարմարեցրած անուրը իր վերևի մասում կպչում է մեղավին և հենվում է պարանոցի կատարին, կողքերից՝ թիակի մկաններին, իսկ իր ստորին մասում բազկաթիակային հոդերին (տե՛ս նկ. 39, 40)։

Նկ. 39. Ձիու պարանոցի չափերը՝ անուրի երկարությունը որոշելու համար։

Ձիաբուծության ինստիտուտի ուսումնասիրությունները պարզել են, որ անուրի լավագույն դիրքը ձիու վրա այն է, երբ նա հիմնականում հենվում է թիակի (ուսի) առջևի եզրի մեջտեղի վրա, իսկ դրանից ցածր՝ բազկաթիակային հոդի հատվածում, և պարանոցի առջևի եզրի վրա ավելի քիչ է հնշում գործադրում։ Նույնը կարելի է ասել անուրի վերևի հատվածի մասին, որը չպետք է ճնշի թիակների աճառների վերևի ծայրերը և մեղավի ամբողջ հատվածը, ինչպես վերևից, այնպես էլ կողքերից։

Մեծ անուրը ձիու մեղավի և ուսերի վրա վնասվածքներ է առաջացնում։ Չափից դուրս լայն, բայց կարճ անուրը ճնշում է շնչափողը՝ դժվարացնելով ձիու շնչառությունը, և տրորում է ուսերը։ Նեղ, բայց երկար անուրը վնասվածքներ է հասցնում մեղավին, իսկ փոքր անուրը՝ աշխատելու ժամանակ խեղդում է, շնչասպառ է անում ձիուն։ Յուրաքանչյուր ձի պետք է ունենա իր անուրը։

Անուրն ընտրելիս, նախօրոք վերցնում են ձիու պարանոցի չափը հետևյալ կերպ. անուրի երկարությունը որոշելու համար չափում են ձիու պարանոցի հիմքը երկարությամբ՝ ուսին (թիակին) զուգահեռ, չափում են սանտիմետրով և ստացած մեծությանը ավելացնում են՝ 3—4 սմ, եթե անուրը թեթև տիպի է, և 6 սմ, եթե անուրը տրանսպորտի ծանր ձիերի համար է։ Անուրի լայնությունը որոշելու համար կարկինով չափում են պարանոցի հաստությունը, պարանոցի հիմքի մոտ՝ մեջտեղում։

Գյուղատնտեսական ստանդարտ անուրները հաճախ հարմար չեն լինում և լավ չեն նստում ձիու պարանոցի վրա։ Այդպիսի դեպքերում հարկավոր է անուրը վերասարքել, ձևափոխել, հարմարեցնելով տվյալ ձիուն։

Ավելի հարմար պետք է համարել Ա. Բ. Վոյեյկովի շարժական անուրը։ Այս սիստեմի անուրները, ինչպես և գյուղատնտեսական ստանդարտ անուրները տարբեր համարների են լինում, բայց շարժական լինելու հետևանքով այդ անուրի երեք համարը փոխարինում են ստանդարտ անուրի 10 համարին։ Շարժական անուրը այնպես է պատրաստված, որ հնարավորություն է տալիս երկարությունն ու լայնությունը փոխել ստանդարտ անուրի 4 համարների սահմաններում։ Այդ տիպի անուրի փոփոխումը կարելի է կատարել հեշտությամբ, առանց մասնագետի օգնության, հարմարեցնելով ամեն մի ձիուն։

Փորձը ցույց է տվել, որ շարժական անուրի օգտագործումը դաշտային և տրանսպորտի աշխատանքների ժամանակ, պաշտպանում է ձիերին վնասվածքներից։ Ավելորդ չենք համարում նշել, որ շարժական անուրի կառուցվածքը շատ

Նկ. 40. Ձիու պարանոցի չափերը անուրի լայնությունը որոշելու համար։

հասարակ է, այնպես որ կարելի է պատրաստել մինչև անգամ կոլտնտեսությունների արհեստանոցներում։

Լծաթամբիկը ծառայում է լծասարքի մնացած բոլոր մասերը, անուրը, աղեղը, կողաբեղին և այլն պահելու համար, և լուծը դարձնում է կայուն։ Լծաթամբիկները լինում են երկու տիպի՝ տափակ և սապատավոր։ Առաջինը գործադրվում է ցածր, լայն և մսեղ մեղավ ունեցող ձիերի համար, իսկ երկրորդը՝ այն ձիերի համար, որոնց մեղավը բարձր է ու նեղ։

Սապատավոր լծաթամբիկն առանձնապես անհրաժեշտ է այն դեպքերում, երբ մեղավի վրա, մեջքի առջևի մասում վերք է լինում։ Այդպիսի լծաթամբիկը հենվում է մեջքի մկանների վրա, ամենևին չքսվելով մեղավին և դրանով իսկ հեշտացնելով վերքի լավացումը։

Ձիուն լծելիս, լծաթամբիկի փորքաշը պետք է պինդ ձգել, որ թամբիկը պինդ իր տեղում մնա։

Լծաթամբիկի փոկը և փորքաշը անուրին ճիշտ դիրք



Նկ. 41. Տափակ լծաքամբիկ։



Նկ. 42. Սապատավոր լծաքամբիկ

տալու համար պետք է համահավասար կերպով ձգված լինեն։ Եթե լծաթամբիկի փոկը շատ է ձգված, այդ դեպքում անուրը վերև է բարձրանում, իր ստորին մասով սեղմում է ձիու պարանոցը և դժվարացնում է նրա շնչառությունը։ Վերելքի ժամանակ լծաթամբիկի փոկը պետք է քիչ թուլացնել, իսկ վայրէջքի ժամանակ, ընդհակառակը՝ պետք է ձգել վերև։

Շրջափոկը վայրէջքի ժամանակ պահում է անուրն առաջ սողալուց։ Շրջափոկի շնորհիվ ձին արգելակում է իր հետևից արագ շարժվող սայլի ընթացքը։ Տրանսպորտային աշխատանքների ժամանակ, աղեղնային լուծքի դեպքում շրջափոկի գործածումը անհրաժեշտ է։

Կողաքեղիների մեջ լծած ձիու քաշքի ուժի մոտ $^1/_6$—$^1/_8$ մասը փոխանցվում է ձիու մեջքին՝ լծաթամբիկի միջոցով, այնպես որ այդպիսի լուծքի դեպքում առանց լծաթամբիկի ձիու աշխատանքը դժվարանում է։

Երասաները ծառայում են ձիու ղեկավարման համար։ Երասանները լինում են մեկ ձիանի և զույգ ձիանի լուծքի համար և կողքից լծվող (սոլծի) ձիու համար։

Երասանները պետք է պատրաստված լինեն ամուր նյութից։

Աղեղը գործածվում է այսպես կոչված ռուսական լուծքի դեպքում։ Նա ծառայում է ոչ միայն անուրը կողաքեղիների

Նկ. 43. Մոսկովյան տիպի աղեղներ։

(օգոլրլի) հետ միացնելու համար, այլև որպես յուրահատուկ պահանդ (ամորտիզատոր)։ Աղեղը ձիու ուսերը պաշտպանում է ցնցումներից, որը ուժեղ է լինում մանավանդ անհարթ տարածության վրա։ Աղեղի շնորհիվ անուրը կողքերից չի սեղմվում ձիու պարանոցին, և դրանով հեշտացնում է նրա աշխատանքը։

Աղեղը պետք է լինի ամուր, առաձգական և թեթև։

Ձգափոկերը պետք է լինեն ամուր և նույն երկարության։ Գյուղատնտեսական աշխատանքների համար կարելի է օգտագործել նաև փայտից պատրաստված ձգափոկեր։ Այս նպատակի համար օգտագործում են ուղիղ, հարթ, մատղաշ կաղնու բույնը, որի տրամագիծը արմատի մոտ պետք է հավասար լինի 5—6 սմ։ Հաստ ծայրից 5 սմ վերև շիկացած երկաթով անցք են բաց անում, մոտավորապես 4—5 սմ տրամագծով, որի միջով անց են կացնում պարանի կամ կաշվի փոքր կտորներ, սարքելով օղեր։ Այդ օղերի միջոցով ձգափոկերը ամրացվում են վալյոկին. ձգափոկերի հակառակ, բարակ ծայրում հարմարանք են սարքում՝ նրանց անուրին ամրացնելու համար։

Շորկան (լյամկա կամ շլեյկա) երբեմն օգտագործում են անուրի փոխարեն։ Շորկան անուրից թեթև է և առանց դժվարության նրան կարելի է հարմարեցնել սմեն մի ձիուն։ Չնայած այս դրական կողմերին, շլեյկան իր մի շարք բացասական կողմերի շնորհիվ լայն տարածում չունի։ Այսպես՝ նա ճնշում է կրծքի նեղ հատվածի վրա, որոշ չափով սահմանափակում է ձիու շարժումները և ծանր աշխատանքի ժամանակ սեղմում է ձիու կողքերը, առաջացնելով վնասվածք, այնպես որ գյուղատնտեսական աշխատանքների համար անուրն ավելի լավ պետք է համարել։

Ձիու լծասարքն անհրաժեշտ է պահել մեծ խնամքով։ Ձիու վրայից հանած լծասարքը (անուրը, լծաթամբիկը և այլն) չի կարելի թողնել գետնի վրա։ Լծասարքի թաղիքային մասերին, որոնք քրտնքից խոնավացած են լինում, հեշտությամբ կարող են կպչել չորացած կեղտի կտորներ, մանր քարեր և այլն, որոնք կարող են ձիու վրա վերքեր առաջաց-

նել։ Աշխատանքից հետո լծասարքը հարկավոր է շորացնել. դա պաշտպանում է լծասարքը փչացումից և հնարավորություն է տալիս կանխել ձիու վրա վնասվածքների առաջացումը։

Լծասարքը հարկավոր է պահել միշտ մաքուր վիճակում և յուղած, կախ տված՝ կախարանից։ Կախարանը երկաթից չի կարելի պատրաստել, որովհետև նա ժանգոտվելով լծասարքը կփչացնի։ Կախարանները սարքում են կա՛մ հատուկ զետեղարանում և կա՛մ ախոռում այն ձիու մոտ, որին նա պատկանում է։ Անուրի և լծաթամբիկի թաղիքային մասերը լավ շորանալու համար, նրանց պետք է կախ տալ թաղիքով դեպի դուրս։

Լծասարքը շորանալուց հետո, թաղիքային մասերը մաքրում են և փափկացնում՝ ճիպոտով թակելու միջոցով, իսկ կաշվի մասերը նույն նպատակով սրբում են ձեռքերով։ Լծասարքի կաշվի փոկերից բաղկացած մասերը՝ ձգափոկերը, շրջափոկը և այլն պետք է ոչ ուշ, քան ամիսը երկու անգամ յուղել։ Յուղելու համար գործածում են հատուկ այդ նպատակի համար պատրաստված յուղանյութ, կամ յուղում են հատուկ ճարպով (լավ է ձիու ճարպով), որին ավելացնում են քիչ քանակությամբ կուպր։

Լծասարքի մետաղյա մասերը ժանգոտելուց պաշտպանելու համար պետք է սրբել սկզբում նավթով, հետո՝ շոր շորով, իսկ վերջում՝ յուղոտ շորով։ Լծասարքի յուրաքանչյուր կոմպլեկտը պետք է ամրացնել մի ձիու, որի անունը սովորաբար գրում են անուրի վրա։

ՁԻՈՒ ԼԾԱՍԱՐՔԻ ՁԵՎԵՐԸ

Տարբերում են անուրային լծասարքի հետևյալ հիմնական ձևերը.

1) կողաթեղի-աղեղնավոր, 2) կոմբինացված, 3) ձգափոկաթեղային կամ առեղային և ձգափոկային։

Կողամեղի-աղեղնավոր.— ավելի լայն կերպով կիրառ-

վում է ՍՍՌՄ-ի հյուսիսային մասերում՝ ինչպես ձիասայլերը, այնպես էլ գլուղմեքենաները աշխատեցնելու համար։

Կողաքեղի-աղեղնավոր լուծքի ձևն ունի այն դրական կողմը, որ այս դեպքում ձին կարող է ավելի մեծ ուժով քաշել։

Նկ. 44. Կողաքեղի աղեղնավոր լծվածք։

Լծելիս առաջին հերթին ձիու գլխին հագցնում են սանձը, հետո իր տեղն են դնում լծաթամբիկը, իսկ դրանից հետո հագցնում են անուրը շրջափոկի հետ։ Անուրը ձիու վզին հագցնում են շրջված դրությամբ (վերևի մասը դեպի ներքև) վզի ամենաբարակ մասում, հետո անուրը նորից վզի վրա շրջում են, տալով նրան նորմալ դիրք, և տանում են իր տեղը։ Դրանից հետո շրջափոկը լրիվ անց են կացնում իր տեղը և անուրի տակից ձիու բաշը հանում. սովորաբար այդ դրությամբ ձիուն ախոռից դուրս են բերում, իր հետ վերցնելով լծասարքի մնացած մասերը, և ձիուն մտցնում են կողաքեղիների մեջ։

Այդ ամենից հետո ձախ քեղու վրա հագցնում են լծա-

թամբիկի փոկը, իսկ հետո՝ փորքաշը. վերջինս կարելի է հագցնել նաև աջ քեղու վրա։ Աղեղն ամրացնում են ձախ կողմից, ըստ որում անուրի ձախ օղակապը (գուժ) քեղուն ընդգրկում է ներքևից վերև, իսկ աջը՝ վերից ներքև։ Երբ աղեղն արդեն ընդունում է իր նորմալ դիրքը, այսինքն՝ երբ նա կողաքեղիների ծայրերից նույն տարածության վրա է գտնվում, անբափոկը ձգում են այն հաշվով, որ անուրը կողքերից վիզը չսեղմի, այլ միայն ընդհուպ կպչի նրան։ Ընդունված է անբափոկն այնպիսի հանգույցով կապել, որը հեշտությամբ կարելի լինի քանդել։ Պետք է հետևել, որ անուրի հանգույցներն այնքան ձգված լինեն, որ աղեղը ձիու ընթացքի ժամանակ դեպի առաջ կամ դեպի ետ չթեքվի, այսինքն մնա ուղղահայաց դիրքում։ Հետո աջ քեղուն կապում են ձիաթամբիկի փոկը և ապա՝ փորքաշը։ Վերջում ամրացնում են երասանները։

Լծելու կոմբինացված ձևը (առանց աղեղի) վերև հիշված ձևից տարբերվում է նրանով, որ այստեղ ձին քաշում է ձգափոկերի միջոցով, իսկ կողաքեղիները ծառայում են ուղղություն տալու և վայրէջքի ժամանակ սայլը պահելու համար։

Զգափոկաքեղային-առեղային լծվածքը (դիշլու միջոցով) լայնորեն օգտագործվում է գույգ ձիանի լծասայլերը և դյուղմեքենաները աշխատեցնելիս։ Լծելու այս ձևը լայնորեն տարածված է ՍՍՌՄ-ի հարավային մասերում։

Գույգ ձիանի առեղային լծվածքն ունի մի շարք դրական կողմեր։

Ամենից առաջ այս ձևի լծվածքի դեպքում յուրաքանչյուր ձիուն ընկնող դատարկ սայլի ծանրությունը ավելի քիչ է լինում, որով և բարձրանում է նրանց օգտավետ աշխատանքի էֆեկտիվությունը։ Տավրիշանկա կամ ստանդարտ տիպի սայլով մի գույգ ձիերով կարելի է տեղափոխել այնքան բեռ, որքան հնարավոր է դյուղացիական հինգ սայլերով, կամ կողաքեղավոր մեկ ձիանի երկու սայլերով։ Դրա հետևանքով առեղային լծվածքի դեպքում բանող ձեռքերի աշխատանքը կատարվում։

Առեղային լծվածքի համար, ըստ հնարավորության, պետք է ընտրել միատեսակ աշխատունակության և ամպերամենտի ձիեր։ Առեղը պետք է ձիու կրծքի միջին մասի բարձրությանը լինի։ Անհրաժեշտ է, որ բոլոր ձգափոկերը միևնույն երկարության լինեն։

Բերքահավաքի մեքենաները (խոտհար, հնձող) աշխատեցնելիս, հաճախ առեղը ճնշում է անուրի վրա, որի հետևանքով մնդավի և բազկաթիակային հատվածում առաջանում են վնասվածքներ։ Դրանից խուսափելու համար լավ է այդպիսի դեպքերում օգտվել լծաթամբիկից, որի փոկով այնքան են ձգում ձգափոկերը, որ նրանք անուրից մինչև լծաթամբիկի փոկը հորիզոնական դիրք ընդունեն։ Ինչպես ցույց են տվել փորձերը, դրանից զգալի չափով բարձրանում է ձիու արտադրողականությունը, մանավանդ ընթացքի արագությունը։

Ձգափոկային լծվածքը (առանց առեղի) հանդիսանում է լծելու ամենահասարակ ձևը և գլխավորապես կիրառվում է գյուղատնտեսական գործիքները (գութան, փոցխ և այլն) աշխատեցնելու համար։ Այս ձևի լծվածքի ժամանակ միանդամայն նպատակահարմար է օգտագործել լծաթամբիկը։

ՁԻԱՍԱՅԼԵՐ

Ձիասայլը պետք է լինի կայուն, ամուր, դյուրաշրջելի, ունենա թեթև ընթացք և հարմար լինի բեռների տեղափոխման համար։

Ձիասայլի դյուրընթացությունը զգալի չափով կախված է սռնիների և անիվների մեծությունից։ Փայտյա սռնիներն առաջացնում են ավելի մեծ շփում, հետևությամբ կտրվում են, դրա համար էլ այդպիսի սռնիներով օժտված սայլերը, ինչպես սովորական գյուղացիական սայլերը, դյուրընթաց չեն լինում և ավելի շուտ են անպետքանում։ Դրան հակառակ, երկաթե սռնիներով սայլը լինում է դյուրընթաց, ավելի ամուր և կայուն։

Անիվի տրամագիծը որքան ավելի մեծ լինի, այնքան

սայլն ավելի թեթև ընթացք կունենա։ Դա բացատրվում է նրանով, որ մեծ անիվը ավելի հեշտությամբ է գլորվում, հետևաբար և զանազան խոչընդոտների վրայով ավելի լավ է անցնում, քան փոքր անիվը։ Միևնույն ժամանակ մեծ անիվը ավելի քիչ է խրվում ճահճուտ կամ փափուկ գետնի մեջ. չնայած դրան չորսակնանի սայլերի անիվների տրամագիծը 100—125 սմ-ից ավելի չեն անում, նրա կայունությունը չզցելու համար։ Սովորաբար սայլի առջևի անիվներն ավելի փոքր են անում, ոլորաններով ավելի հեշտությամբ թշելու համար։

Կավահողերի և սևահողերի վրա աշխատեցնելու դեպքում անիվի շրջանակի օղագոտու (օբոդ) լայնությունը լավ է 5 սմ անել, իսկ ավազային կամ ճահճոտ տեղերի համար՝ 6—7 սմ։

Ձիաբուծության ինստիտուտի ավյալներով կողաքեղիները և սայլափոկերը (ձգալարները) պետք է ունենան պտույտի ընդհանուր առանցք. լավ է, եթե վերջիններս ամրացված են լինում սայլի առջևի սռնիի վրա։

Ինչպես ձգափոկերի, այնպես էլ կողաքեղիների զույգը անում են միևնույն երկարության. նրանք այնպիսի երկարության պետք է լինեն, որ վարդով գնալիս կամ զառիվայր ճանապարհով իջնելիս ձիու հետևի վերջավորությունները սայլին չքսվեն։ Ընդունված է բոլոր սայլերի առջևի մասը փոքր-ինչ ավելի ցածր անել՝ բեռը դեպի ետ չշարժվելու համար։

Մեծ նշանակություն ունի սայլի անիվների յուղելը։ Լավ է սռնիների յուղումը կատարել ամեն օր, աշխատանքից առաջ։ Բացի դրանից, պետք է հետևել, որ սայլի վրայի բոլոր պնդօղակները (դայկաները) և բոլտերը լավ ձգված լինեն։

Սովորական փայտյա սռնիներով դյուղացիական ձիասայլերը ունեն մի շարք բացասական կողմեր։ Նրանց տարողությունը փոքր է, իրենց շարժման համար համեմատաբար ավելի մեծ քարշի ուժ են պահանջում, նրանց փայտյա սռնիները ավելի մեծ շփում են առաջացնում, հեշտությամբ

կոտրվում են և սովորաբար երկաթե սոնիներից ավելի երկար են լինում, որը ընթացքի ժամանակ որոշ անհարմարություններ է ստեղծում։ Անհամեմատ ավելի լավ են երկաթյա սոնիներով ձիասայլերը։

Գյուղատնտեսության մեջ օգտագործելու համար ամենից



Նկ. 45. Գյուղատնտեսական ստանդարտ ձիասայլ։

հարմարը պետք է համարել ստանդարտ և «տավրիչանկա» ձիասայլերը։ Նրանց քաշը առանց թափքի (կուզովի) 270 կգ է, իսկ թափքի հետ միասին՝ 375 կգ, բեռնատարողությունը՝ 1500 կգ։

Նշված ձիասայլերն ունեն մի շարք առանձնահատկություններ, այն է՝ սայլի առջևի և հետևի մասերը (առաջքը և ետքը) կարելի է միմյանցից զգալի չափով հեռացնել, երկարացնելով սայլը, իսկ երկար գերաններ բեռնելու համար սայլի առջևի և հետևի մասերը կարելի է բոլորովին անջատել։

Այդպիսի սայլերի թափքը հարմար է զանազան տեսակի բեռների տեղափոխման համար։ Մեծածավալ բեռներ տեղափոխելու համար ստանդարտ սայլերը կարելի է ֆուրգոնի վերածել. դրա համար սայլի վրա ամրացնում են ճաղեր կամ դրոբինաներ։ Բացի դրանից, այդ տիպի սայլերը ամուր են, կայուն, հեշտությամբ են շրջվում և քիչ տեղ են գրավում։

Աղյուսակ 1

Գիմադրության հիմնական գործակիցները գանգան ճանապարհների և ձիասայլերի համար: (Զիարուծության ինստիտուտի տվյալներով)։

Ճանապարհի բնութագիրը	Զիասայլի բնութագիրը	Գիմադրության գործակից	Ինչպես գտնվում է գործակիցը վերցրած կարգի դեպքում (խանգարումով -վի) և գործակիցը վերցրած կարգի դեպքում
1	2	3	4
Գետնուղիներ (սայլուղիներ)			
Լավորակ (չոր, պնդացած)	Երկաթե անիվներով	0,05	5
Լավորակ (չոր, պնդացած)	Փայտյա »	0,07	7
Միջակ (պինդ, քիչ ցեխոտ, կամ չոր, բայց քիչ պնդացած)	Երկաթե »	0,07	7
Վատորակ (ցեխոտ)	» »	0,10	10
Շատ վատ (ցեխոտ, անհարթ)	» »	0,15	15
Ավազի վրայով	» »	0,20	20
Չոր ավազի վրայով	» »	0,30	30
Նոր վարած դաշտով	» »	0,20	20
Հին հերկի վրայով	» »	0,15	15
Խոզանի վրայով	» »	0,10	0,10
Խճուղի և գետաքարի սալարկ			
Լավ վիճակում	» »	0,03	3
Միջակ դրության	» »	0,05	5
Ասֆալտապատ ճանապարհ			
Միջակ որակի	» »	0,02	2
Զմեռային ճանապարհներ			
Լավորակ (նստած ճանապարհ)	Սահնակ երկաթե սահունով	0,04	4
Լավորակ (նստած ճանապարհ, ուժեղ սառնամանիք)		0,06	6
Միջին որակի (լավ շրացված կամ թերևակի ձյունով լցված)	» »		
	» »	0,08	8
Վատորակ (բանդված կամ խիստ ձյունով լցված)	» »	0,12	12
Չոր հողի վրայով (հողավազ)	» »	0,40	40 – 50
Ջրիկ ցեխի վրայով	» »	0,30	30
Կանաչի վրայով	» »	0,30	30

Հավելված 2

Հիմնական գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քարշային դիմադրությունը:

(Զիաբուծության ինստիտուտի տվյալներով)

Մեքենայի, գործիքի անունը	Մեքենայի, գործիքի նկարագիրը և աշխատանքի պայմանները	Մեքենայի գործիքի ընդգրկման լայնությունը (սանտիմետր.) կամ	Քարշային դիմադրությունը (կիլոգրամ.) Միջին	Տատանումը
1	2	3	4	5
Գութան	Հողաշերտի տրամատի (կտրվածքի) յուրաքանչյուր սանտիմետրին			
	Թեթև վար	—	0,2	—
	Միջակ վար		0,3	—
	Ծանր վար		0,4	—
Գութան՝ մեկ խոփանի	Վարի խորությ. 16 սմ . .	25	120	80—160
	» » 18 սմ . .	30	162	108—216
	» » 20 սմ . .	30	180	120—240
Փոցխ «Զիգզագ» .	Մարգագետինների, ցանովի խոտերի, ցրտահերկի և աշնանացանների փոցխումը՝ գարնանը (1 օղակ)	75	—	30—35
Նույնը	Հերկի փոցխումը (1 օղակ)	75	—	40—45
Փայտյա փոցխ . .	Երկաթե 25 ատամներով, հերկի փոցխումը (1 օղակ)	100	—	40—50
Փոցխ ափսեավոր (դիսկավոր) . .	12 ափսեավոր	—	140	—
Փոցխ զսպանակավոր	7 ատամով	68	—	75—102
Նույնը	9 ատամով	82	—	93—122
Շարբացան խոփիկավոր	11 շարբացանի, հողը կավավազային	140	130	119—142
Լոբոգրեյկա . . .	«Կրանի Ակսայ» . . .	145—182	—	80—158
Հնձիչ	«Մայիսի մեկի» անվան գործարանի	140	125	105—140
Խատհար	«Նոմի իդեալ»	130	100	80—130
Զիափոցխ . . .	»	180	30	20—40
Կուլտիվատոր . .	Հինգ թևթանի	—	111	60—180

ՅԱՆԿ

Ներածություն 3
Գլուխ 1. Զիլերի ծագումը և էվոլյուցիան 7
Գլուխ 2. Զիլերի կոնստիտուցիան և էքսաերյերը 8
Կոնստիտուցիա 8
Էքսաերյեր 12
Զափումներ 13
Զիլու էքսաերյերի բնութագրումը առանձին մարմնամասերը զննելու և նկարագրելու միջոցով 15
Զիլերի շարժման ձևերը 35
Կանգիցիա 39
Զիլերի երանգը և նշանները 40
Զիլու տարիքի որոշումը տատմների միջոցով 43
Գլուխ 3. Զիլերի ցեղերը 49
Հեծնելու ցեղեր 50
Արաբական ցեղը 50
Հեծնելու զտարյուն ցեղը 53
Տերսկի ցեղը 56
Կաբարդինյան ցեղը 58
Լծելու թեթև ցեղեր 61
Ռուսական վարդան 61
Ռուսական վարդան 63
Ծանրաբաշ ցեղեր 65
Ռուսական ծանրաբաշ ցեղ 65
Հայաստանի տեղական ձիերը 68
Գլուխ 4. Զիլերի բուծման տեխնիկան 70
Սեռական ցիկլը և հոսքը 72
Զամբիկի հոսքի (ցանկության) հայտնաբերումը 73
Զամբիկների սերմնավորումը 76
Զուգավորման կամպանիայի անցկացման ժամկետները . . 81
Արտագրող հովատակների կերակրումն ու խնամքը . . . 84
Հղիության որոշումը 86
Հղի զամբիկների կերակրումը և խնամքը 88

Մինը և նրա նախապատրաստումը 91
Ծծմայր զամբիկների կերակրումը և խնամքը . . 93
Մարուկների աճեցումը 96
Ձիերի տրենինգը և փոքրարկումը 105
Գլուխ 5. Ձիերի եռամակային պահպանումը 108
Գլուխ 6. Տնմային աշխատանքը ձիաբուծության մեջ . . . 112
Բուծման մեթոդները 113
Ազգակցական բուծում 119
Բուծում բաց գծերի 120
Ընտրություն և զույգերի ընտրություն ձիաբուծության մեջ . 120
Բանիտիրովկա 121
Զույգերի ընտրության հիմնական կանոնները . . . 123
Բուծարանային տոհմային գրքեր 123
Պետձիաբուծարաններ 124
Պետական տոհմաբուծարաններ 125
Պետախոռներ 125
Յուցահանդեսներ 126
Գլուխ 7. Ձիու աշխատանքը և բանող ճակատությունները . 128
Ձիու նորմալ քարշի ուժը 129
Ձիու ընթացքի արագությունը 131
Ձիու աշխատանքի հզորությունը 132
Ձիու դիմացկունությունը 133
Ձիու արտաքին մեխանիկական աշխատանքը . . . 134
Ձիու արտադրողականության որոշումը դաշտային աշխատանքների ժամանակ 136
Ինչպիսի՞ն պետք է լինի գյուղատնտեսական ձին . . . 137
Բանող ձիերի խնամքը 138
Բանող ձիերի կերակրումը 142
Ձիերի օգտագործումը տնտեսության մեջ . . . 151
Ձիերի աշխատանքի կազմակերպումը 155
Դաշտային աշխատանքներ 156
Ձիու գարնանային աշխատանքը 157
Ձիու ամառային աշխատանքը 162
Ձիու աշխատանքը աշնանը 165
Ձիու ձմեռային աշխատանքը 166
Ձիու աշխատանքը տրանսպորտում 168
Հղի և ծծմայր զամբիկների օգտագործումը . . . 170
Ձիու լծասարքը և ձիասայլերը 174
Ձիու լծասարքի ձևերը 181
Ձիասայլեր 184
Հավելվածներ 187

Խմբագիր՝ Ն. ՄԱԼԱԹՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Վ. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎՖ 12926։ Պատվեր 956։ Տիրաժ 2000։

Հանձնված է արտադրության 20/XII 1954 թ.։
Ստորագրված է տպագրության 11/X 1954 թ.։
Թուղթ 84×108 1/32. Հրատ. 8,6 մամ., տպ. 12,0 մամ.։
Գինը 2 ռ. 15 կ.։
Կազմը 1 ռ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Գլխհրատի I տպարան, Ալավերդյանի փող. № 65, Երևան, 1954 թ.։